Քաղաքացիական մասնակցությունը տեղական մակարդակում

ԵՐԵՎԱՆ 2018

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Սույն հրատարակությունը ներառում է չորս փաստաթուղթ՝ Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության ուղենիշերը, մասնակից պետությունների նախարարների կոմիտեի CM/Rec(2018)4 հանձնարարականը տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության մասին, «Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացմանը» գործիքակազմը, ինչպես նաև ԵԽ փորձագետներ Ա. Արտաշեսյանի և Դ. Մարգարյանի կողմից մշակված ուղեցույցը՝ գործիքակազմի կիրառման վերաբերյալ:

Ուղեցույցում ներկայացված կարծիքները հեղինակներինն են և կարող են չարտահայտել Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Հրատարակության ոչ մի մաս չի կարող թարգմանվել, վերարտադրվել կամ տարածվել որևէ տարբերակով՝ էլեկտրոնային (էլեկտրոնային սկավառակ, ինտերնետ և այլն), մեխանիկական (պատճենահանում, ձայնագրում և այլն), ինչպես նաև տվյալների պահպանման կամ փնտրման համակարգերի միջոցով՝ առանց Տեղական կառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնի գրավոր համաձայնության:

Եվրոպայի խորհուրդը միջազգային քաղաքական կազմակերպություն է, որը կոչված է պաշտպանելու մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը: Այն հիմնվել է 1949 թվականին, որին անդամակցում են 47 անդամ պետություն՝ շուրջ 820 միլիոն բնակչությամբ: Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամ պետությունների միասնականության՝ ընդհանուր ժառանգություն հանդիսացող սկզբունքներն ու իդեալները պահպանելու և իրականացնելու նպատակով: Եվրոպայի խորհրդի անդամ երկրները հանձն են առնում իրավական գործիքներ և համագործակցում ընդհանուր արժեքների և քաղաքական որոշումների հիման վրա: Եվրոպայի խորհրդի ամենաազդեցիկ գործիքները ներառում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, իսկ ժողովրդավարության բնագավառում՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, որոնք երկուսն էլ վավերացվել են բոլոր անդամ պետությունների կողմից:

Տեղական ինքնակառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնը հիմնվել է Եվրոպայի խորհրդի կողմից 2006 թվականին: Վերջինիս առաքելությունն է խրախուսել լավ կառավարումը՝ իրավական աջակցության, փորձագիտական խորհրդատվության և հանրային իշխանությունների կարողությունների հզորացման միջոցով: Կենտրոնն ունի կարողությունների հզորացման շուրջ 20 գործիք՝ հիմնված եվրոպական ստանդարտների և լավագույն փորձի վրա: Այս գործիքները հնարավորություն են տալիս զարգացնել և գնահատել տեղական իշխանությունների կարողությունները՝ լավ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքներին համապատասխան: Կենտրոնի կապը Ժողովրդավարության և կառավարման միջկառավարական հանձնաժողովի (CDDG) հետ, ենթադրում է համագործակցություն 47 անդամ երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որոնք ունեն կառավարման բարեփոխումների վերաբերյալ հարուստ գիտելիքներ և փորձառություն:

Քաղաքացիական մասնակցությունը անհատների, հասարակական կազմակերպությունների և առհասարակ քաղաքացիական հասարակության ներգրավումն է հանրային իշխանությունների կողմից որոշումների կայացման գործընթացներում: Արդյունավետ քաղաքացիական մասնակցությունը համապատասխան շահակիրների տեսակետների հավաքագրումն ու տարածումն է՝ հանրային կարիքներին համապատասխան, ինֆորմացված որոշումների կայացման գործընթաց ապահովելու նպատակով: Մասնակցությունը ենթադրում է, որ բոլոր ներգրավված կողմերը անկեղծորեն փոխանակեն կարծիքներ՝ ապահովելով որ քաղաքացիական հասարակության տեսակետները լսելի լինեն որոշում կայացնելու իրավասություն ունեցողներ պաշտոնատար անձանց համար:

Հայաստանում վերջին զարգացումները ցույց տվեցին քաղաքացիական մասնակցության աճ և մասնակցության արդյունավետ մեխանիզմների առկայության պահանջ: Եվրոպայի խորհուրդը և այլ միջազգային կազմակերպություններ, հովանավորներ աջակցում են Հայաստանի իշխանություններին և քաղաքացիական հասարակությանը որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության արդյունավետ մեխանիզմներ մշակելու և իրականացնելու հարցում:

Ինչպես նշված է Նախարարների Կոմիտեի (2018)4 հանձնարարականում, «… դեռևս կարիք կա տեղական իշխանությունների կողմից նորովի արձագանքելու քաղաքացիներին՝ որոշումների կայացման գործընթացի լեգիտիմությունը պահպանելու համար, հատկապես հաշվի առնելով, որ այսօր, հաճախ, քաղաքացիների վստահությունը ընտրովի իշխանությունների նկատմամբ նվազում է»:

Այս գրքույկը ներառում է Եվրոպայի խորհրդի «Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության ուղենիշեր»-ը և «Մասնակից պետություններին նախարարների կոմիտեի հանձնարարականը տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության մասին»: Այս փաստաթղթերը մշակվել են Եվրոպայի խորհրդի կողմից՝ անդամ պետությունների լավագույն փորձի հիման վրա՝ բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության դերակատարների ակտիվ ներգրավմամբ:

Ի լրումն Եվրոպայի խորհրդի կողմից եվրոպական ստանդարտների մշակման միջկառավարական աշխատանքի՝ Տեղական կառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնն օգնում է ապահովել լավ տեղական և տարածքային կառավարում և խրախուսում է կարողությունների հզորացումը համապատասխան գործիքների միջոցով: Այս գրքույկը ներառում է նաև «Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացմանը» գործիքակազմը և վերջինիս՝ Հայաստանում կիրառման ուղեցույցը: Գործիքակազմը հաջողությամբ փորձարկվել է 52 խոշորացված համայնքներում՝ «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում:

Եվրոպայի խորհուրդը ողջունում է վերջին տարիներին Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումներին աջակցելու հնարավորությունը և պատրաստակամություն հայտնում շարունակել համագործակցությունը այս կարևոր ժամանակաշրջանում՝ ըստ անհրաժեշտության:

Այս գրքույկում ներկայացված նյութերը նախատեսված են Հայաստանի բոլոր քաղաքացիների համար: Առաջարկում եմ կարդալ դրանք և օգտագործել օրենսդրական նախագծերի պատրաստման, արդյունավետ մասնակցության ռազմավարությունների մշակման կամ քաղաքական որոշումների կայացման գործընթացներում ներգրավվելիս:

Յուտտա Գուտսկոու

Լավ կառավարման բաժնի ղեկավար, Եվրոպայի խորհուրդ

Քաղաքացիական մասնակցությունը տեղական մակարդակում

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ 7

I. Նպատակ 9
II. Սահմանումներ 9
III. Պայմաններ և սկզբունքներ 10
IV. Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության հիմնական դրույթները 11
V. Քաղաքացիական մասնակցության տեսակները 13
VI. Իրականացման միջոցներ 15
Քաղաքական որոշումների կայացմանը քաղաքացիական մասնակցության ուղեցույցի հավելված 17

ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ CM/REC(2018)4 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 25

CM/Rec(2018)4 հանձնարարականի հավելված 29

Ա. Տեղական ժողովրդական մասնակցության քաղաքականության հիմնական սկզբունքները 29
Բ. Քաղաքացիների մասնակցությունը տեղական հասարակական կյանքում խրախուսելու և ամրապնդելու քայլեր և միջոցառումներ 31
I. Ընդհանուր քայլեր և միջոցառումներ 31
II. Տեղական ընտրություններին մասնակցելու և ներկայացուցչական ժողովրդավարության համակարգին վերաբերող քայլեր և միջոցներ 33
III. Քաղաքացիների մասնակցությունը տեղական մակարդակով որոշումների կայացման և տեղական գործերի կառավարման խթանմանը միտված քայլեր և միջոցներ 35
IV. Հատուկ քայլեր և միջոցներ խրախուսելու քաղաքացիների կատեգորիաներին, որոնք տարբեր պատճառներով ավելի մեծ դժվարություններ ունեն մասնակցելու 38

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ 41

Գործիքակազմ. Լավ կառավարման իրականացում..... 41

Տեղական ինքնակառավարման բարեփոխման փորձագիտական կենտրոն 43

Գորիցիայի միջազգային
հասարակագիտության ինստիտուտ (ISIG) 44
1. Ներածություն 45
1.1. Հենք 45
1.2. Գործիքակազմի կառուցվածքը 47
2. Քաղաքացիական մասնակցության շրջանակը 48
2.1. Հիմնավորում 48
2.2. Հիմնական հասկացություններ 49
2.3. Քաղաքացիական մասնակցություն 51
3. Գործիքը 57
3.1. Հիմնավորում 57
3.2. Գործառնական բաղադրիչներ 58
3.3. Համայնքի գնահատում 60
3.4. Շահակիրների նույնականացում և գնահատում 68
4. Ռազմավարությունները 86
4.1. Մասնակցության իրականացման
ռազմավարություններ 86
4.2. Մասնակցության բարելավման ռազմավարություններ 99
5. Փաստաթղթեր 104

ՈՒՂԵՑՈՒՅՑ. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ» ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՄԱՆ ... 106
Ներածություն 106
Գործիքի նկարագրություն 107
Գործիքակազմի կիրառման հաջորդական քայլերը 109
Քայլ 1. Գործիքակազմի կիրառման նախաձեռնումը 109
Քայլ 2. Աշխատանքային խմբի ձևավորում,
դերերի բաշխում 109
Քայլ 3. Համայնքում մասնակցության գործընթացների
նախնական տեղեկությունների հավաքագրում
և վերլուծություն 110
Քայլ 4. Շահակիրների քարտեզագրում 112
Քայլ 5. Գնահատող խմբի ձևավորում 114
Քայլ 6. Հարցաշարերի լրացում և գնահատում 115
Քայլ 7. Հարցաշարերի վերլուծություն 119
Ամփոփում 122

Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության ուղենիշեր

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2017 թվականի սեպտեմբերի27-ին Նախարարների տեղակալների 1295-րդ ժողովում)

Նախարարների կոմիտեն.

Գտնելով, որ քաղաքացիների մասնակցությունը ժողովրդավարության գաղափարի հիմնաքարն է,

Գտնելով, որ ներկայացուցչական ժողովրդավարությունը, հիմնված քաղաքացիների՝ ողջամիտ ժամկետներով իրենց ներկայացուցիչներին ազատ ընտրելու իրավունքի վրա, անդամ պետությունների ընդհանուր ժառանգության մի մասն է կազմում,

Գտնելով, որ ուղղակի ժողովրդավարությունը, հիմնված ընտրություններում մասնակցելու իրավունքի, համաժողովրդական նախաձեռնությունների և հանրաքվեների պահանջներ նախաձեռնելու և դրանք ստորագրելու իրավունքի վրա, որոշ անդամ պետությունների պատմական մշակույթի մասն է կազմում,

Գտնելով, որ մասնակցային ժողովրդավարությունը, հիմնված հանրային կառավարման մարմինների իրավասությունների և պարտականությունների իրականացման կանխորոշման կամ դրանց վրա ազդեցություն գործելու իրավունքի վրա, նպաստում է ներկայացուցչական և ուղղակի ժողովրդավարությանը, և որ քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության իրավունքը պետք է վերապահվի բոլոր անհատներին, հասարակական կազմակերպություններին (ՀԿ) և քաղաքացիական լայն հասարակությանը,

Ընդգծելով, որ, վերջնական առումով, որոշումներ կայացնելու համար պատասխանատու և հաշվետու են հանրային կառավարման մարմինները, որոնք ժողովրդավարական լեգիտիմություն ունեն նման որոշումներ կայացնելու համար,

Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի փաստաթղթերը, որոնք նպաստում են քաղաքացիական մասնակցության միջավայրի ստեղծմանը, ինչպիսիք են օրինակ՝

- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (ETS թիվ 5) և դրա լրացուցիչ

արձանագրությունները,

- «Պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS թիվ 205),
- «Սոցիալ-քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց և տղամարդկանց հավասարակշիռ մասնակցության մասին» անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի Rec(2003)3 առաջարկությունը
- «Եվրոպայում հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակի մասին» անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի CM/Rec(2007)14 առաջարկությունը,
- Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության լավագույն գործելակերպերի 2009 թվականի կանոնակարգը,

Հաշվի առնելով, նաև այն փաստաթղթերը, որոնցով սահմանվում է մասնակցության իրավունքը.

- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ «Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի մասին» լրացուցիչ արձանագրությունը (CETS թիվ 207),
- «Տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության մասին» անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի Rec(2001)19 առաջարկությունը,

Տեղյակ լինելով այն մասին, որ անհրաժեշտ է մեծացնել վստահությունը և արժանահավատությունը մեր ժողովրդավարական հաստատությունների նկատմամբ, և վստահ լինելով, որ որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության հնարավորությունների ընդլայնումը այդ նպատակին հասնելու եղանակներից մեկն է,

Խրախուսելով անդամ պետություններին դասեր քաղել մասնակցության միջոցով ձեռք բերված կարծիքներից, տեղեկություններից և փորձագիտությունից և զարգացնել արդյունավետ մասնակցային մշակույթ՝ հենվելով մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա,

Ընդունում է սույն ուղենիշերը և կոչ է անում անդամ պետություններին առավելագույնս կիրառել դրանք և ապահովել դրանց տարածումը, մասնավորապես՝ այն մարմինների շրջանում, որոնք պատասխանատու են, կամ որևէ կերպ ներգրավված են քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության գործում:

I. Նպատակ

1. Սույն ուղենիշեր նպատակ են հետապնդում ամրապնդել և օժանդակել անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության մասնակցությանը քաղաքական որոշումների ընդունման գործընթացում:

II. Սահմանումներ

2. Սույն ուղենիշերի նպատակով՝ կիրառվում են հետևյալ սահմանումները.
   ա. *«քաղաքացիական մասնակցություն»*՝ անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության ներգրավումը հանրային կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների կայացման գործընթացում: Քաղաքական որոշումների գործընթացում քաղաքացիական մասնակցությունը տարբերվում է քաղաքական կուսակցություններում անմիջական մասնակցության առնչությամբ քաղաքական ակտիվությունից և բիզնես շահերի առնչությամբ լոբբինգից,
   բ. *«որոշումների կայացման գործընթաց»*՝ քաղաքական փաստաթղթի, ռազմավարության, օրենքի կամ կանոնակարգի մշակում, ընդունում, իրականացում, գնահատում և վերաձևակերպում ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակում, կամ ցանկացած այլ գործընթաց, որի ժամանակ հանրային կառավարման մարմնի կողմից իր իրավասության շրջանակում ընդունվում է հանրության, կամ հանրության մի հատվածի վրա ազդեցություն ունեցող որոշում,
   գ. *«հասարակական կազմակերպություններ»* (ՀԿ-ներ)՝ կամավոր հիմունքով ստեղծված ինքնակառավարվող մարմիններ կամ կազմակերպություններ, որոնք ստեղծվել են հետապնդելու իրենց հիմնադիրների կամ անդամների կողմից սահմանված, հիմնականում՝ շահույթ չհետապնդող նպատակներ, ինչպես սահմանված է «Եվրոպայում հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակի մասին» անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի CM/Rec(2007)14 հանձնարարականում: Դրանք կարող են ընդգրկել, օրինակ՝ կամավոր հիմունքով ստեղծված խմբերը, շահույթ չհետապնդող կազմակերպությունները, միավորումները, հիմնադրամները, բարեգործական կազմակերպությունները կամ աշխարհագրական կամ շահերի վրա հիմնված համայնքները և շահերի պաշտպանության խմբերը,
   դ. *«քաղաքացիական լայն հասարակություն»*՝ անհատների և կազմակերպված, պակաս կազմակերպված կամ ոչ ֆորմալ խմբերի համակցություն, որոնց միջոցով նման անձինք նպաստում են

հասարակության զարգացմանը կամ արտահայտում տեսակետներ և կարծիքներ, այդ թվում՝ մարդու իրավունքների խախտումների, կոռուպցիայի և այլ իրավախախտումների հարցերի շուրջ, կամ կատարում են քննադատական դատողություններ: Նման կազմակերպված կամ պակաս կազմակերպված խմբեր կարող են հանդիսանալ մասնագիտական և տեղական կազմակերպությունները, համալսարանները և հետազոտական կենտրոնները, կրոնական և ոչ կրոնական կազմակերպությունները և մարդու իրավունքների պաշտպանները,

ե. *«հանրային կառավարման մարմին»*՝ ցանկացած գործադիր, օրենսդիր կամ վարչական մարմին, որը գործում է ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակում, այդ թվում՝ անձինք, որոնք իրականացում են գործադիր լիազորություններ կամ վարչական գործառույթներ:

III. Պայմաններ և սկզբունքներ

Քաղաքացիական մասնակցությունը խրախուսող պայմաններ

3. Մասնակցությունը պահանջում է, որ ներգրավված բոլոր անձինք ազնվորեն և անկեղծորեն տեսակետներ փոխանակեն, որպեսզի ապահովվի քաղաքացիական հասարակության դիրքորոշումների արդյունավետորեն հաշվի առնելը որոշում կայացնելու լիազորություն ունեցող հանրային կառավարման մարմինների կողմից: Ուստի, արդյունավետ քաղաքացիական մասնակցության պայմանները հետևյալն են.

ա. մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանք, իրավունքի գերակայություն, հիմնարար ժողովրդավարական սկզբունքների պահպանում, քաղաքական հանձնառություն, հստակ ընթացակարգեր, երկխոսության ընդհանուր տարածք և կենսական, բազմախոհ և կայուն քաղաքացիական հասարակության համար ընդհանուր առմամբ բարենպաստ պայմաններ,

բ. անդամ պետությունների կողմից բարենպաստ պայմանների ստեղծում և պահպանում, որի մաս են կազմում քաղաքական շրջանակը, իրավական դաշտը (հարկ եղած դեպքում) և գործնական միջավայրը, որոնք պետք է երաշխավորեն անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության՝ միավորումներ ստեղծելու ազատության, հավաքներ կազմակերպելու ազատության, արտահայտվելու ազատության և տեղեկատվության ազատության արդյունավետ իրավունքները:

գ. բազմախոհ ժողովրդավարության մեջ քաղաքացիական հասարակության դերակատարման, շահերի պաշտպանության ու պետական գործերի մշտադիտարկման գործառույթների և բազմաբնույթ ու կեն-

սունակ հասարակություն կառուցելու գործում ներդրում կատարելու ճանաչում, պաշտպանություն և աջակցություն:

Սկզբունքներ

4. Քաղաքացիական մասնակցությունը պետք է խրախուսվի և օժանդակվի հետևյալ սկզբունքներով, որոնք վերաբերում են քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության մեջ ներգրավված բոլոր դերակատարներին.

ա. բոլոր դերակատարների միջև փոխադարձ հարգանք՝ որպես ազնիվ փոխհարաբերության և փոխադարձ վստահության հիմք,

բ. հարգանք ՀԿ-ների անկախության նկատմամբ՝ անկախ այն բանից, թե նրանց կարծիքները համընկնում են հանրային կառավարման մարմինների կարծիքի հետ, թե ոչ,

գ. հանրային կառավարման մարմինների դիրքորոշման նկատմամբ հարգանք, որոնք պատասխանատու և հաշվետու են որոշումների կայացման համար,

դ. հրապարակայնություն, թափանցիկություն և հաշվետվողականություն,

ե. արձագանքման կարողություն՝ բոլոր դերակատարների կողմից տրամադրվող համապատասխան կարծիքներով,

զ. խտրականության բացառում և ներառականություն, որպեսզի բոլորի ձայնը, այդ թվում՝ պակաս արտոնյալ և առավել խոցելի խմբերի, լսելի լինի և հաշվի առնվի,

է. գենդերային հավասարություն և բոլոր խմբերի հավասար մասնակցություն, այդ թվում՝ այն անձանց, որոնք ունեն հատուկ շահեր և կարիքներ, ինչպիսիք են՝ երիտասարդները, ծերերը, հաշմանդամություն ունեցող անձինք կամ փոքրամասնությունները,

ը. հասանելիություն՝ հասկանալի լեզվի և մասնակցությունն ապահովող համապատասխան միջոցների միջոցով՝ առցանց կամ անցանց, և ցանկացած սարքի միջոցով:

IV. Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության հիմնական դրույթները

5. Քաղաքացիական մասնակցությունը պետք է նպատակ հետապնդի տրամադրել, հավաքել և փոխանցել անհատների տեսակետները՝ անմիջականորեն կամ ՀԿ-ների և/կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջոցով, որի ժամանակ փոխանակվում են նշանակալի տեղեկություններ և տեսակետներ, որոնք հիմք են հանդիսանում որոշումների կայացման գործընթացի համար այնպես, որ հասարակության կարիքներին տրվի պատշաճ արձագանք:

6. Քաղաքացիական մասնակցությունը պետք է երաշխավորվի հա-

մապատասխան, համակարգված և թափանցիկ միջոցներով, այդ թվում, հարկ եղած դեպքում՝ իրավական կամ կարգավորիչ մեխանիզմներով, որոնք կարող են ներառել դրույթներ դատարան դիմելու կամ փոխհատուցման պահանջներին ընթացք տալու մասին այն դեպքերում, երբ իրավական նորմերը խախտվել են: Մասնակցության ցանկացած սահմանափակում կամ պայման պետք է հստակ սահմանվի իրավական դաշտում և պետք է համապատասխանի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

7. Քաղաքացիական մասնակցության համար պետք է բաց լինեն համապատասխան լիազորություններ ունեցող հանրային կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերը:
8. Տեղեկատվությունը պետք է լինի հեշտ հասանելի, թափանցիկ և մատչելի հասարակության համար, բացառությամբ՝ օրենքով հստակ նախատեսված հիմքերի կամ սահմանափակված տվյալների պաշտպանության նկատառումներով՝ Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիաներին և այլ միջազգային պարտավորություններին համահունչ:
9. Համապատասխան տեղեկությունները պետք է տրամադրվեն ժամանակին, ինչը հնարավորություն կտա կատարել նշանակալի ներդրում այն ժամանակ, երբ դեռ հնարավոր է որոշումները փոխել:
10. Հանրային կառավարման մարմինները պետք է ծրագրեն և կառավարեն քաղաքացիական մասնակցությունը և հստակ սահմանեն դրա նպատակները, դերակատարներին, գործընթացները և տեսանելի ժամանակացույցը, ինչպես նաև կիրառվող մեթոդները:
11. Հանրային կառավարման մարմինները պետք է տրամադրեն արդիական, համալիր տեղեկատվություն որոշումների կայացման գործընթացի և մասնակցության ընթացակարգերի վերաբերյալ:
12. Հանրային կառավարման մարմինները պետք է խուսափեն անհարկի խնդիրներ ստեղծելուց անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության համար քաղաքացիական մասնակցության ընթացքում և պետք է մասնակցությանն օժանդակելու համար համապատասխան գործողություններ ձեռնարկեն:
13. Քաղաքացիական մասնակցության ընթացքում հանրային կառավարման մարմինների կողմից անհատներին, ՀԿ-ներին կամ քաղաքացիական լայն հասարակությանը օժանդակություն տրամադրելիս պետք է խուսափել այնպիսի մեթոդներից, որոնք կարող են որևէ կերպ ներազդել մասնակցության վերջնարդյունքի վրա:
14. Հարկ եղած դեպքում՝ պետք է ստեղծվեն համակարգող մարմիններ կամ զարգացվեն գոյություն ունեցողները՝ քաղաքացիական մաս-

նակցության գործընթացներ նախաձեռնելու և կառավարելու նպատակով՝ պայմանով, որ այդ մարմինների գործառույթները հստակ սահմանվեն, ընդգծվեն և ստանան համապատասխան օժանդակություն:

15. Հանրային կառավարման մարմինները և ՀԿ-ները կարող են կնքել համագործակցության շրջանակային համաձայնագրեր՝ քաղաքացիական մասնակցությանը աջակցելու համար:
16. Տրամադրված ժամկետները, բացառությամբ՝ բացառիկ և հստակ սահմանված դեպքերի, պետք է բավարար հնարավորություն տան պատշաճ պատրաստվելու և կառուցողական դիտարկումներ կատարելու համար: Նմանապես, սահմանափակ ընթացակարգերի և/կամ սահմանափակ թվով դերակատարների ներգրավմամբ ընթացակարգերի կիրառումը պետք է կատարվի միայն բացառիկ դեպքերում և պետք է հիմնավորվի:
17. Քաղաքացիական մասնակցության գործողության շրջանակը և մեթոդը պետք է համապատասխանեն խնդրո առարկային: Հանրային կառավարման մարմինները պետք է ստեղծեն առավելագույն ներդրում կատարելու հնարավորություն, այդ թվում՝ մարգինալ, ոչ արտոնյալ և խոցելի անձանցից կազմված խմբերի կողմից:
18. Հանրային կառավարման մարմինները չպետք է վերջնական որոշում ընդունեն, քանի դեռ չի ավարտվել իրենց կողմից նախաձեռնած քաղաքացիական մասնակցության գործընթացը, բացառությամբ՝ արտակարգ հանգամանքների առկայության և դրանց հստակ հիմնավորմամբ:

V. Քաղաքացիական մասնակցության տեսակները

19. Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցությունը կարող է իրականացվել տարբեր եղանակներով, այդ թվում՝ տեղեկատվության տրամադրում, խորհրդատվություն, երկխոսություն և ակտիվ ներգրավվածություն գործընթացում[1]:

Տեղեկատվության տրամադրում

20. Որոշումների կայացման բոլոր փուլերում համապատասխան բոլոր տեղեկությունները պետք է ներկայացվեն պարզ և հեշտ ըմբռնելի լեզվով, ինչպես նաև պատշաճ և հասանելի ձևաչափով՝ առանց անհարկի վարչական խոչընդոտների և, սկզբունքորեն, անվճար՝ տվյալների հասանելիության սկզբունքներին համապատասխան[2]:

1 Ինչպես բնորոշված է որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության լավագույն գործելակերպերի 2009 թվականի կանոնակարգում:

2 Տվյալները պետք է լինեն լիարժեք, առաջնային, արդիական, հասանելի, մեքենայով վերամշակվող, ոչ խտրական, ոչ գույքային, լիցենզիա չունեցող, իսկ համապատասխանությունը պետք է լինի վերանայելի

21. Հանրային կառավարման մարմինները պետք է ապահովեն կարևոր փաստաթղթերի և տեղեկությունների առավելագույն հասանելիություն՝ առցանց և արտացանց՝ չսահմանափակելով նման տեղեկատվության վերլուծության և կրկնակի օգտագործման հնարավորությունները:

Խորհրդատվություն

22. Խորհրդատվության միջոցով հանրային կառավարման մարմինները կարող են տեսակետներ հավաքել անհատներից, ՀԿ-ներից և քաղաքացիական լայն հասարակությունից կոնկրետ քաղաքականության կամ թեմայի վերաբերյալ՝ որպես պաշտոնական ընթացակարգի մաս:
23. Խորհրդատվությունները կարող են իրականացվել տարբեր եղանակներով և գործիքներով, ինչպես օրինակ՝ հանդիպումներ, հանրային լսումներ, ֆոկուս խմբերի քննարկումներ, հարցումներ, հարցաշարեր և թվային այլ գործիքներ:
24. Հանրային կառավարման մարմինները պետք է տրամադրեն հանրորեն հասանելի գնահատական խորհրդատվությունների արդյունքների վերաբերյալ: Հատկապես՝ պետք է հիմնավորվեն այն որոշումները, որոնք ընդունվել են նման խորհրդատվությունների արդյունքում:

Երկխոսություն

25. Երկխոսությունը համակարգված, երկարատև և արդյունքահեն գործընթաց է, որը հենվում է հանրային կառավարման մարմինների, անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության միջև տեսակետների փոխանակման փոխադարձ շահի վրա:
26. Հանրային կառավարման մարմինները, ՀԿ-ները և քաղաքացիական լայն հասարակությունը կարող են որոշել ստեղծել տարբեր հարթակներ՝ որպես երկխոսության և մասնակցության կայուն տարածքներ: Նման հարթակ կարող են հանդիսանալ կանոնավոր հանրային լսումները, հանրային ֆորումները, խորհրդատվական խորհուրդները կամ նմանատիպ կառույցներ:

Ակտիվ ներգրավվածություն

27. Ակտիվ ներգրավվածություն նշանակում է անհատներին, ՀԿ-ներին և քաղաքացիական լայն հասարակությանը որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության հնարավորությունների տրամադրում հանրային կառավարման մարմինների կողմից, որոնք ավելին են, քան զուտ տեղեկությունների տրամադրումը, խորհրդակցությունը կամ երկխոսությունը: Այդպիսին կարող են լինել աշխատանքային խմբերը կամ կոմիտեները, որոնք համատեղ աշխատում են փաստաթղթերի, ինչպես նաև քաղաքականություն-

ների և օրենքների մշակման վրա, որոնց վերաբերյալ վերջնական որոշում պետք է կայացնի համապատասխան հանրային կառավարման մարմինը:

28. Համատեղ աշխատանքային խմբերի կամ կոմիտեների առկայության դեպքում հանրային կառավարման մարմինները պետք է սահմանեն թափանցիկ չափանիշներ և գործընթացներ անհատների, ՀԿ-ների և քաղաքացիական լայն հասարակության ներկայացվածության համար:

29. Որոշումների կայացման տարբեր փուլերում կարող են ստեղծվել հանրային կառավարման մարմիններից, ՀԿ-ներից և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կազմված տարաբնույթ գործընկերություններ: Կարող են ստեղծվել գործընկերություններ որոշումների իրականացման առնչությամբ:

VI. Իրականացման միջոցներ

30. Քաղաքացիական մասնակցության հնարավորություն ստեղծելու համար անդամ պետությունները պետք է առավելագույնս կիրառեն սույն ուղենիշերը և ապահովեն դրանց տարածումը՝ հնարավորություն տալով հանրային կառավարման մարմիններին իրազեկության բարձրացման միջոցառումներ ձեռնարկել և, իրենց հերթին, լայնորեն տարածել ուղենիշերը, անհրաժեշտության դեպքում՝ իրենց պաշտոնական լեզվով (լեզուներով): Դրանց շարքին են դասվում հեշտ կիրառելի առցանց և անցանց ուղեցույցները, բուկլետները և այլ միջոցներ, հանրային ծառայողների համար վերապատրաստումները և օժանդակությունը քաղաքացիական հասարակության անդամների համար նախատեսված վերապատրաստման մեխանիզմներին:

31. Հարկ եղած դեպքում՝ անդամ պետությունները պետք է ընդունեն կանոններ և մեխանիզմներ, կամ իրենց կանոններում կատարեն համապատասխան փոփոխություններ՝ հնարավորություն տալով հանրային կառավարման մարմիններին կիրառել սույն ուղենիշերը:

32. Անդամ պետությունները կարող են կոչ անել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝
    - հաղորդելու և տարածելու մասնակցության հնարավորությունների մասին տեղեկություններ և նպաստելու քաղաքացիական հասարակության լայն հատվածների կողմից ներդրում կատարելու հնարավորությանը,
    - նպաստելու քաղաքացիական մասնակցության վերաբերյալ օրենքների և կանոնակարգերի իրականացման գնահատմանը:

33. Սույն ուղենիշերի գործնական կիրառության հարցում անդամ պետությունների փորձառությունը գնահատելու համար Նախարարների կոմիտեն կարող է պահանջել Ժողովրդավարության և կառավար-

ման հարցերով եվրոպական կոմիտեից (ԺԿԵԿ), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի միջազգային հասարակական կազմակերպությունների համաժողովից (ՄՀԿՀ) հետևել ուղենիշերի իրականացման ընթացքին և գնահատական ներկայացնել Նախարարների կոմիտե:

34. Նախարարների կոմիտեն կարող է փոխանցել այս ուղենիշերը Խորհրդարանական վեհաժողովին, Մարդու իրավունքների հանձնակատարին, Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսին, Եվրոպայի խորհրդի ՄՀԿ համաժողովին և «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովին («Վենետիկի հանձնաժողով») և կոչ անել վերջիններիս տարածել և առավելագույնս կիրառել սույն ուղենիշները իրենց աշխատանքի ընթացքում:

Քաղաքական որոշումների կայացմանը քաղաքացիական մասնակցության ուղեցույցի ՀԱՎԵԼՎԱԾ

Բնագիր փաստաթղթեր

Եվրոպայի Խորհուրդ

Գլխավոր քարտուղար

Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության մասին Գլխավոր քարտուղարի տարեկան զեկույց. Պոպուլիզմ՝ որքա՞ն ուժեղ են Եվրոպայի զսպումները և հակակշիռները:
SG(2017)1

Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության մասին Գլխավոր քարտուղարի տարեկան զեկույց. Անվտանգության հրամայական Եվրոպայի համար:
SG(2016)1

Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության մասին Գլխավոր քարտուղարի տարեկան զեկույց. Եվրոպայում ժողովրդավարական անվտանգության համար համատեղ պատասխանատվություն:
SG(2015)1

Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության մասին Գլխավոր քարտուղարի տարեկան զեկույց. Եվրոպայի Խորհուրդի Գլխավոր քարտուղարի զեկույց:
SG(2014)1

Եվրոպայի Խորհուրդի կոնվենցիաները

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա
ETS No. 5

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
ETS No. 122

Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրություն
CETS No. 207

Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների իրավաբանական անձի կարգավիճակի ճանաչման եվրոպական կոնվենցիա
ETS No. 124

Տեղական մակարդակում հանրային կյանքում օտարերկրացիների մասնակցության եվրոպական կոնվենցիա
ETS No. 144

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա
ETS No. 148
Ազգային փոքրամասնությունների պաշտպանության եվրոպական շրջանակային կոնվենցիա
ETS No. 157

Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված)
ETS No. 163

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության Եվրոպայի Խորհուրդի կոնվենցիա
CETS No 205

Նախարարների կոմիտե

Հանձնարարականներ

Անբարենպաստ շրջանների երիտասարդներին սոցիալական իրավունքների մատչելիության վերաբերյալ CM/Rec(2015)3 հանձնարարական
CM/Rec(2015)3

Ազդարարների պաշտպանության վերաբերյալ CM/Rec(2014)7 հանձնարարական
CM/Rec(2014)7

Համացանցից օգտվողների համար մարդու իրավունքների ուղեցույցի վերաբերյալ CM/Rec(2014)6 հանձնարարական
CM/Rec(2014)6

Մինչև 18 տարեկան երեխաների և երիտասարդների մասնակցության վերաբերյալ CM/Rec(2012)2 հանձնարարական
CM/Rec(2012)2

Քաղաքական և հանրային կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության վերաբերյալ CM/Rec(2011)14 հանձնարարական
CM/Rec(2011)14

Հանուն ժողովրդավարական քաղաքացիության կրթության և մարդու իրավունքների կրթության Եվրոպայի Խորհուրդի խարտիայի վերաբերյալ CM/Rec(2010)7 հանձնարարական
CM/Rec(2010)7

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիման վրա խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ CM/Rec(2010)5 հանձնարարական
CM/Rec(2010)5

Տեղական և տարածաշրջանային մակարդակում մասնակցության և մասնակցության քաղաքականությունների գնահատման, աուդիտի և մշտադիտարկման վերաբերյալ CM/Rec(2009)2 հանձնարարական
CM/Rec(2009)2

Էլեկտրոնային ժողովդրավարության («էլ-ժողովրդավարություն») վերաբերյալ CM/Rec(2009)1 հանձնարարական
CM/Rec(2009)1

Եվրոպայում հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ CM/Rec(2007)14 հանձնարարական
CM/Rec(2007)14

Լրատվամիջոցների բազմակարծության և լրատվամիջոցների բովանդակության բազմազանության վերաբերյալ CM/Rec(2007)2 հանձնարարական
CM/Rec(2007)2

Երիտասարդների քաղաքացիության և հանրային կյանքում մասնակցության վերաբերյալ Rec(2006)14 հանձնարարական
Rec(2006)14

Երիտասարդական քաղաքականության մշակման գործում երիտասարդական խորհուրդների դերի վերաբերյալ Rec(2006)1 հանձնարարական
Rec(2006)1

Էլեկտրոնային կառավարման («էլ-կառավարում») վերաբերյալ Rec(2004)15 հանձնարարական
Rec(2004)15

Տեղական և տարածաշրջանային կյանքին երիտասարդների մասնակցության վերաբերյալ Rec(2004)13 հանձնարարական
Rec(2004)13

Քաղաքական և պետական որոշումների կայացմանը կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության վերաբերյալ Rec(2003)3 հանձնարարական
Rec(2003)3

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ Rec(2002)2 հանձնարարական
Rec(2002)2

Տեղական հանրային կյանքին քաղաքացիների մասնակցության վերաբերյալ Rec(2001)19 հանձնարարական
Rec(2001)19

Գենդերային հարցերի համալիր ընդգրկման վերաբերյալ թիվ R (98) 14 հանձնարարական
Rec(98)14

Բանաձևեր

Եվրոպայի Խորհրդում միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցային կարգավիճակի վերաբերյալ CM/Res(2016)3 բանաձև
CM/Res(2016)3

Ուղեցույցեր

Մշակութային բազմազանություն ունեցող հասարակություններում մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման վերաբերյալ Նախարարների կոմիտեի ուղղոցույցերն անդամ պետություններին
CM/Del/Dec(2016)1249/4.6-app8

Հռչակագրեր

Որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական մասնակցության պատշաճ պրակտիկայի կանոնագրքի մասին հռչակագիր
Decl(21/10/2009)

Սոցիալական համերաշխությունը և միջմշակութային երկխուսությունը խրախուսելու հարցում համայնքային լրատվամիջոցների դերի մասին հռչակագիր
Decl(11/02/2009)

Հռչակագիր. «Իրականություն դարձնել գենդարային հավասարությունը»
CM(2009)68-final

Մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանվածությունը բարելավելու և նրանց գործունեությունը խրախուսելու Եվրոպայի Խորհուրդի գործողությունների մասին հռչակագիր
Decl(06/02/2008)

Տեղական և տարածաշրջանային կառավարման համար պատասխանատու եվրոպական նախարարների 15–րդ համաժողով (Վալենսիա, 2007թ հոկտեմբերի 15-16)

Վալենսիայի հռչակագիր. «Տեղական մակարդակում նորարարության և լավ կառավարման ռազմավարություն» (2007թ հոկտեմբերի 15-16)
CM(2008)14-add

Տարածական պլանավորման համար պատասխանատու եվրոպական նախարարների 16–րդ համաժողով (CEMAT) (Նափֆլիո, Հունաստան, 2014թ հունիսի 17)

Նափֆլոնի հռչակագիր. «Խրախուսել տարածքային ժողովրդավարությունը տարածական պլանավորման մեջ»
CM(2014)91

Խորհրդարանական վեհաժողով

Բանաձևեր

Բանաձև 2096 (2016) «Ինչպե՞ս կանխարգելել Եվրոպայում ՀԿ-ների գործունեության անհարկի սահմանափակումները»
Resolution 2096 (2016)

Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում մարդու իրավունքի պաշտպանների պաշտպանությունը և դերն հզորացնելու մասին 2095 (2016) բանաձև
Resolution 2095 (2016)

«Ժողովրդավարությունը Եվրոպայում՝ ճգնաժամ և հեռանկարներ» բանաձև
Resolution 1746 (2010)

«Ազդարարների» պաշտպանության մասին բանաձև
Resolution 1729 (2010)

Վեհաժողովի և ՄՀԿ-ների համաժողովի միջև համագործակցության մասին 1589 (2017) բանաձև
Resolution 1589 (2007)

Հանձնարարականներ

Հանձնարարական 2086 (2016) «Ինչպե՞ս կանխարգելել Եվրոպայում ՀԿ-ների գործունեության անհարկի սահմանափակումները»
Recommendation 2086 (2016)

Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում մարդու իրավունքի պաշտպանների պաշտպանությունը և դերն հզորացնելու մասին 2085 (2016) հանձնարարական
Recommendation 2085 (2016)

«Ժողովրդավարության Եվրոպայում՝ ճգնաժամ և հեռանկարներ»-ի մասին 1928 (2010) հանձնարարական
Recommendation 1928 (2010)

Երեխաների մասնակցությունը՝ նրանց վրա ազդեցություն ունեցող որոշումների կայացմանը խրախուսելու վերաբերյալ 1864 (2009) հանձնարարական
Recommendation 1864 (2009)E

Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրես

Կոնգրեսի եվրոպական քաղաքային II խարտիա՝ նոր քաղաքային կյանքի մանիֆեստ (2008)
European Urban Charter II

Տեղական և տարածաշրջանային կյանքին երիտասարդների մասնակցության մասին վերանայված եվրոպական խարտիա
(21 May 2003)

Բանաձևեր

Քաղաքացիական հասարակության հետ գործընկերություններ ձևավորելու միջոցով ակտիվ քաղաքացիությունը խրախուսելու մասին 385 (2015) բանաձև
Resolution 385 (2015)

ՄՀԿ-ների համաժողով

ՀԿ-ների մասին օրենսդրության փորձագիտաան խորհուրդ՝ չափանիշների, մեխանիզմների և նախադեպային իրավունքի 2013-2015 թվականների զարգացումների ուսումնասիրություն
OING Conf/Exp (2015) 2

ՀԿ-ների մասին օրենսդրության փորձագիտաան խորհուրդ՝ հասարակական կազմակերպությունների քաղաքական գործունեության կարգավորում, 2015
OING Conf/Exp (2015) 3

Որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական մասնակցության պատշաճ պրակտիկայի կանոնագիրք
CONF/PLE(2009)CODE1

«Ժողովրդավարություն՝ օրենքի միջոցով»
եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով)

Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավուքների գրասենյակի «Հավաքների ազատության մասին համատեղ ուղեցույցեր»
CDL-AD(2014)046E

Ժողովրդավարության և կառավարման հարցերով եվրոպական կոմիտեի (ԺԿԵԿ, անգլ.՝ CDDG) – ԺԿԵԿ-ի և ՄՀԿ-ների համաժողովի համատեղ աշխատանքային խումբ

Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին՝ չափանիշների և պրակտիկայի ընդհանուր պատկերը Եվրոպայի Խորհուրդի անդամ պետություններում (2016թ մայիս)
[ECNL-COE]

Միջազգային այլ կազմակերպությունների փաստաթղթեր

Եվրոպական Միություն

Եվրոպական Միության մասին պայմանագրի և Եվրոպական համայնքի ստեղծման մասին պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին Լիսաբոնի պայմանագիր
(2007/C306/01)

Հանձնաժողովի հաղորդագրություն. «Դեպի խորհրդակցության և երկխոսության ամրապնդված մշակույթ՝ շահագրգիռ կողմերի հետ Հանձնաժողովի խորհրդակցության ընդհանուր սկզբունքներ և նվազագույն չափանիշներ»
COM/2002/0704
Եվրոպական համայնքների հանձնաժողով COM(2001) 428, Եվրոպական կառավարման հայեցակարգ
COM/2001/428

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)

Խաղաղ հավաքների և միավորումների ազատություններին նվիրված Մարդկային ուղղության 2015թ լրացուցիչ հանդիպման շրջանակներում կազմակերպված քաղաքացիական հասարակության ֆորումի մասնակիցների առաջարկությունները հանրային որոշումների կայացման գործընթացներին միավորումների մասնակցությունը խրախուսելու վերաբերյալ, 2015թ ապրիլ
HDIM.NGO/0033/15

Միավորված ազգերի կազմակերպություն

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ստորագրվել է 1966թ դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 1976թ մարտի 23-ին՝ 49-րդ հոդվածի համաձայն
CCPR 16/12/1966

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա և կամընտիր արձանագրություն
Convention

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ

Մարդու բոլոր իրավունքների, քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և մշակութային իրավունքների, այդ թվում՝ զարգացման իրավունքի խրախուսման և պաշտպանության մասին բանաձև. «Հավասար մասնակցություն քաղաքական և հասարակական գործերին»
A/HRC/33/L.28

«Պատշաճ պրակտիկայից և քաղաք դասերից բխող գործնական հանձնարարականներ քաղաքացիական հասարակության համար անվտանգ և նպաստավոր միջավայր ստեղծելու և պահպանելու վերաբերյալ», 2016թ ապրիլի 11
A/HRC/32/20

«Հավասար մասնակցություն քաղաքական և հասարակական գործերին». 2015թ հոկտեմբերի 12-ին Մարդու իրավունքների խորհուրդի ընդունած բանաձև
A/HRC/RES/30/9

«Քաղաքացիական հասարակության տարածք». 2014թ հոկտեմբերի 3-ին Մարդու իրավունքների խորհուրդի ընդունած բանաձև
A/HRC/RES/27/31

«Քաղաքացիական հասարակության տարածք՝ օրենսդրությամբ և գործնականում ստեղծել և պահպանել անվտանգ և նպաստավոր միջավայր», 2013թ հոկտեմբերի 9-ին Մարդու իրավունքների խորհուրդի ընդունած բանաձև
A/HRC/RES/24/21

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողով

Թիվ 25 ընդհանուր մեկնաբանություն՝ հանրային գործերին մասնակցելու իրավունքները, քվեարկության իրավունքները և հանրային ծառայությունների հավասար մատչելիության իրավունքը (հոդ. 25), 1996թ օգոստոսի 27
CCPR/C/21/Rev.1/Add.7

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով(UNECE)՝ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա, («Օրհուսի կոնվենցիա»), 1998թ.
Aarhus Convention

[1] Սահմանված է Որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական մասնակցության պատշաճ պրակտիկայի կանոնագրքում:

[2] Տվյալները պետք է լինեն ամբողջական, առաջնային, ժամանակին, հասանելի, համակարգչային մշակման ենթակա, ոչ խտրական, մտավոր սեփականության իրավունքներով և արտոնագրով չպաշտպանված, բողոքարկելի:

Մասնակից պետությունների նախարարների կոմիտեի CM/Rec(2018)4 հանձնարարականը տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության մասին

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2018 թվականի մարտի 21-ին Նախարարների տեղակալների 1311-րդ հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն, ղեկավարվելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15.b հոդվածով,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների ընդհանուր ժառանգությունը հանդիսացող գաղափարների և սկզբունքների պահպանման և իրագործման համար ավելի մեծ միասնությանը և խթանել նրանց տնտեսական և սոցիալական առաջընթացը,

Հաշվի առնելով, որ քաղաքացիների մասնակցությունը հանդիսանում է ժողովրդավարության անկյունաքարը և որ քաղաքացիները, որոնք հավատարիմ են ժողովրդավարական արժեքներին, գիտակցում են իրենց քաղաքացիական պարտականությունները և ակտիվ են հասարակական կյանքում, հանդիսանում են ցանկացած ժողովրդավարական համակարգի կենսունակության գրավականը,

Վերահաստատելով իր համոզմունքները, որ ներկայացուցչական ժողովրդավարությունը հանդիսանում է անդամ պետությունների ընդհանուր ժառանգության մասը և հանրային կյանքում քաղաքացիների մասնակցության հենասյունը ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում,

Վկայակոչելով որոշ մասնակից պետությունների ուղղակի ժողովրդավարության գործելակերպը,

Գտնելով, որ մասնակցային ժողովրդավարությունը, որը հարգում և ճանաչում է բոլոր դերակատարների դերը, կարող է նպաստել և համալրել ներկայացուցչական և ուղղակի ժողովրդավարությունը, ամրապնդելով ժողովրդավարական կառույցների արձագանքման կարողությունը, դրանով իսկ նպաստելով ներառական և կայուն հասարակությունների ձևավորմանը,

Համոզված լինելով, որ տեղական ժողովրդավարությունը եվրոպա-

կան երկրներում ժողովրդավարության անկյունաքարերից մեկն է և նրա ամրապնդումը հանդիսանում է կայունության գործոն,

Նշելով, որ տեղական ժողովրդավարությունը ներկայումս գործում է մարտահրավերների համատեքստում, որը շարունակաբար զարգանում է ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքային և գործառական փոփոխությունների, այլ նաև Եվրոպայի քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական զարգացումների արդյունքում,

Գիտակցելով, որ հանրային ակնկալիքները շարունակվում են զարգանալ, տեղական քաղաքականությունը շարունակում է փոփոխվել քաղաքացիների կողմից ներգրավվման և արտահայտման նոր ուղիներ փնտրելու և կիրառելու արդյունքում և, որ դա պահանջում է, նույնիսկ ավելի շատ քան նախկինում, ուղղակի և ճկուն մասնակցության մեթոդներ,

Հաշվի առնելով, որ պահպանվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների հետ վերամիավորվելու և նրանց արձագանքելու կարիքը՝ որոշումների կայացման գործընթացի օրինականությունը պահպանելու համար, մասնավորապես, հաշվի առնելով, որ այսօր այնքան հաճախ նվազում է քաղաքացիների վստահության աստիճանը իրենց կողմից ընտրած կառույցների հանդեպ,

Ճանաչելով, որ քաղաքացիների մասնակցությունը խթանելու համար առկա են բազմաթիվ միջոցներ, որոնք հեշտությամբ կարող են հարմարեցվել տեղական հանգամանքներին,

Հաշվի առնելով այն, որ քաղաքացիների իրավունքը՝ սեփական կարծիքն ունենալ երկարաժամկետ պարտավորությունների կամ ընտրությունների հանգեցնող իրենց իսկ վերաբերող հիմնական որոշումների վերաբերյալ, որոնք դժվար է հակադարձել, Եվրոպայի խորհրդի բոլոր մասնակից պետությունների համար գործող ժողովրդավարական սկզբունքներից մեկն է,

Հաշվի առնելով, որ այս իրավունքը կարող է առավելագույն արդյունավետ իրականացվել ուղղակիորեն տեղական մակարդակով և, համապատասխանաբար, պետք է քայլեր ձեռնարկվեն, որպեսզի քաղաքացիները անմիջականորեն ներգրավվեն տեղական գործերի կառավարման մեջ՝ միաժամանակ պահպանելով այդպիսի կառավարման արդյունավետությունը և հուսալիությունը,

Հաշվի առնելով, որ քաղաքացիների և տեղական իշխանությունների և ընտրված ներկայացուցիչների միջև երկխոսությունը կարևոր է տեղական ժողովրդավարության համար, քանի որ այն ամրապնդում է տեղական ժողովրդավարական կառույցների օրինականությունը և նրանց գործունեության արդյունավետությունը,

Հաշվի առնելով, որ սուբսիդիարության սկզբունքին համապատասխան, տեղական իշխանություններն ունեն և պետք է ստանձնեն քա-

ղաքացիների մասնակցության խթանման առաջատարի դերը և իրենց հանձնառությունը հույժ կարևոր է ցանկացած տեղական ժողովրդավարական մասնակցության քաղաքականության հաջողության համար,

Հաշվի առնելով տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության վերաբերյալ մասնակից պետությունների Rec(2001)19 Հանձնարարականը նախարարների կոմիտեին թարմացնելու անհրաժեշտությունը և, որ այն ընդունվելուց հետո տեղի ունեցած փոփոխությունները հիմնավորում են վերջինս ներկա հանձնարարականով փոխարինելու անհրաժեշտությունը,

Հաշվի առնելով՝

- Տեղական ինքնակառավարման մարմինների կանոնադրության լրացուցիչ արձանագրությունը՝ Տեղական իշխանության գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ (CETS No. 207),
- Նախարարների կոմիտեի CM/Rec(2009)2 հանձնարարականը մասնակից պետություններին՝ տեղական և տարածաշրջանային մակարդակներում մասնակցության և մասնակցության քաղաքականության գնահատման, աուդիտի և մոնիթորինգի վերաբերյալ, ինչպես նաև դրանցում ներառված CLEAR գործիքը,
- Լավ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքները, և
- Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության ուղեցույցները (CM(2017)83-վերջնական),

Հանձնարարում է, որ մասնակից պետությունների կառավարությունները ստանձնեն ներքոհիշյալ 1-ից 5-րդ կետերում նշված առաջադրանքները կամ հանձնարարեն այդ առաջադրանքները իրավասու հանրային կառավարման մարմիններին՝ հաշվի առնելով իրենց համապատասխան սահմանադրական կամ օրենսդրական կարգավորումները.

1. Ձևավորել քաղաքականություն, տեղական և, կիրառելիության դեպքում, տարածքային իշխանությունների ներգրավմամբ, որը միտված կլինի տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության խթանմանը, հիմք ընդունելով՝
   - Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքները (ETS No. 122),
   - Տեղական ինքնակառավարման մարմինների կանոնադրության լրացուցիչ արձանագրությունը՝ Տեղական իշխանության գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ (CETS No. 207),
   - Քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության ուղենիշերը (CM(2017)83-վերջնական), և
   - սույն հանձնարարականի հավելվածի «Ա» բաժնում նշված սկզբունքները:
2. Քայլեր ձեռնարկել իրենց իրավասության շրջանակում՝ հաշվի առ-

նելով վերոհիշյալ քաղաքականությունը և սույն հանձնարարականի հավելվածի «Բ» բաժինը, մասնավորապես՝ մասնակցության համար իրավական դաշտը բարելավելու համար, ապահովելով, որ ազգային օրենսդրությունը և կանոնակարգերը հնարավորություն ընձեռեն տեղական և տարածաշրջանային իշխանություններին զբաղվածության գործիքների լայն շրջանակի կիրառման համար:

3. Առաջարկել համապատասխան ձևով տեղական և տարածքային իշխանություններին.
   - որդեգրել սույն հանձնարարականի հավելվածի «Ա» մասում ընդգրկված սկզբունքները և հանձնառու լինել տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցությունը խթանելու քաղաքականության արդյունավետ իրականացմանը,
   - բարելավել տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցությունը կարգավորող տեղական և տարածաշրջանային օրենսդրությունը և այդ մասնակցության գծով գործնական պայմանավորվածությունները և քաղաքացիների մասնակցության խթանման համար դիմել ցանկացած քայլի իրենց իրավասության ներքո՝ պատշաճ ձևով հաշվի առնելով սույն հանձնարարականի հավելվածի «Բ» բաժնում նշված միջոցները:
4. Պարբերաբար անդրադառնալ քաղաքացիների մասնակցության վերաբերյալ ընդունված քաղաքականությունը՝ ապահովելով, որ այն շարունակի մնալ արդյունավետ և արդիական:
5. Ապահովել որ այս հանձնարարականը թարգմանվի մասնակից պետությունների երկրների պաշտոնական լեզուներով, հրապարակվի այնպիսի ձևով, որը նրանք համարում են առավել ընդունելի, և ի գիտություն հասցեագրել տեղական և տարածաշրջանային իշխանություններին:

Որոշում է, որ այս հանձնարարականը փոխարինում է մասնակից պետությունների նախարարների կոմիտեի Rec(2001)19 հանձնարարականին տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության վերաբերյալ:

CM/Rec(2018)4 հանձնարարականի հավելված

Սույն հանձնարարականի նպատակների համար.

- «տեղական հասարակական կյանք» նշանակում է բոլոր հարցերը, ծառայությունները և որոշումները, մասնավորապես՝ տեղական համայնքի հետ կապված կամ նրան վերաբերող գործերի կառավարումն ու վարչարարությունը,
- «քաղաքացի» նշանակում է տեղական համայնքին պատկանող ցանկացած անձ (ներառյալ, անհրաժեշտության դեպքում, օտարերկրյա բնակիչների[1]): Տեղական համայնքին պատկանելը ենթադրում է անձի և համապատասխան համայնքի միջև կայուն կապի առկայությունը:

Սույն հանձնարարականում օգտագործված լրացուցիչ եզրերի սահմանումները ներկայացված են հետևյալ բացատրական հուշագրում (CM(2018)13-final):

Ա. Տեղական ժողովրդական մասնակցության քաղաքականության հիմնական սկզբունքները

Մասնակից պետությունները պարտավոր են՝

1. համապատասխանել տեղական համայնքին մտահոգող տարբեր հարցերի առնչությամբ Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում (CETS No. 205) սահմանված տեղեկատվության տրամադրման սկզբունքներին, որպեսզի իրենց քաղաքացիներին հնարավորություն ընձեռվի մասնակցելու այն որոշումներ կայացմանը, որոնք ազդում են համայնքի կամ անհատապես իրենց վրա, ապահովելով տեղական իշխանությունների որոշումների կայացման թափանցիկությունը՝ դրանով իսկ բարձրացնելով որոշումներ կայացնողների պատասխանատվությունը,
2. նոր ուղիներ փնտրել քաղաքացիական մտածելակերպի բարելավման և համայնքների ու տեղական իշխանությունների կողմից տարածվող ժողովրդավարական մասնակցության մշակույթի զարգացման համար,
3. զարգացնել համայնքի պատկանելիության իրազեկվածությունը և խրախուսել քաղաքացիներին՝ համայնքների կյանքին նպաստելու գծով իրենց պարտականությունները ընդունելու համար,
4. կարևոր նշանակություն հատկացնել հանրային կառավարման մարմինների և քաղաքացիների միջև հաղորդակցմանը և խրախուսել տեղական իշխանություններին՝ շեշտը դնել քաղաքացիների մասնակցությանը և ամբողջությամբ հաշվի առնել նրանց պահանջներն ու ակնկալիքները, որպեսզի պատշաճ ձևով արձագանքեն նրանց կողմից հնչեցվող պահանջներին,

5. համապարփակ մոտեցում ցուցադրել քաղաքացիների մասնակցության նկատմամբ, հաշվի առնելով ինչպես ներկայացուցչական ժողովրդավարության գործընթացները, այնպես էլ որոշումների կայացմանը և տեղական գործերի կառավարմանը ուղղակիորեն մասնակցելու ձևերը,
6. խուսափել կարծրացած լուծումներից և ողջունել նորարարությունը, նախապատվությունը տալով քաղաքացիների կարողությունների հզորացմանը. հետևաբար, մասնակից պետությունները պետք է ապահովեն մասնակցության գործիքակազմի լայն շրջանակը և վերջինիս համատեղելիության ու կիրառման՝ հանգամանքներից կախված հարմարեցման հնարավորությունը,
7. նախաձեռնել տեղական մասնակցությանը վերաբերող իրավիճակի խորքային գնահատումը, հաստատել համապատասխան գնահատման չափանիշները և ներդնել մոնիտորինգի համակարգ՝ դիտարկելու կատարվող ցանկացած փոփոխություն՝ քաղաքացիների մասնակցության գծով յուրաքանչյուր դրական կամ բացասական միտումների պատճառները պարզելու, ազդեցությունը գնահատելու և կիրառվող կառուցակարգերի ազդեցության գնահատման համար,
8. հնարավորություն ընձեռել քաղաքացիների մասնակցությամբ լավագույն փորձի վերաբերյալ երկրների ներսում և նրանց միջև տեղեկատվության փոխանակման համար, աջակցել տեղական իշխանությունների ուսուցմանը մասնակցության տարբեր մեթոդների արդյունավետության վերաբերյալ և ապահովել, որ հանրությունը լիարժեք տեղեկացված լինի առկա բոլոր հնարավորությունների մասին՝ հաշվի առնելով Տեղական և տարածաշրջանային մակարդակներում մասնակցության և մասնակցային քաղաքականության գնահատման, աուդիտի և մոնիտորինգի վերաբերյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2009)2 հանձնարարականը մասնակից պետություններին և այնտեղ ներառված CLEAR գործիքը,
9. հատուկ ուշադրություն դարձնել այն քաղաքացիների վրա, ովքեր ունեն ավելի մեծ դժվարություններ ակտիվորեն ներգրավված լինելու հարցում կամ, փաստացի, դուրս են մնում տեղական հասարակական կյանքից,
10. նպաստել կանանց և տղամարդկանց համաչափ մասնակցությանը տեղական քաղաքականության մշակմանը և տեղական հասարակական կյանքում,
11. ճանաչել այն ներուժը, որ երեխաներն ու երիտասարդները ներկայացնում են տեղական համայնքների կայուն զարգացման համար և ընդգծել այն դերը, որ նրանք կարող են խաղալ,
12. ճանաչել և զարգացնել քաղաքացիների միավորումների և խմբերի

դերը՝ որպես մասնակցության մշակույթի զարգացման և պահպանման առանցքային գործընկերներ և ժողովրդավարական մասնակցության գործնական կիրառման շարժիչ ուժ,

13. գիտակցել, թե ինչպես մշակութային բազմազանություն և ներառականություն ունեցող հասարակությունները կարող են նպաստել բոլորի մասնակցությանը իրենց համայնքների հասարակական կյանքում,
14. խրախուսել և օգտվել կառավարման բոլոր մակարդակներում իշխանությունների միասնական ջանքերից, որտեղ յուրաքանչյուր մարմին պատասխանատու է իր իրավասության շրջանակներում համապատասխան գործողություններ կատարելու համար՝ համաձայն սուբսիդիարության սկզբունքի:

Բ. Քաղաքացիների մասնակցությունը տեղական հասարակական կյանքում խրախուսելու և ամրապնդելու քայլեր և միջոցառումներ

Ի. Ընդհանուր քայլեր և միջոցառումներ

Մասնակից պետությունները՝

1. հավաստիանում են, թե արդյոք բարդ և գլոբալացվող հասարակության մեջ տեղական գործողությունների և որոշումների կայացման կարևորությունը հանրության համար պարզ է՝ տեղական իշխանությունների համար փոփոխվող միջավայրում հիմնական դերերը վերհանելու միջոցով,
2. պատշաճ ուշադրություն են դարձնում այդ դերերին և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտում, թե արդյոք ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում իրականացվող լիազորությունների հավասարակշռությունը ապահովում է, որպեսզի տեղական իշխանությունները և ընտրված ներկայացուցիչները ունենան բավարար կարողություններ և տեղական գործողության կարողություն՝ քաղաքացիների ներգրավման համար անհրաժեշտ խթանն ու շարժառիթը տրամադրելու համար: Այս համատեքստում մասնակից պետությունները պետք է օգտագործեն գործնական ապակենտրոնացման համար տեղական իշխանությունների լիազորությունները ընդլայնելու յուրաքանչյուր հնարավորություն,
3. տեղական իշխանություններին հնարավորություն են ընձեռում հարևանության մակարդակով ներդնել մասնակցային կառույցներ, որոնք քաղաքացիներին հնարավորություն են տալիս ազդելու իրենց անմիջական միջավայրի վրա,

4. բարելավում են քաղաքացիական կրթությունը և ընդգրկում են կրթակարգերում ու ուսումնական ծրագրերում ժողովրդավարական հասարակության մեջ յուրաքանչյուր անձի պատասխանատվության մասին իրազեկման նպատակը, մասնավորապես՝ տեղական համայնքներում, անկախ ընտրված ներկայացուցիչներ, տեղական կառավարիչներ, հանրային ծառայողներ կամ սովորական քաղաքացիներ լինելու հանգամանքից , Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարական քաղաքացիության կրթության և մարդու իրավունքների կրթության մասին» Խարտիայի (Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)7 հանձնարարականը) համաձայն,
5. խրախուսում են տեղական ընտրված ներկայացուցիչներին և տեղական իշխանություններին համապատասխան ցանկացած միջոցներով, ներառյալ վարքագծի կանոնների մշակման և հրատարակման, վարվել այնպես, որ համապատասխանեն էթիկական վարքագծի ամենաբարձր չափանիշներին և ներշնչում են քաղաքացիների վստահությունը, հաշվի առնելով.
   - Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի 401 (2016) բանաձևը «Կոռուպցիայի կանխարգելումը և հասարակական էթիկայի տարածումը տեղական և տարածաշրջանային մակարդակներում»,
   - տեղական և տարածաշրջանային ընտրված ներկայացուցիչների քաղաքական ամբողջականության համար վարքագծի եվրոպական օրենսգիրքը և,
   - տեղական մակարդակում հանրային էթիկայի վերաբերյալ 2006թ. ամփոփ ձեռնարկը,
6. ավելի մեծ թափանցիկություն են ներդնում տեղական ինստիտուտների և իշխանությունների գործունեության մեջ, մասնավորապես՝
   I. ապահովում են տեղական որոշումների կայացման գործընթացների հանրային բնույթը (օրինակ՝ տեղական ավագանու նիստի օրակարգի հրապարակման և տեղական գործադիր ժողովների անցկացման, տեղական ավագանու և նրա հանձնաժողովների նիստերը հանրության համար բաց ձևաչափով անցկացման, հարց ու պատասխանների անցկացման կամ ժողովների և որոշումների արձանագրությունների հրապարակման միջոցով),
   II. ապահովում են ցանկացած քաղաքացու համար տեղական գործերին վերաբերող տեղեկատվությունը և դյուրացնում դրա հասանելիությունը (օրինակ, տեղեկատվական գրասենյակների, փաստաթղթային կենտրոնների և հանրային տվյալների բազաների ստեղծման, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման, վարչական ընթացակարգերի պարզեցման և փաստաթղթերի պատճենների արժեքի նվազեցման միջոցով) պահպանելով գաղտնիության և անվտանգության վերաբերյալ

օրենսդրության պահանջները,

III. համապատասխան տեղեկատվություն են տրամադրում վարչական մարմինների և դրանց կազմակերպչական կառուցվածքի վերաբերյալ և տեղեկացնում են ցանկացած ընթացիկ վարույթի ազդակիր քաղաքացիներին այդ վարույթի առաջընթացի մասին,

7. իրականացնում են լիարժեք հաղորդակցման քաղաքականություն՝ քաղաքացիներին հնարավորություն ընձեռելով ավելի լավ հասկանալու համայնքին մտահոգող հիմնական խնդիրները և այն հիմնական քաղաքական որոշումների հետևանքները, որոնք համապատասխան մարմինները կոչված են կայացնելու և քաղաքացիներին տեղեկացնելու տեղական հասարակական կյանքում մասնակցության հնարավորությունների և հնարավոր ձևաչափերի մասին:

II. Տեղական ընտրություններին մասնակցելու և ներկայացուցչական ժողովրդավարության համակարգին վերաբերող քայլեր և միջոցներ

Մասնակից պետությունները՝

1. դիտարկում են տեղական ընտրական համակարգերի գործունեությունը՝ պարզելու համար, թե կան արդյոք հիմնարար թերություններ կամ քվեարկության պայմանավորվածություններ, որոնք կարող են խոչընդոտել բնակչության որոշակի հատվածների քվեարկության հնարավորությանը, և ուսումնասիրում են այդ թերությունների կամ պայմանավորվածությունների շտկման հնարավորությունը՝ Օրենքի միջոցով ժողովրդավարություն Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) Ընտրական հարցերում լավ պրակտիկայի կանոնագրքի համաձայն (CDL-AD(2002)023rev-E),
2. ձգտում են ընտրություններին մասնակցության խթանմանը՝ համաձայն քվեարկության իրավունքը կարգավորող ազգային օրենսդրության: Անհրաժեշտության դեպքում մասնակից պետությունները պետք է անցկացնեն տեղեկատվական արշավներ, որպեսզի բացատրեն, թե ինչպես պետք է քվեարկել և խրախուսեն մարդկանց գրանցվել քվեարկելու համար և մասնակցել քվեարկությանը: Բնակչության կոնկրետ հատվածներին նպատակաուղղված տեղեկատվական քարոզարշավները նույնպես կարող են նպատակահարմար տարբերակ լինել,
3. ուսումնասիրում են ընտրողների գրանցման և մասնակցության արդյունքները՝ հայտնաբերելու համար որևէ փոփոխություն ընդհանուր մոտեցումներում կամ որևէ խնդիր, որը վերաբերում է ընտրության իրավունք ունեցող, բայց ընտրությունների նկատմամբ քիչ հետաքրքրություն ունեցող քաղաքացիների կատեգորիաներին կամ խմբերին,
4. հաշվի առնելով ժամանակակից կենսակերպի բարդությունն ու պա-

հանջները՝ ուսումնասիրում են քվեարկություններն առավել հարմար դարձնելու միջոցառումների հնարավորությունը, մասնավորապես՝

I. դիտարկելով ընտրատեղամասերի աշխատանքին վերաբերող հարցերը (թիվը, հասանելիությունը, բացման ժամերը և այլն),

II. ներդնելով յուրաքանչյուր մասնակից պետության քաղաքացիների ձգտումներին ավելի համապատասխանող քվեարկության նոր տարբերակներ (վաղաժամկետ քվեարկություն, փոստային քվեարկություն, փոստի բաժանմունքի միջոցով քվեարկություն, էլեկտրոնային քվեարկություն[2] և այլն)),

III. ներդնելով օժանդակության կոնկրետ ձևեր (օրինակ, հաշմանդամների կամ անգրագետ մարդկանց համար) կամ այլ հատուկ քվեարկության ընթացակարգեր ընտրողների առանձին կատեգորիաների համար (քվեարկություն վստահված անձի միջոցով, քվեարկություն տանը, հիվանդանոցում, քվեարկություն զորամասերում, ազատազրկման վայրերում և այլն),

5. անհրաժեշտության դեպքում, ավելի լավ գնահատելու համար նախատեսված ցանկացած միջոցի ազդեցությունը, իրականացնում են (կամ թույլ են տալիս իրականացնել) պիլոտային ծրագրեր՝ նոր քվեարկության մեխանիզմներ փորձարկելու համար,

6. ուսումնասիրում են այն հիմքը, որով թեկնածուները, ովքեր տեղական ընտրովի պաշտոնի համար ընտրվելու իրավունք ունեն, իրականում կարող են դա անել և ուսումնասիրում են, օրինակ՝

I. արդյոք ընտրողները պետք է ներգրավվեն թեկնածուներին ընտրացուցակում ընդգրկման գործընթացում, օրինակ՝ ստեղծելով անհատական թեկնածուների անկախ ընտրացուցակների ներկայացման հնարավորություն կամ ներդնելով վարկանիշային քվեարկություն,

II. արդյոք ընտրողները պետք է ավելի ուժեղ ազդեցություն ունենան տեղական մարմինների ղեկավարների կամ քաղաքապետերի ընտրության կամ նշանակման հարցում,

7. ուսումնասիրում են ընտրովի պաշտոնների՝ այլ աշխատանքով զբաղվելու հետ կապված հարցերը, որպեսզի այն դեպքերում, երբ դա կխոչընդոտի համապատասխան պարտականությունների պատշաճ կատարմանը կամ կհանգեցնեն շահերի բախմանը, ընդունվեն պաշտոնների զուգորդումը կանխող ընթացակարգեր,

8. ուսումնասիրում են ընտրովի մարմնի արդյունավետ պաշտոնավարման նախապայմանները, որոշելու, արդյոք տեղական ընտրված ներկայացուցիչների կարգավիճակի որոշակի կողմները կամ պաշտոնավարման գործնական պայմանավորվածությունները կարող են խոչընդոտել քաղաքականության մեջ ներգրավվածությունը: Անհրաժեշտության դեպքում մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն այդ խոչընդոտները վերացնելու համար նախատեսված մի-

ջոցները և, մասնավորապես, ընտրված ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռելով բավարար ժամանակ հատկացնել իրենց պարտականություններին և նրանց ազատել որոշակի տնտեսական սահմանափակումներից:

III. Քաղաքացիների մասնակցությունը տեղական մակարդակով որոշումների կայացման և տեղական գործերի կառավարման խթանմանը միտված քայլեր և միջոցներ

Մասնակից պետությունները՝

1. խթանում են երկխոսությունը քաղաքացիների և տեղական ընտրված ներկայացուցիչների միջև և տեղական իշխանություններին տեղյակ են պահում հանրության հետ հաղորդակցվելու տարբեր մեթոդների և այնպիսի ուղիների լայն շրջանակի մասին, որոնցով քաղաքացիները կարող են ուղղակիորեն մասնակցել որոշումների կայացմանը: Նման իրազեկումը կարող է իրականացվել ուղեցույցների հրատարակման (օրինակ՝ տեղական մակարդակով քաղաքացիների մասնակցության կարգի տեսքով), աշխատաժողովների և սեմինարների կամ թվային պահոցների և փոխգործողության ապահովման միջոցով, թույլ տալով տեղակայել և օգտվել լավ գործելակերպի օրինակներից,
2. ապահովում են հարցումների և քննարկումների միջոցով, որոշումների ընդունման գործընթացում քաղաքացիների մասնակցության տարբեր գործիքների ուժեղ և թույլ կողմերի ընկալումը և տեղական իշխանությունների քաղաքացիների հետ հաղորդակցվելու ջանքերի մեջ նորարարության և փորձի խթանումը և նրանց ավելի սերտորեն ներգրավումը որոշումների կայացման գործընթացներում,
3. լիարժեք օգտվում են մասնավորապես՝
   I. նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից և քայլեր են ձեռնարկում, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինները և այլ հանրային կառավարման մարմինները (բացի ավանդական և դեռևս արժեքավոր մեթոդներից, օրինակ՝ պաշտոնական պետական ծանուցումներից կամ պաշտոնական տեղեկագրերից) օգտագործեն կապի միջոցների ողջ առկա տեսականին, հիմք ընդունելով մասնավորապես՝ Էլեկտրոնային ժողովրդավարության մասին Մասնակից պետություններին նախարարների կոմիտեի CM/Rec(2009)1 հանձնարարականը և Էլեկտրոնային կառավարման մասին Մասնակից պետություններին նախարարների կոմիտեի Rec(2004)15 հանձնարարականը:
   II. որոշումների կայացման ավելի խորհրդակցական ձևերից, այն է՝ տեղեկատվության և կարծիքների փոխանակում ներառող (այդ թվում՝ հանրային հանդիպումներ, քաղաքացիական հավաքներ և ժյուրիներ կամ քաղաքացիների համաժողովների տարբեր տե-

սակներ, խմբակներ, խմբային քննարկումներ և հասարակական հանձնաժողովներ, որոնց գործառույթը խորհուրդ տալն է կամ առաջարկներ անելը, կամ կլոր սեղանները, կարծիքների հավաքագրումներ և հարցումներ),

4. ներդնում կամ, անհրաժեշտության դեպքում, բարելավում օրենսդրությունը կամ կանոնակարգերը, որոնք նախատեսում են՝
   I. քաղաքացիների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացված հանրագրեր, միջնորդություններ, առաջարկություններ և բողոքներ,
   II. հանրային նախաձեռնություններ, որոնք կոչ են անում ընտրված մարմիններին զբաղվել քաղաքացիներին պատասխան տալու կամ հանրաքվեի ընթացակարգը նախաձեռնելու համար հատուկ հարցերով,
   III. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց նախաձեռնությամբ կամ տեղական համայնքի խնդրանքով կոչված տեղական նշանակության հարցերով խորհրդակցական կամ որոշումների կայացման հանրաքվեներ՝ հաշվի առնելով Օրենքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված հանրաքվեների վերաբերյալ լավ պրակտիկայի կանոնագիրքը (CDL-AD(2007)008rev),
   IV. քաղաքացիների՝ որոշումների կայացման մարմիններում, ներառյալ՝ ներկայացուցչական, կոոպտացման կառուցակարգեր,
   V. քաղաքացիների՝ կառավարման մեջ ներգրավելու կառուցակարգեր (շահագրգիռ կողմերի հանձնաժողովներ, գործընկերային խորհուրդներ, քաղաքացիների կողմից ծառայությունների ուղղակի կառավարում, մասնակցային բյուջետավարում և այլն),

5. քաղաքացիներին ազդեցության ավելի մեծ աստիճան են տալիս տեղական պլանավորման և ընդհանուր առմամբ, ռազմավարական և երկարաժամկետ որոշումների նկատմամբ, մասնավորապես՝
   I. քաղաքացիներին հնարավորություն են ընձեռում մասնակցել այդ որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերում: Այս փուլերը կարող են լինել՝ տեղական քաղաքականությունների մշակումը, ընդունումը, իրականացումը, գնահատումը և վերաձևակերպումը,
   II. գործընթացի յուրաքանչյուր փուլի լուսաբանումը պարզ, հասկանալի նյութի միջոցով, որը հեշտությամբ հասանելի է հանրությանը, հնարավորության դեպքում օգտագործելով ավանդական մեթոդներից բացի (քարտեզներ, մասշտաբային մոդելներ, աուդիովիզուալ նյութեր) նոր տեխնոլոգիաներով հասանելի այլ միջոցներ,

6. մշակում են համակարգված հետադարձ կապի կառուցակարգեր, որպեսզի քաղաքացիները ներգրավվեն տեղական գործերի և ծա-

ռայությունների մատուցման գնահատման և բարելավման գործընթացներում, ինչպիսիք են օգտվողների հարցումները, օգտվողների խմբերը, կատարողական ցուցանիշները կամ տարբեր ծառայություններ մատուցողների միջև ընտրությունը՝ որոշումների և ծառայությունների որակի բարձրացման և հաշվետվողականության բարելավման համար,

7. ապահովում են, որ քաղաքացիների մասնակցությունը իրական ազդեցություն ունենա որոշումների կայացման գործընթացների վրա, որ քաղաքացիները լավ տեղեկացված լինեն իրենց մասնակցության ազդեցության մասին և զգալի արդյունքների ականատեսը լինեն: Այդուհանդերձ, տեղական իշխանությունները պետք է անկեղծ լինեն հասարակության հետ առաջարկվող մասնակցության ձևերի սահմանափակումների վերաբերյալ և խուսափեն ներգրավված տարբեր շահերի մեկտեղման հնարավորության վերաբերյալ չափազանցված ակնկալիքների բարձրացումից, մասնավորապես, երբ որոշումները կայացվում են հակասող շահերի կամ ռեսուրսների նորմավորման մասին,
8. խրախուսում են և պատշաճ կերպով ճանաչում են տեղական համայնքներում առկա կամավորության ոգին, օրինակ՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով կամ շահույթ չհետապնդող, կամավոր և համայնքային կազմակերպություններին, քաղաքացիների նախաձեռնող խմբերին և այլոց աջակցության և խրախուսման այլ ձևերով կամ այդ կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև այդ կողմերի միմյանց հետ փոխհարաբերություններում համապատասխան իրավունքների, դերերի և ակնկալիքների վերաբերյալ պայմանագրերի կամ համաձայնագրերի կնքման միջոցով,
9. ստեղծում են հարևանության մասնակցային կառույցներ, որոնք հնարավորություն են տալիս քաղաքացիներին ազդել հանրային ներդրումների, գոտիավորման կամ ծառայությունների մատուցման վերաբերյալ որոշումների վրա, կամ տեղական տարածքների, օբյեկտների և այլնի կառավարման համար պատասխանատվություն ստանձնել, օրինակ՝ թաղային խորհուրդների և ֆորումների, մասնակցային բյուջետավորման կամ կամավոր խմբերի միջոցով,

IV. Հատուկ քայլեր և միջոցներ խրախուսելու քաղաքացիների կատեգորիաներին, որոնք տարբեր պատճառներով ավելի մեծ դժվարություններ ունեն մասնակցելու

Մասնակից պետությունները՝

1. կանոնավոր կերպով հավաքում են քաղաքացիների տարբեր կատեգորիաների մասնակցության վերաբերյալ տեղեկատվություն և պարզում, արդյոք որոշ խմբերի ներկայացուցիչներ լիարժեք չեն ներկայացված ընտրովի մարմիններում և/կամ քիչ կամ որևէ մասնակցություն չունեն ընտրության կամ ուղղակի մասնակցության ձևերին՝ հաշվի առնելով եվրոպական հասարակությունների օրեցօր ավելի բազմազան դարձող կազմը և ներառական հասարակությունների կարևորությունը,
2. սահմանում են թիրախներ քաղաքացիների համապատասխան խմբերի ներկայացվածության և/կամ մասնակցության գծով սահմանված մակարդակներին հասնելու համար և մշակում են կոնկրետ միջոցառումների փաթեթներ դրանց մասնակցելու հնարավորությունները բարձրացնելու համար, օրինակ՝
   I. ներդնում են քաղաքացիների խմբերի համար ակտիվ հաղորդակցման և տեղեկատվական քաղաքականություն, ներառյալ՝ համապատասխան դեպքերում, հատուկ լրատվամիջոցների արշավներ, նրանց մասնակցությունը խրախուսելու համար (կարելի է դիտարկել յուրաքանչյուր խմբի կարիքների համար կոնկրետ լեզու, լրատվամիջոց և քարոզչական ոճ կիրառելու նպատակահարմարությունը),
   II. ձևավորում են մասնակցության հատուկ ինստիտուցիոնալ ձևեր՝ հնարավորության դեպքում, խորհրդակցելով այն քաղաքացիների խմբի կամ խմբերի հետ, որոնց ներգրավվածությունը խրախուսվում է,
   III. նշանակում են որոշում կայացնող պաշտոնյաների, որոնք հատուկ պատասխանատու են այն խմբերի համար, ովքեր մասնակցելու ավելի մեծ դժվարություն ունեն, փոխանցելով փոփոխության մասին նրանց խնդրանքները վերաբերյալ իրենց խնդրանքները համապատասխան որոշում կայացնող մարմիններին և հետ զեկուցելով նրանց արձանագրված առաջընթացի և նրանց խնդրանքներին արձագանքի (դրական կամ բացասական) մասին,
3. մասնավորապես, կանանց վերաբերյալ.
   I. ընդգծում են կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության կարևորությունը որոշումների կայացման մարմիններում և դիտարկում են ցանկացած պայմանավորվածության կիրառման հնարավորությունը, որը կարող է նպաստել ակտիվ քաղաքական ներգրավվածության համատեղմանը ընտանեկան և աշխատանքային կյանքի հետ,

II. հաշվի են առնում, օրենսդրորեն հնարավոր լինելու դեպքում, նվազագույն թվով պարտադիր կամ առաջարկված քվոտային համակարգերի ներդրումը միևնույն սեռի թեկնածուների համար, որոնք կարող են հայտնվել ընտրական ցուցակներում և/կամ տեղական խորհուրդների, տեղական գործադիր մարմինների և տարբեր տեղական մարմինների կողմից կազմված կոմիտեներ և խորհուրդներում կանանց համար վերապահված տեղերի քվոտաները՝ հաշվի առնելով քաղաքական և հասարակական որոշումների կայացման հարցում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին Նախարարների կոմիտեի Rec(2003)3 հանձնարարականը մասնակից պետություններին:

4. մասնավորապես, երեխաների և երիտասարդների վերաբերյալ.
   I. զարգացնում են դպրոցը՝ որպես երիտասարդների մասնակցության և ժողովրդավարական ուսուցման գործընթացում կարևոր ընդհանուր հարթակ,
   II. խթանում են «մանկական խորհուրդ» և «երիտասարդական խորհուրդ» տիպի նախաձեռնությունները համայնքային մակարդակում՝ որպես տեղական քաղաքացիության իսկապես օգտակար կրթական միջոցներ՝ ի լրումն հասարակության ամենաերիտասարդ անդամների հետ երկխոսության հնարավորությունների,
   III. խրախուսում են երիտասարդական միավորումներն ու աջակցում են, մասնավորապես՝ համայնքի ներգրավման համար ճկուն ձևերի և կառույցների զարգացմանը, ինչպիսիք են՝ երիտասարդական կենտրոնները, լիարժեք օգտագործելով երիտասարդների՝ ծրագրեր նախագծելու և դրանք իրականացնելու գծով կարողությունները,
   IV. դիտարկում են տեղական ընտրություններին քվեարկելու կամ դրանց մասնակցելու և տեղական հանրաքվեներին, խորհրդակցություններին և ժողովրդական նախաձեռնություններին մասնակցելու համար տարիքը իջեցնելու հնարավորությունը,
   V. դիտարկում են տարբեր այլ տեսակի նախաձեռնությունները, որոնք առաջարկվում են Տեղական և տարածաշրջանային կյանքում երիտասարդների մասնակցության մասին նախարարների կոմիտեի Re(2004)13 հանձնարարականում մասնակից պետություններին, 18 տարեկանից ցածր երիտասարդների և երեխաների մասնակցության մասին նախարարների կոմիտեի CM/Rec(2012)2 հանձնարարականում մասնակից պետություններին և «Երեխաների մասնակցությունը նրանց վրա ազդող որոշումների կայացմանը նպաստելու մասին» Խորհրդարանական վեհաժողովի 1864 (2009) հանձնարարականում,

5. մասնավորապես, տարեցների վերաբերյալ.
   I. ստեղծում և խթանում են տեղական հասարակական կյանքի բո-

լոր ոլորտներում տարեցների լիարժեք մասնակցելու հնարավորությունները և խրախուսում նրանց դա անել անկախ նրանց տարիքից,

II. մշակում և տարածում են տարեցների ներգրավման համար ճկուն ձևեր և կառույցներ, ինչպիսիք են համապատասխան խորհրդատվական մարմինները՝ հաշվի առնելով Տարեցների մարդու իրավունքների խթանմանն ուղղված նախարարների կոմիտեի CM/Rec(2014)2 հանձնարարականը մասնակից պետություններին,

6. մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ:

I. ստեղծում և խթանում են հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքի բոլոր ոլորտներին լիարժեք մասնակցելու հնարավորությունները և ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր նրանց դա անել թույլ տալու և խրախուսելու համար,

II. մշակում և տարածում են մասնակցության պատշաճ ձևերը և կառույցները, ինչպիսիք են համապատասխան խորհրդատվական մարմինները՝ վերացնելով խոչընդոտները և անհրաժեշտության դեպքում տրամադրելով համապատասխան օգնություն հաշմանդամներին ներգրավելու համար, հաշվի առնելով քաղաքական և հասարակական կյանքում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության մասին նախարարների կոմիտեի CM/Rec(2011)14 հանձնարարականը մասնակից պետություններին,

7. ինչ վերաբերում է օտարերկրյա բնակիչներին [3]՝ խրախուսում են նրանց ակտիվ մասնակցությունը տեղական համայնքի կյանքին առանց որևէ խտրականության՝ համապատասխանելով 1992թ. «Տեղական մակարդակով հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին» Կոնվենցիայի դրույթներին (ETS No. 144) կամ, առնվազն, ոգեշնչվելով այս Կոնվենցիայում նշված կառուցակարգերից, նույնիսկ եթե այն չի վավերացվել մասնակից պետության կողմից:

[1] Համաձայն Օտարերկրացիների տեղական մակարդակով հասարակական կյանքին մասնակցելու մասին կոնվենցիային (ETS No. 144 - հոդված 2-րդ հոդված), «օտարերկրյա բնակչություն» եզրը վերաբերում է այն անձանց, ովքեր չեն հանդիսանում պետության քաղաքացիներ և որոնք օրինականորեն բնակվում են նրա տարածքում:

[2] Հաշվի առնելով Էլեկտրոնային քվեարկության ստանդարտների վերաբերյալ նախարարների կոմիտեի CM/Rec(2017)5 հանձնարարականը մասնակից պետություններին:

[3] Համաձայն Օտարերկրացիների տեղական մակարդակով հասարակական կյանքին մասնակցելու մասին կոնվենցիային (ETS No. 144 - հոդված 2-րդ հոդված), «օտարերկրյա բնակչություն» եզրը վերաբերում է այն անձանց, ովքեր չեն հանդիսանում պետության քաղաքացիներ և որոնք օրինականորեն բնակվում են նրա տարածքում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ

Գործիքակազմ

Լավ կառավարման իրականացում

Հեղինակներ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

համագործակցությամբ
Գորիցիայի միջազգային հասարակագիտության ինստիտուտի
(I S I G)

Եվրոպայի խորհուրդ

Սույն աշխատության մեջ արտահայտած կարծիքների համար պատասխանատվություն են կրում հեղինակները և դրանք չեն ներկայացնում Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Չի թույլատրվում թարգմանել, որևէ տեսքով կամ կրիչով՝ էլեկտրոնային (CD-ROM, համացանց և այլն) կամ մեխանիկական, այդ թվում՝ լուսապատճենահանման, ձայնագրման կամ տեղեկատվության պահպանման եղանակով կամ որոնման համակարգի միջոցով վերարտադրել կամ փոխանցել սույն հրատարակության որևէ հատված՝ առանց Տեղական ինքնակառավարման բարեփոխման փորձագիտական կենտրոնից նախապես ստացված գրավոր թույլտվության:

Եվրոպայի խորհուրդ

Տեղական ինքնակառավարման բարեփոխման
փորձագիտական կենտրոն

https://www.coe.int/en/web/good-governance/centre-of-expertise

© Տեղական ինքնակառավարման բարեփոխման փորձագիտական կենտրոն, 2017թ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ստեղծման օրվանից Փորձագիտական կենտրոնն աշխատել է ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների արագ զարգացող համատեքստում. անդամ պետություններից շատերում արագ ընթացել է գործառույթների փոխանցում համապետականից տեղական և/կամ մարզային մակարդակներ, իսկ ապակենտրոնացման քաղաքականությունները գրավել են հարաճուն ուշադրություն: Այս փոփոխությունները և նոր ի հայտ եկող խնդիրներն արտացոլելու համար Կենտրոնը, հանձնագրի շրջանակներում, զարգացրել է իր գործիքներն ու մեթոդները:

Այս համատեքստում Կենտրոնի՝ կարողությունների ամրապնդման ծրագրերն ու իրավական օգնության միջոցառումներն աջակցում են տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացող գործընթացին, սակայն գնալով ավելի են թիրախավորում ոչ միայն տեղական, այլև մարզային և կենտրոնական իշխանությունները: Այժմ Կենտրոնն առաջարկում է բազմամակարդակ կառավարման առաջադեմ փորձագիտություն իր գործընկերներին ու շահառուներին:

Գործնական և ազդեցություն առաջացնելուն ուղղված «առանձնահատուկ ծրագրերը» իրականացվում են տեղական, մարզային, ազգային և միջազգային շահակիրների հետ համագործակցելով և նպատակ ունեն բարելավել թե՛ օրենսդրությունը, թե՛ կառավարման բոլոր մակարդակների ինստիտուցիոնալ կարողությունը:

Կենտրոնն ունի կենտրոնական և տեղական իշխանությունների կարիքները հավասարակշռելով բազմամակարդակ կառավարմանն աջակցելու բացառիկ հնարավորություն: Մի կողմից՝ Կենտրոնը պահպանելու է տեղական ինքնակառավարման դերակատարների կարիքները հասկանալու շուրջ կենտրոնացող մոտեցումը, մյուս կողմից՝ վերջինիս կապը Եվրոպայի Խորհրդի Ժողովրդավարության և կառավարման հարցերով միջկառավարական կոմիտեի (ԺԿԵԿ, անգլ.՝ CDDG) հետ դյուրահասանելի է դարձնում 47 անդամ պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներին, ովքեր ունեն կառավարման բարեփոխումների գիտելիքի ու փորձագիտության մեծ պաշար:

Այսօր Կենտրոնը նպատակ ունի իրավական և քաղաքական խորհրդատվության, հենանիշերի, գնահատման գործիքների և նորարարական մեթոդաբանությունների («գործիքների») կիրառման միջոցով խթանել համապատասխան եվրոպական չափանիշները, որոնց շարքում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան և Լավ կառավարման 12 սկզբունքները:

Գորիցիայի միջազգային հասարակագիտության ինստիտուտ (ISIG)

ISIG-ը հասարակական գիտությունների բնագավառի անկախ հետազոտական ինստիտուտ է:

1968 թ-ին Գորիցիայում (Իտալիա) հիմնադրված ISIG-ը կանխատեսում է միջազգային փոխըմբռնումով խթանվող ապագայի խաղաղ փոխհարաբերություններ, որոնք հիմնված են տարբերությունների՝ որպես ռեսուրսներ ընկալման վրա:

ISIG-ը հետազոտություններ է կատարում ազգային և միջազգային մակարդակներում՝ գիտելիք կուտակելով պետությունների ու էթնիկ խմբերի փոխհարաբերություններից առաջացող հիմնահարցերի, ինչպես նաև համայնքների մշակութային, տնտեսական և սոցիալական զարգացման վերաբերյալ:

ISIG-ի աշխատանքի առանցքային հատկանիշ են մասնակցային գործընթացները և տեղական զարգացման մասնակցային գործընթացները: Ինստիտուտի հետազոտական գործունեությունը կենտրոնանում է հետազոտական մեթոդների և մեկնաբանական մոդելների մշակման շուրջ, որոնք ընձեռում են տեղական մակարդակում նորարարական ռազմավարությունների մշակման և քաղաքականությունների արդյունավետ իրականացման հնարավորություն: Այս տեսանկյունից ISIG-ի գլխավոր նպատակն է դյուրացնել տեղական շահակիրների ներառումը քաղաքականության մշակման գործընթացներում:

Մասնակցային մոտեցումների և մեթոդաբանությունների լայն ընտրանու միջոցով ISIG-ը հասնում է շահակիրների ինտեգրմանը՝ սկսելով միջնորդավորված սոցիալական փոփոխականների (այսինքն՝ համայնքի ինտեգրացիոն գործառույթը, խորհրդանշական տարածությունների դերը, հայացքը դեպի ապագա և դրան հասնելու համար անհրաժեշտ գործողությունները) վերլուծությունով և համեմատությամբ: Սա, ի վերջո, ստեղծում է տեղական համատեքստի համալիր զարգացման հնարավորություն՝ վերլուծելով գործոնները (ներքին և արտաքին), որոնք կարող են նպաստավոր կամ անբարենպաստ լինել քաղաքականության իրականացման համար, և թույլ տալով կատարել նախնական գնահատում ու ծրագրի իրագործելիության ստուգում:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՀԵՆՔ

«Քաղաքացիական մասնակցությունն ընկած է ժողովրդավարության գաղափարի բուն սրտում: Արդյունավետ ժողովրդավարությունը կախված է ասելիք ունեցող և լսելի քաղաքացիներից: Հանրային մասնակցությունն ընդլայնելու հանձնառությունն ընկած է տեղական հանրային կյանքում քաղաքացիների մասնակցության վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականի սրտում [Rec(2001)19]: Նպատակն է տեսնել խորհրդակցությունը և մասնակցությունն անդամ բոլոր պետությունների տեղական իշխանությունների մշակույթում:»[1]



Գծապատկեր 1. Վստահության ապահովում՝ մասնակցությունը կազմակերպելու համար

«Քաղաքացիական հասարակության բոլոր խմբերի մասնակցությունը կառավարության բոլոր մակարդակներում որոշումների կայացմանը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության բարելավված և պատշաճ գործունեության, նաև ժողովրդավարական անվտանգության երաշխավորման նախապայմաններից մեկը: Այն տալիս է կարևորագույն հարցերի շուրջ բաց երկխոսության հնարավորություն, ինչն էլ հանգեցնում է իշխանությունների կողմից ավելի որակյալ որոշումների կայացմանը և կառավարման բարելավմանը: […] Քաղաքացիական մասնակցությունը փոխլրացնում է ներկայացուցչական ժողովրդավարությունը և աջակցում վերջինիս: Քաղաքացիները, ում թվում է ասելիք ունեն քաղաքականության ընդհանուր բանավեճում և ամենօրյա որոշումներում ավելի մեծ հավանականությամբ կընդունեն կայացված որոշումները և,

1 Եվրոպայի խորհուրդ, CDLR. (2008). C.L.E.A.R. գործիք՝ վերջնական տարբերակ [CDLR(2008)42], Եխ. Ստրասբուրգ, էջ 6, հասանելի է՝ https://wcd.coe.int/ViewDoc.jsp?p=&id=2062269&Site=&BackColorInternet=B9BDEE&BackColorIntranet=FFCD4F&BackColorLogged=FFC679

ընդհանուր առմամբ, կվստահեն իրենց ընտրված ներկայացուցիչներին: Հետևաբար, չափազանց կարևոր է, որ անհատները, հասարակական կազմակերպությունները և ընդհանուր քաղաքացիական հասարակությունը ներգրավված լինեն հանրային գործերի իրականացմանը և զգան, որ լիազորված են դա անել:»[2]

Տեղական լավ կառավարում իրականացնելու նպատակով քաղաքացիական մասնակցության արդյունավետ մեխանիզմների կիրառումը ենթադրում է, որ շահակիրների ներգրավումը պետք է խթանվի ներառական և թափանցիկ եղանակով: Արդյունավետ մասնակցությունը ենթադրում է նաև, որ բոլոր հանգամանքներում և որոշումների կայացման բոլոր փուլերին մասնակցում են բոլորը: Բոլորի առջև որոշումների կայացման գործընթացները բացելը նշանակում է արձագանքել բոլորին, ներառել յուրաքանչյուր հասկացություն և միտք դիտարկվող ռազմավարության կամ քաղաքականության մշակման աշխատանքներում, հարգել փոխադարձ վստահության համաձայնությունը, որը ձեռք է բերվել մասնակցային գործընթացի մեկնարկին: Սա հնարավոր դարձնելու համար (այսինքն՝ շահակիրների տեսանկյունը նոր քաղաքականության/ռազմավարության նախագծում ներառելու հնարավորություն ստեղծելու համար) արդյունավետ մասնակցությունը ենթադրում է ներգրավելիք շահակիրների և յուրաքանչյուրի ներգրավման մակարդակի մանրակրկիտ պլանավորում՝ դիտարկվող թեմայի վերաբերյալ որոշումների կայացման յուրաքանչյուր փուլի համար: Այս գործիքակազմի նպատակն է ՏԻՄ-երին տրամադրել «հանրային գործերի կատարման» շրջանակում կայուն մասնակցության պլանավորման և իրականացման գործիքներ:

Եվրոպայի խորհուրդն ակտիվորեն ներգրավված է քաղաքացիական մասնակցության՝ որպես ժողովրդավարության առանցքային արժեքի խթանման աշխատանքներում: Անդամ պետություններում քաղաքացիական մասնակցությունը խրախուսելու և հզորացնելու ջանքերը հիմնված են հետևյալ փաստաթղթերի վրա.

- Տեղական ինքնակառավարման խարտիա (CETS 122)
- «Տեղական մակարդակում հանրային կյանքում օտարերկրացիների մասնակցության մասին» եվրոպական կոնվենցիա (CETS 144)
- Տեղական հանրային կյանքում քաղաքացիների մասնակցության մասին Նախարարների կոմիտեի հանձնարարականներն անդամ պետություններին (CM/Rec(2001)19E)
- Տեղական և տարածաշրջանային մակարդակում մասնակցության և մասնակցության քաղաքականությունների գնահատման, աուդիտի և մշտադիտարկման մասին հանձնարարականներ (2009)
- C.L.E.A.R. գործիքի մշակում (2008)

2 Եվրոպայի խորհուրդ, Քարտուղարության կողմից լրամշակած նախագծի տեքստ, որտեղ հաշվի են առնված Խորհրդի Ժողովրդավարության և կառավարման հարցերով միջկառավարական կոմիտեի (ԺԿԵԿ, անգլ.՝ CDDG)՝ 2016թ նոյեմբերի 14-15 նիստի առաջարկությունները, Քաղաքացիական մասնակցության ուղեցույց:

- Անդրսահմանային կառավարման համակարգերում քաղաքացիական մասնակցությունն ընդլայնելու գործիքակազմի մշակում. «Անդրսահմանային կառավարմանը քաղաքացիների մասնակցության եվրոպական փորձ» (2015)
- Քաղաքացիական մասնակցության ուղեցույցների մշակում, որոնք լրամշակում են Քաղաքացիական մասնակցության սկզբունքները (այսինքն՝ 7 հիմնական սկզբունքները) (2016)

Գործիքակազմի նպատակն է ներառել այս հասկացություններն ու հանձնարարականները համալիր շրջանակի, որը, քայլ առ քայլ մոտեցման միջոցով, ուղղորդում է տեղական իշխանություններին և մասնագետներին համատեքստից բխող ռազմավարությունների մշակմանն ու իրականացմանը, որոնց նպատակն է ընդլայնել համայնքի քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

Գործիքակազմի նպատակն է.

Քաղաքացիական մասնակցության դերը տեղական կառավարման մեջ

Հանուն արդյունավետ և ներգործուն տեղական կառավարման՝ բովանդակայնացնել քաղաքացիական մասնակցության դերը Եվրոպայի Խորհուրդի չափանիշն երի և շրջանակների համաձայն

Հասկանալ մասնակցության մակարդակը տեղական համատեքստերում

Օգնել ՏԻՄ-երին հասկանալ իրենց համայնքների ընթացիկ համատեքստը և որոշումների կայացման գործընթացում յուրաքանչյուր շահակիրի իրական ներգրավման ներուժը

Աջակցել մասնակցությունը խթանող ռազմավարությունների ընդունմանը

Ուղղորդել ՏԻՄ-երին որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերում ներգրավման տարբեր մակարդակների համար առանձին ռազմավարությունների և գործողությունների ընտրության հարցում:

Գծապատկեր 2. Գործիքակազմի նպատակները

1.2. ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Գործիքակազմը բաղկացած է հետևյալ երեք բաժիններից.

- Եվրոպայի խորհրդի՝ քաղաքացիական մասնակցության սկզբունքները սահմանող հիմնական շրջանակների համառոտ հավաքածու,
- Գործառնական ցուցումներ առ այն, թե ինչպես կիրառել գործիքը

մասնակցության հանդեպ ընդհանուր համայնքի հակվածությունը հասկանալու, նաև կոնկրետ թեմային առնչվող մասնակցային գործընթացում յուրաքանչյուր շահակիրի ներգրավման ներուժը մանրամասն վերլուծելու համար,

- Զանազան շահակիրների ներգրավման ներուժի գնահատումից ելնելով նրանց մասնակցության գործընթացները ակտիվացնելու և մասնակցության մակարդակը բարելավելու ռազմավարությունների ակնարկ:

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2.1. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սույն բաժնի նպատակն է ներկայացնել Եվրոպայի խորհրդի՝ քաղաքական որոշումների կայացմանն առնչվող ուղեցույցների և շրջանակների ամփոփ նկարագիրը:

Տվյալ աշխատանքը բխում է Եվրոպայի խորհրդի կողմից քաղաքացիական մասնակցության վերջին տարիներին սահմանած շրջանակներից և սկզբունքներից:

Գործիքակազմի հիմքում ընկած հիմնական հենասյուներն են.



Գծապատկեր 3. Գործիքակազմի տեսական հենասյուները

Գործիքը նախատեսված է որպես այս փաստաթղթերի շարունակություն և քայլ առաջ՝ քաղաքացիական մասնակցության սկզբունքների արդյունավետ իրականացման ուղղությամբ:

2.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ[3]

Հաջորդող պարբերություններում ներկայացված են գործիքակազմում հանդիպող հիմնական հասկացությունների որոշ օգտակար սահմանումներ:



Գծապատկեր 4. Քաղաքացիական մասնակցության հիմնական հասկացությունները

2.2.1. Համայնք

«Համայնքը» կարելի է սահմանել որպես նույն վայրում բնակվող և փոխգործակցող մարդկանց խումբ: Համայնքը երբեմն սահմանվում է որպես «հասարակության» համեմատ ավելի սերտ ու համախմբված սոցիալական միավոր՝ ելնելով համայնքում առկա «միասնական կամքից»: Կոմունիտարիզմը բացատրում է համայնքների առաջացումը նախահամայնքային անհատների կամավոր գործողությունների արդյունք: Այն շեշտադրում է համայնքի դերն անհատների և նրանց ինքնության սահմանման ու ձևավորման հարցում: Կոմունիտարիստական տեսանկյունից՝ արժեքները և համոզումները չեն կարող գոյություն ունենալ այն հանրային տիրույթից դուրս, ուր տեղի է ունենում բանավեճը: Սա ենթադրում է, որ համայնքը մասնակցության պայման է և արդյունք: Դա

3 Եվրոպայի խորհուրդ, CDLR. (2008). C.L.E.A.R. գործիք՝ վերջնական տարբերակ [CDLR(2008)42], ԵՏ. Ստրասբուրգ, էջ 6: Տեղադրված է՝ https://wcd.coe.int/ViewDoc.jsp?p=&id=2062269&Site=&BackColorInternet=B9BDEE&BackColorIntranet=FFCD4F&BackColorLogged=FFC679:
Եվրոպայի խորհուրդ, Քարտուղարության կողմից լրամշակված նախագծի տեքստ, որտեղ հաշվի են առնված Խորհրդի Ժողովրդավարության և կառավարման հարցերով միջկառավարական կոմիտեի (ԺԿԵԿ, անգլ.՝ CDDG)՝ 2016թ նոյեմբերի 14-15 նիստի առաջարկությունները, Քաղաքացիական մասնակցության ուղեցույց:

ստեղծում է «համայնքի զգացում», որը հոգեբանական տեսանկյունից պահանջում է.

- անդամություն,
- ազդեցություն,
- ինտեգրում և կարիքների բավարարում,
- ընդհանուր զգացական կապ:

2.2.2. Քաղաքացիական հասարակություն

Քաղաքացիական հասարակությունը բաղկացած է քաղաքացիական և սոցիալական կամավոր կազմակերպությունների և հաստատությունների ամբողջությունից, որոնք հանդիսանում են ֆունկցիոնալ հասարակության հիմքը, և տարբերվում է պետության՝ ուժի վրա հիմնված կառույցներից (անկախ տվյալ պետության քաղաքական համակարգի), և առևտրային հաստատություններից::

2.2.3. Քաղաքացիական կազմակերպություններ

Քաղաքացիական կազմակերպությունները կառույցներ են, որոնց միջոցով կազմակերպվում է քաղաքացիական հասարակությունը: Այն բաղկացած է ՀԿ-ներից՝ խմբերից, միավորումներից, շարժումներից: Այս դեպքում սահմանումը հակադրում է նրանց պետական կազմակերպություններին:

2.2.4. Քաղաքացիական գործունեություն

Քաղաքացիական կազմակերպությունները կառույցներ են, որոնց միջոցով կազմակերպվում է քաղաքացիական հասարակությունը: Այն բաղկացած է ՀԿ-ներից՝ խմբերից, միավորումներից, շարժումներից: Այս դեպքում սահմանումը հակադրում է նրանց պետական կազմակերպություններին:

2.2.5. Սոցիալական կապիտալ

Սոցիալական կապիտալն ակնարկում է բոլոր «սոցիալական ցանցերի» (այսինքն՝ ում մարդիկ ճանաչում են) հավաքական արժեքին և մեկը մյուսի համար ինչ-որ բաներ անելու ցանկություններին, որոնք առաջանում են այս ցանցերից (այսինքն՝ փոխադարձության նորմեր): Ընդհանուր խնդիրներ լուծելու համար մարդիկ կարող են ապավինել սոցիալական վստահության, նորմերի և ցանցերի պաշարներին:

2.2.6. Որոշումների կայացման գործընթաց

Որոշումների կայացման գործընթացն ակնարկում է համապատասխան լիազորություններով օժտված իշխանության մարմնի կողմից քաղաքականության, ռազմավարության, օրենքի, կարգի կամ այլ գործըն-

թացի մշակմանը, ընդունմանը, իրականացմանը, գնահատմանը և վերաձևակերպմանը, որի շրջանակում կայացվում է որոշում, որն ազդում է հանրության կամ դրա մի հատվածի վրա:

2.2.7. Ընդհանուր քաղաքացիական հասարակություն (լայն իմաստով)

Քաղաքացիական հասարակությունը լայն իմաստով ակնարկում է կազմակերպված, նվազ կազմակերպված անհատների հավաքակազմին և ոչ ֆորմալ խմբերին (այդ թվում՝ ՀԿ-ները, մասնագիտական և տեղական կազմակերպությունները, համալսարաններն ու հետազոտական կենտրոնները, կրոնական և ոչ հարանվանական կազմակերպությունները, մարդու իրավունքների պաշտպանները, դիտորդները և ազդարարները), որոնց միջոցով նրանք իրենց նպաստն են բերում հասարակությանը կամ արտահայտում իրենց տեսակետներն ու կարծիքները:

2.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ[4]

«Քաղաքացիական մասնակցություն նշանակում է հանրային իշխանությունների կողմից անհատների, ՀԿ-ների և ընդհանուր քաղաքացիական հասարակության ներգրավումը որոշումների կայացման գործընթացներում:[5] Քաղաքացիական մասնակցությունը քաղաքական որոշումների կայացմանը ձգտում է ներկայացնել, հավաքել և փոխանցել անհատների տեսակետները՝ ուղղակի կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) միջոցով, ապահովելով կարևոր փաստացի և ապացուցողական տեղեկատվության և տեսանկյունների փոխանակում, որը տեղեկացված է դարձնում որոշումների կայացման գործընթացը և ապահովում հանրային իրական կարիքների բավարարում:[6]

Այդուհանդերձ, մարդկանց մասնակից դարձնելը դյուրին գործ չէ: Հաճախ խոչընդոտներ են առաջանում մասնակցության կարողությունների կամ քաղաքական կուսակցությունների և խնդիրների հետ կապի բացակայության պատճառով:

Սա կարող է պայմանավորվել այն հանգամանքով, որ քաղաքացիները, այդ թվում՝ քաղաքական գործիչները, լավ տեղեկացված չեն մասնակցության հետևանքների և համայնքի ժողովրդավարական կյանքում

4 ISIG. (2015), Անդրսահմանային կառավարմանը քաղաքացիների մասնակցության եվրոպական փորձ, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ: տեղադրված է https://rm.coe.int/1680686b1b

5 Եվրոպայի խորհուրդ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԻԾ, վերանայված և հաստատված CDDG-ի կողմից 2017թ մայիսի 11-ին՝ Նախարարների կոմիտեի հաստատմանը ներկայացնելու նպատակով, էջ.25

6 Նույնը:

իրենց հնարավոր դերի մասին: Առանց համապատասխան գիտելիքի՝ քաղաքացիական հասարակությունը չի կարող ակտիվորեն ինտեգրել մասնակցային մոտեցումն իրենց առօրյա խոսքում, հետևաբար նաև տեղական ինքնության մեջ:

2.3.1. Տեղական հանրային կյանքում քաղաքացիների մասնակցության մասին Նախարարների կոմիտեի հանձնարարականներն անդամ պետություններին

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 2001թ նախանշեց «տեղական ժողովրդավարական քաղաքականության հիմնական սկզբունքները» և դրան առնչվող «տեղական հանրային կյանքում քաղաքացիների մասնակցությունը խրախուսող և ամրապնդող քայլերն ու միջոցառումները»[7]: Մասնավորապես, հաշվի առնելով, որ.

- երկխոսությունը քաղաքացիների և ընտրված տեղական ներկայացուցիչների միջև կենսական է տեղական ժողովրդավարության համար, քանի որ ամրապնդում է տեղական ժողովրդավարական հաստատությունների լեգիտիմությունը և դրանց գործունեության արդյունավետությունը. և
- ստորակարգության սկզբունքի համաձայն, տեղական իշխանություններն ունեն և պետք է ստանձնեն առաջատար դեր քաղաքացիների մասնակցությունը խթանելու գործում, նաև որ ցանկացած «տեղական ժողովրդավարական մասնակցության քաղաքականության» հաջողությունը պայմանավորված է այդ իշխանությունների հանձնառությունով,

հանձնարարականը կոչ է անում անդամ պետությունների կառավարություններին.

- մշակել քաղաքականություն, որն ընդգրկում է տեղական և, եթե կիրառելի է, տարածքային իշխանությունները և նախատեսում է խրախուսել քաղաքացիների մասնակցությունը տեղական հանրային կյանքին.
- հաստատել սույն քաղաքականության համատեքստում և իրենց լիազորություններից բխող միջոցառումներ՝ նպատակ ունենալով, մասնավորապես, բարելավել մասնակցության իրավական դաշտը և ապահովել, որ ներպետական օրենսդրությունը և ենթաօրենսդրական ակտերը հնարավորություն ընձեռեն տեղական և տարածքային իշխանություններին կիրառել մասնակցային գործիքների լայն ընտրանի. և
- պատշաճ կերպով հրավիրել տեղական և տարածքային իշխանություններին հանձն առնել տեղական հանրային կյանքին քաղաքացիների մասնակցությունը խթանող քաղաքականության արդյունավետ իրականացումը և բարելավել տեղական հանրային

7 Եվրոպայի խորհուրդ, CM/Rec (2001)19E. Հավելվածներ 1 և 2. ԵԽ. Ստրասբուրգ

կյանքին քաղաքացիների մասնակցությանն առնչվող տեղական կարգերն ու գործնական մեխանիզմները, ինչպես նաև իրենց լիազորությունների շրջանակում ձեռնարկել քաղաքացիների մասնակցությունը խթանող այլ միջոցներ:[8]

2.3.2. C.L.E.A.R. տեղական մակարդակում քաղաքացիների մասնակցության քննական (աուդիտի) գործիք

Եվրոպայի խորհուրդը 2008թ. հրապարակեց C.L.E.A.R. գործիքը[9], որի նպատակն էր օգնել հանրային իշխանություններին հասկանալ մասնակցության հարցում իրենց համայնքների հակվածությունը և կարողությունը, նաև այդ գործընթացին աջակցելու համար սեփական ռեսուրսները:

Հաջորդող պարբերություններում ներկայացնում են C.L.E.A.R.-ի հիմքում ընկած հիմնական սկզբունքները:



Գծապատկեր 5. C.L.E.A.R.-ի հիմնական սկզբունքները

2.3.2.1. Լեգիտիմացում և հաշվետվողականություն

Տեղական իշխանությունները չեն կարող հանդես գալ որպես համայնքի ազդեցիկ առաջնորդներ, եթե չունեն ժողովրդի աջակցությունը: Ավելի լայն իմաստով, հարկ է ամրապնդել հանրության վստահությունը քաղաքական ինստիտուտների հանդեպ, իսկ քաղաքականությունների և գործելակերպի համար ակտիվ քաղաքացիների հավանությանը հասնելը դա անելու ամենաազդեցիկ եղանակն է: Ժողովրդավարության խորհրդակցական տարրերը ձայն են տալիս քաղաքացիներին, ստեղծում են երկարատև հավատարմություն քաղաքական համակարգին: Կարևոր չէ որ քաղաքացիների առանձին ձայները որոշիչ լինեն: Մեծամասնական որոշումը՝ ժողովրդավարության մաս է: Սակայն կարևոր է, որ մեկ անհատի ձայնն էլ հաշվի է առնվել:

8 Եվրոպայի խորհուրդ, CM/Rec (2001)19E. ԵԽ. Ստրասբուրգ
9 Եվրոպայի խորհուրդ, CDLR. (2008). C.L.E.A.R. գործիք՝ վերջնական տարբերակ [CDLR(2008)42], ԵԽ. Ստրասբուրգ, էջ 7

2.3.2.2. Սովորել արձագանքել քաղաքացիների կարիքներին

Հաղորդակցության արդյունավետ ուղիները կենսական են տեղական իշխանությունների համար ցանկալի սոցիալական և տնտեսական արդյունքների հասնելու համար: Մասնակցությունը հնարավոր է դարձնում ավելի արդյունավետ ուսումնառությունն ու որակյալ որոշումների կայացումը:

2.3.2.3. Խթանել տեղական հասպատությունների սեփականության զգացումը

Մասնակցությունն ունի ներհատուկ արժեք: Լավ է, որ մարդիկ ակտիվորեն մասնակցում են իրենց համայնքներում որոշումների կայացմանը: Լիարժեք քաղաքացի լինել նշանակում է ասելիք ունենալ այն որոշումների դեպքում, որոնց ազդակիրն ես: Լավ կառավարումը միայն լավ արդյունքներ ապահովելու հարց չէ: Բոլոր մակարդակներում իշխանությունները պետք է ավելի շուտ ձգտեն իրենց քաղաքականությունների և ծրագրերի համար ստանալ քաղաքացիների ակտիվ հավանությունը, քան նրանց լուռ համաձայնությունը:

Որոշումների կայացման մասնակցային գործընթացներում իրենց քաղաքացիներին ներգրավելու նպատակ ունեցող պետական բոլոր իշխանություններին այս ընդհանուր սկզբունքները հասու դարձնելու նպատակով Եվրոպայի խորհուրդը մշակել է մի շարք առանցքային հարցեր, որոնք ծառայելու են նախնական ինքնագնահատման համար: Այս ուղղորդող հարցերն առնչվում են վերլուծության 5 ոլորտներին, որոնք մարմնավորում է C.L.E.A.R. հապավումը:

- Կարող են անել՝ քաղաքացիներն ունեն մասնակցելու ռեսուրսներ, հմտություններ և գիտելիք,
- Ցանկանում են՝ քաղաքացիներն ունեն կապվածության զգացում, որը հզորացնում է մասնակցությունը,
- Հնարավորություն ունեն՝ քաղաքացիներին տրվում է մասնակցելու հնարավորություն,
- Խնդրել են՝ քաղաքացիներին ներգրավել են պաշտոնական կառույցներ կամ կամավոր խմբեր,
- Արձագանքել են՝ քաղաքացիները տեսնում են սեփական տեսանկյունները հաշվի առնելու ապացույցներ:

C.L.E.A.R.-ը գործում է վերոնշյալ յուրաքանչյուր բաժնին վերաբերող առանցքային հարցերի շարքի միջոցով: Այդ հարցերին պատասխանելով պետական մարմինները կարող են գնահատել պետական մարմնի առօրյա գործունեության շրջանակներում մասնակցային գործընթացներ սկսելու և զարգացնելու սեփական և իրենց համայնքների ուժեղ և թույլ կողմերը:

2.3.3. Քաղաքացիական մասնակցության ուղեցույց

Եվրոպայի խորհուրդը 2016թ. լրացուցիչ մշակեց չափորոշիչներ, որոնք անհրաժեշտ էին պատշաճ տեղական կառավարման հասնելու նպատակով քաղաքացիական մասնակցությունը սահմանելու համար: Այս աշխատանքի արդյունքն էր Քաղաքացիական մասնակցության ուղեցույցը (2016թ)[10], որը սահմանում էր մասնակցության հիմնական սկզբունքները: Պատշաճ կերպով քաղաքացիական մասնակցության գործընթաց կոչվելու և տեղական կառավարման վրա դրական ազդելու համար տվյալ գործընթացի հիմքում պետք է լինեն՝

1. Հարգանք բոլոր դերակատարների հանդեպ, որը հիմքն է ազնիվ փոխհարաբերության և փոխվստահության.
2. Հարգանք ՀԿ-ների անկախության հանդեպ, նույնիսկ, երբ նրանց և իշխանությունների կարծիքները տարբերվում են միմյանցից.
3. Անկեղծություն, թափանցիկություն և հաշվետվողականություն, ինչը նշանակում է, որ քաղաքացիներին պետք է տրամադրվի որոշումների կայացման գործընթացին և մասնակցության ընթացակարգերին վերաբերող ամենաթարմ, համապարփակ տեղեկատվությունը.
4. Պատասխան արձագանք, որն ապահովում է պատշաճ հետադարձ կապ այն իմաստով, որ բոլոր փուլերում պետք է ժամանակին տրամադրվի համարժեք տեղեկատվություն, որպեսզի քաղաքացիները հնարավորություն ունենան էական ներդրում կատարել որոշումների կայացման գործընթացի հնարավորինս վաղ փուլից.
5. Խտրականության բացառում և ներառականություն, որպեսզի հնչեն ու հաշվի առնվեն բոլոր կարծիքները, այդ թվում՝ նվազ արտոնյալ ու խոցելի խմբերինը՝ ապահովելով համարժեք միջոցների և ուղիների օգտագործումը.
6. Գենդերային հավասարություն և բոլոր խմբերի հավասար մասնակցություն, այդ թվում՝ հատուկ շահեր և կարիքներ ունեցող խմբերինը, որոնց շարքում են երիտասարդները, տարեցները, հաշմանդամները, փոքրամասնությունները և այլոք: Այդ նպատակով իշխանություններից պահանջվում է հայցել հնարավորինս լայն ներդրում.
7. Մասնակցության գործընթացի մատչելիություն, օգտագործելով պարզ լեզու և մասնակցության պատշաճ միջոցներ՝ արտացանց կամ առցանց և ցանկացած սարքի կիրառմամբ:

---

10 Եվրոպայի խորհուրդ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԻԾ, վերանայված և հաստատված CDDG-ի կողմից 2017թ մայիսի 11-ին՝ Նախարարների կոմիտեի հաստատմանը ներկայացնելու նպատակով:

Գծապատկեր 6. Քաղաքացիների ներգրավվածության պարադիգմաներ

- Ինչպես ներկայացված է վերոնշյալ գծապատկերում, քաղաքացիների ներգրավումը քաղաքականության մշակման գործընթացներում ավանդապես կապված է երկու հիմնական պարադիգմաների հետ՝
- Վերևից ներքև մոտեցում (ուր քաղաքականությունները իջեցվում են որոշում կայացնողներից քաղաքացիներին), որը հիմնված է խորհրդակցական ժողովրդավարության և ներկայացուցչության սկզբունքների վրա.
- Ներքևից վերև մոտեցում, որը մասնակցային ժողովրդավարության արտահայտություն է և ենթադրում է անհատների ուղղակի մասնակցությունը քաղաքական որոշումների և քաղաքականությունների ընդունմանը:

Այս հասկացությունները ոչ հակադիր են, ոչ էլ իրարամերժ, այլ ներկայացնում են շրջանաձև գործընթացի երկու ծայրերը, որը նախաձեռնում են քաղաքացիները՝ ներկայացուցչության (այսինքն՝ քվեարկության) կամ ուղղակի մասնակցության միջոցով: Թեպետ երկու մոտեցումներն էլ երաշխավորում են քաղաքացիների կարծիքների ներկայացումը՝ նրանց պահանջների հաջող ինտեգրումը քաղաքականության մշակման գործընթացում, որը բխում է ուղղակի մասնակցությունից, ունի լրացուցիչ արժեք վստահության և սեփականության զգացումի իմաստով:

Երկու դեպքում էլ քաղաքացիների մասնակցությունը միշտ բնութագրում են երկու անհրաժեշտ հատկանիշներ (Pellizzoni 2008, 93-116), որոնք են՝

- Մասնակցելու պատրաստակամությունը (անհատի ներսից (էնդոգեն), որի բացակայությունը կարող է պայմանավորված լինել մասնակցային գործընթացի հանդեպ վստահության ցածր մակարդակով կամ ուղղակի ներգրավման գործընթացին պատկանելու/պատրաստ լինելու ցածր գիտակցությամբ).
- Մասնակցելու հնարավորությունը (անհատից դուրս է (էքսոգեն) և որոշվում է հաստատությունների կողմից):

Սա նշանակում է, որ ոչ բոլոր քաղաքացիներն են մշտապես ներկայացնում համապատասխան շահակիրներին, ովքեր, անկախ ամեն բանից, պետք է ներգրավվեն որոշումների կայացման գործընթացում:

Քաղաքացիական արդյունավետ մասնակցության հասնելու համար, իշխանությունները պետք է տեղեկացված լինեն իրենց համայնքի շահակիրների մասին, սակայն հասկանան նաև, որ ոչ պարտադիր է, ոչ էլ ցանկալի մշտապես ներգրավել բոլոր շահակիրներին:

Քաղաքացիները, ՔՀԿ-ները և ընդհանուր քաղաքացիական հասարակությունը ներկայացնում են շահակիրներին, որոնց հետ գործակցում է ՏԻՄ-ը: Նրանք հետաքրքրված են ՏԻՄ-ի գործունեությամբ, տարածքով ու համայնքով, ուր գործում են, քանի որ հանդիսանում են դրա ազդակիրը կամ էլ կարող են դրական կամ բացասական ազդել վրան:

3. ԳՈՐԾԻՔԸ

3.1. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նախորդ գլխում ակնհայտ դարձավ, որ մասնակցությունը չունի «մեկ չափը հարմար է բոլորին» լուծումը: Հաջողված մասնակցության հնարավոր չէ հասնել ստանդարտ մեթոդաբանությամբ, որը կիրառելի է որոշումների կայացման բոլոր գործընթացներին և բոլոր շահակիրներին:

Թեպետ բոլոր շահակիրների համար և նրանց հանդեպ հարկ է ապահովել թափանցիկություն, տեղեկատվության մատչելիություն և վստահության ամրապնդում (պահպանելով ԵԽ-ի սահմանած քաղաքացիական մասնակցության 1 և 3 սկզբունքները[11])՝ արդյունավետ մասնակցությունը պահանջում է հստակ հասկանալ համատեքստը, որն առնչվում է յուրաքանչյուր շահակիրի ներգրավման ներուժին: Բացի այդ քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացմանը չպետք է սահմանափակվի մեկ տարբերակով: Մասնակցության ծավալն ու մեթո-

11 Եվրոպայի խորհուրդ, Քարտուղարության կողմից լրամշակված նախագծի տեքստ, որտեղ հաշվի են առնված CDDG-ի՝ 2016թ նոյեմբերի 14-15 նիստի առաջարկությունները, Քաղաքացիական մասնակցության ուղեցույց, էջ. 26-27

դը պետք է քննարկվող խնդրին համաչափ լինեն:[12]

Այս տեսանկյունից մասնակցությունը պետք է հիմնված լինի շահակիրների մանրակրկիտ քարտեզագրման վրա, որը հնարավորություն է տալիս գնահատել յուրաքանչյուրի հնարավոր ներգրավման մակարդակը՝ ելնելով որոշումների կայացման տվյալ գործընթացի նպատակից, դրա թեմայից, յուրաքանչյուր շահակիրի ռեսուրսներից և շահերից:

3.2. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Նախատեսվող մասնակցային գործընթացին նախապատրաստվելու փուլում շահակիրներին արդյունավետ կերպով քարտեզագրելու համար իշխանությունները կարող են օգտվել սույն աշխատության մեջ մշակված գործիքից: Այն ինքնագնահատման գործիք է (քանի որ իշխանությունները կարող են օգտագործել այն ավտոնոմ կերպով՝ հիմնվելով սեփական գիտելիքի և իրենց համայնքի սեփական ընկալման վրա), որը կազմվել է C.L.E.A.R.-ում առաջադրված ուղղորդիչ հարցերից, և հանրային դիսկուրսում հնարավորինս մեծ թվով ձայներ (ինչպես սահմանված է ուղեցույցներում) ներառելու միջոց:

Գործիքը կազմված է երկու մասից.

Համայնքի գնահատում

C.L.E.A.R.-ի շրջանակից բխող և ինքնագնահատման գործիքի վերածված Համայնքի գնահատման բաղադրիչ, որի նպատակն է բացահայտել մասնակցության վրա ազդող, համայնքին ներհատուկ ամենակարևոր ոլորտները

Շահակիրների գնահատումՏ համատեքստերում

Դիտարկվող որոշումների կայացման գործընթացի շրջանակում յուրաքանչյուր շահակիրին քարտեզագրելու բաղադրիչ (ելնելով իշխանության համար նրանց կարևորությունից և մասնակցության հարցում ենթադրյալ հետաքրքրությունից)

Գծապատկեր 7. Գործիքի կառուցվածքը

Համայնքի համատեքստայնացումը և շահակիրների քարտեզագրման գործընթացը բխում են մասնակցության համար կարևոր հետևյալ ոլորտների վերլուծությունից և վերցված են C.L.E.A.R.[13] գործիքից՝

- **Սոցիալական կապիտալ** – ակնարկում է համայնքի սոցիալական կենսունակությանը, ինչպես նաև սոցիալական կյանքին և միջոցառումներին մասնակցելու առանձին շահակիրների կարողությանը/պատրաստակամությանը.

12 Նույնը, էջ. 28
13 Եվրոպայի խորհուրդ, CDLR (2008). C.L.E.A.R. Վերջնական տարբերակ

- **Տնտեսական կապիտալ** – ակնարկում է համայնքի տնտեսական առողջությանը և յուրաքանչյուր շահակիրի տնտեսական ռեսուրսներին/կարողությանը.
- **Քաղաքական կապիտալ** – ակնարկում է ընդհանուր համայնքի ներսում քաղաքական ներգրավվածությանը և առանձին շահակիրների ներգրավվածությանը քաղաքական կյանքում.
- **Մարդկային կապիտալ** – ակնարկում է ընդհանուր համայնքի գիտելիքին/հմտություններին, ինչպես նաև յուրաքանչյուր շահակիրի՝ առանձին թեմաներին և մասնակցության տիրույթին առնչվող առանձնահատուկ կարողություններին:

Գործիքը քաղաքականություն մշակողների համար ձեռնարկ է, որն օգնում է նրանց համակարգել մասնակցային գործընթացներում ներգրավվելու սեփական համայնքի ընդհանուր հակվածությունը: Այն օգնում է նաև գնահատել զանազան թեմաներում շահակիրների տարբեր դասակարգերի հնարավոր ներգրավումը և արդյունքում սահմանել բոլորի կայուն ներգրավման ռազմավարություններ՝ քաղաքացիական մասնակցության սկզբունքներին համահունչ՝[14]



Գծապատկեր 8. Մասնակցության համար կարևոր ոլորտներ

14 Եվրոպայի խորհուրդ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԻԾ, վերանայված և հաստատված CDDG-ի կողմից 2017թ մայիսի 11-ին՝ Նախարարների կոմիտեի հաստատմանը ներկայացնելու նպատակով, էջ. 26-27

- Խրախուսելով և խթանելով փոխադարձ հարգանք և վստահություն շահակիրի, քաղաքացիների և տեղական իշխանությունների միջև (1-ին Սկզբունքի համաձայն),
- Ապահովելով ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների ներգրավումը՝ ելնելով տվյալ գործընթացին մասնակցելու նրանց կարողություններից և հետաքրքրությունից, այլ ոչ թե իշխանությունների տեսակետներին «մոտ» լինելուց (2-րդ Սկզբունքի համաձայն),
- Ապահովելով շահակիրների ներգրավման՝ բոլոր փուլերում հետագծելի գործընթաց, դրանով իսկ հարգելով ազնվության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքը (3-րդ Սկզբունքի համաձայն),
- Ներդնելով շահակիրների տարբեր դասակարգերի համար հետադարձ կապի և հաղորդակցության համապատասխան ռազմավարություններ՝ երաշխավորելով բոլորի տեղեկացվածությունն ըստ իրենց կարիքների և պահանջների (4-րդ Սկզբունքի համաձայն).
- Նույնացնելով մասնակցության իրագործելի մակարդակներ, մեթոդաբանություններ և միջոցներ շահակիրների տարբեր դասակարգերի և առանձին շահակիրների համար՝ երաշխավորելով բոլորի, մասնավորապես ամենախոցելի և սովորաբար դուրս մնացող, ինչպես նաև առանձին թեմաներում հատուկ կարիքներ/շահեր ունեցող խմբերի հասանելիությունը (5-րդ, 6-րդ և 7-րդ Սկզբունքների համաձայն):

3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Որոշումների կայացման մասնակցային գործընթացն արդյունավետ համատեքստայնացնելու համար նախևառաջ կարևոր է գնահատել ներգրավված համայնքի ընդհանուր դիրքորոշումը մասնակցության հանդեպ:

Համայնքը ձևավորում են սոցիալական փոփոխականները (բնակչության միջին տարիք, քաղաքացիական հասարակության ակտիվության մակարդակ, տեղեկատվության մատչելիություն և այլն), տնտեսական փոփոխականները (միջին եկամուտ, ռեսուրսների բաշխում, զբաղվածության հնարավորություններ և այլն), մարդկային փոփոխականները (հմտություններ և գիտելիք, որոնք ունեն և կարող են օգտագործել/բաժնեկցել համայնքի անդամները) և քաղաքական փոփոխականները (քաղաքական ներգրավվածությունը համայնքում, որոշումների կայացման գործընթացում համայնքի մասնակցության մակարդակը և այլն): Համատեքստի քարտեզագրումը սկսելու համար սույն գնահատմանը ձեռնամուխ լինող տեղական իշխանությունները պետք է վերլուծեն իրենց համայնքների վիճակը վերոնշյալ չորս ոլորտներում:

Հետևաբար, արդյունավետ մասնակցային գործընթաց սկսելու հա-

մար կարևոր է հասկանալ ինչպես են այս փոփոխականներն ազդում տվյալ համայնքի մասնակցության հակվածության վրա:

Փոփոխականներն ըստ ոլորտների ներկայացված են և բացատրված ստորև՝

3.3.1. Սոցիալական կապիտալի փոփոխականներ

«**Սոցիալական կապիտալ**»-ի ոլորտը կազմող փոփոխականներն են՝

1. Փոփոխականներ, որոնք առնչվում են նրան՝ ինչը C.L.E.A.R. գործիքը սահմանում է որպես «ինքնություն», այսինքն՝ քաղաքացիներ համայնքին պատկանելու աստիճանը (բնակչության շարժունակության մակարդակը, համայնքի ձևավորմանն ամեն օր ակտիվորեն մասնակցելու փաստացի հնարավորությունը, ինչպես նաև տվյալ համայնքի հետ մշակութային/պատմական նույնականացումը).
   - Վերջին շրջանում քաղաք/ավան տեղափոխված բնակչությունը (վերջին 5 տարվա ընթացքում)
   - Վերջին շրջանում քաղաքից/ավանից տեղափոխված բնակչությունը (վերջին 5 տարվա ընթացքում)
   - 30-60 տարեկան բնակչության կազմում այլ քաղաք/ավան աշխատանքի գնացողներ
   - Փոքրամասնություն կազմող բնակչություն
2. «Ժողովրդագրությանը» (բնակչության տարիք) և տեղեկատվության մատչելիության հնարավորություններին առնչվող փոփոխականներ.
   - Մինչև 30 տարեկան բնակչություն (ելնելով «երիտասարդների»՝ որպես մինչև 29 տարեկանների խմբի Եվրոստատի սահմանումից)
   - Համացանցի հասանելիությամբ բնակչություն
3. Քաղաքացիական հասարակության գոյությանը և կենսունակությանն առնչվող փոփոխականներ.
   - Ակտիվ ՔՀԿ-ներ (քաղաքացիական հասարակության կազմակերպություններ)
   - Տեղական ՔՀԿ-ների անդամների կազմի տարեկան փոփոխությունը:

3.3.2. Տնտեսական կապիտալի փոփոխականներ

«**Տնտեսական կապիտալ**»-ի ոլորտը կազմող փոփոխականներն են՝

1. Փոփոխականներ, որոնք մշակվել են C.L.E.A.R.-ի «Կարող են անել» բաժնի «զբաղվածության/գործազրկության» ուղղորդիչ հարցերի հիման վրա և տրամախաչված են գենդերային հարցերին և երիտասարդությանն առնչվող խնդիրների հետ, որպեսզի արտացոլեն Քաղաքացիական մասնակցության 2016թ. ուղեցույցում սահմանված Սկզբունքները.

- Համայնքում առկա՝ մեկ շնչին ընկնող միջին եկամուտը
- Գործազրկության մակարդակ
- Երիտասարդների գործազրկության մակարդակ (մինչև 30 տարեկան)
- Իգական սեռի աշխատունակ բնակչություն

2. Փոփոխականներ, որոնք արտարկվել են C.L.E.A.R.-ի «Կարող են անել» բաժնի «սոցիալական դաս» և «ռեսուրսներ» բաժնի ուղղորդիչ հարցերից՝
   - Հնարավոր տնտեսական դժվարության մեջ տնային տնտեսություններ
   - Բացարձակ աղքատության մեջ տնային տնտեսություններ
   - Ինքնազբաղ կին աշխատողներ
   - Մինչև 30 տարեկան ինքնազբաղ աշխատողներ

3.3.3. Մարդկային կապիտալի փոփոխականներ

«**Մարդկային կապիտալ**»-ի ոլորտը կազմող փոփոխականներն են՝

1. Կրթական մակարդակին վերաբերող փոփոխականներ.
   - Ավագ դպրոցի վկայական ստացած բնակչություն (25-64 տարեկան)
   - Ավագ դպրոցի վկայական ստացած կանայք (25-64 տարեկան)
2. Քաղաքացիների հմտություններին/գիտելիքին և բնակչության կարողությունների զարգացման համար վերջինիս հասանելի ռեսուրսներին առնչվող փոփոխականներ.
   - Վերջին 15 տարվա ընթացքում դպրոցական պարտադիր կրթական ծրագրերում քաղաքացիական կրթության առարկաների առկայություն
   - Համայնքի բնակիչների արհեստավարժությունը
   - Թվային տեխնոլոգիաների հմտություններ ունեցող բնակչություն
   - Կամավորական աշխատանքներում ակտիվորեն ներգրավված բնակչություն
   - Կյանքի ամբողջ ընթացքում սովորելու (LLL) հնարավորությունների առկայություն
   - Կյանքի ամբողջ ընթացքում սովորելու (LLL) հնարավորությունների մատչելիություն

3.3.4. Քաղաքական կապիտալի փոփոխականներ

«**Քաղաքական կապիտալի**» ոլորտը կազմում են փոփոխականներ, որոնք արտարկվել են C.L.E.A.R.-ի «Ցանկանում են» բաժնի «վստահության» և «քաղաքացիության» ուղղորդիչ հարցերի շարքից.

- ՏԻՄ վերջին ընտրություններին քաղաքացիների մասնակցության մակարդակը
- Քաղաքական կյանքում ակտիվորեն ներգրավված բնակչություն

- Քաղաքական կյանքում ակտիվորեն ներգրավված կանայք
- Փոքրամասնությունների՝ քաղաքական կյանքում ներգրավված ներկայացուցիչներ
- Ավագանու կին անդամներ
- Քաղաքացիների կողմից քաղաքական բանավեճերի/միջոցառումների արժևորումը
- Քաղաքականության մշակման տեղական գործընթացում խոցելի խմբի շահերի ներկայացվածությունը
- Որոշումների կայացման նախկին մասնակցային գործընթացներում մասնակցության մակարդակը (հանրային քննարկում, լսում, համայնքային ժողով և այլն):

Գործիքի օգնությամբ սեփական համայնքներն այս փոփոխականների համեմատ գնահատելու ընթացքում տեղական իշխանությունները պետք է յուրաքանչյուր փոփոխականի համար նշեն, թե արդյո՞ք այն ազդում է մասնակցության հակվածության վրա՝

- Ծայրաստիճան դրական
- Դրական
- Բացասական
- Ծայրաստիճան բացասական

Կամ փոփոխականը չունի որևէ ազդեցություն համայնքում մասնակցության մակարդակի ձևավորման վրա՝ «Վերաբերելի չէ»:

«Համայնքի մասնակցության» աղյուսակը լրացնելու համար չկան նախապես որոշված ճիշտ կամ սխալ ենթադրություններ: Յուրաքանչյուր տեղական իշխանություն պետք է մեկնաբանի սեփական տվյալներն ըստ առանձնահատուկ և յուրահատուկ ազդեցության, որը նման տարրերն ունեն մասնակցությունը խթանելու կամ սահմանափակելու գործում: Յուրաքանչյուր ոլորտից բերված են օրինակներ, որոնք պարզաբանում են ինչպես տեղական իշխանությունները, որոնք ներկայացնում են նմանատիպ համայնքներ, կարող են տարբեր կերպով լրացնել «Համայնքի գնահատման» աղյուսակը:

3.3.5. Սոցիալական կապիտալի ոլորտ

ՔՀԿ-ների մեծ թիվը կարող է խոչընդոտել մասնակցությունը որոշակի համայնքում, քանի որ այդ ՔՀԿ-ները կարող են մենաշնորհ հաստատել մասնակցային ֆորումների վրա՝ բացառելով մյուսների ներգրավման հնարավորությունը: Մեկ այլ համայնքում նույն գործոնը կարող է ընդհանրապես չազդել որոշումների կայացման գործընթացում նոր քաղաքացիների ներգրավման վրա: Հետևաբար, նման օբյեկտիվ տվյալներով (այսինքն՝ ՔՀԿ-ների բարձր կենտրոնացում)՝ երկու տարբեր համայնքների երկու ներկայացուցիչներ կարող են նույն փոփոխականը համարել մասնակցության վրա «ծայրաստիճան բացասաբար» ազդող (առաջին օրինակում) կամ որպես «վերաբերելի չէ» (երկրորդ օրինակում):

	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
1	Վերջին շրջանում քաղաք/ավան տեղափոխված բնակչությունը (վերջին 5 տարվա ընթացքում)					
2	Վերջին շրջանում քաղաքից/ավանից տեղափոխված բնակչությունը (վերջին 5 տարվա ընթացքում)					
3	30-60 տարեկան բնակչության կազմում այլ քաղաք/ավան աշխատանքի գնացողներ					
4	Փոքրամասնություն կազմող բնակչություն					
5	Մինչև 30 տարեկան բնակչություն					
6	Համացանցի հասանելիությամբ բնակչություն					
7	Ակտիվ ՔՀԿ-ներ					
8	Տեղական ՔՀԿ-ների անդամների կազմի տարեկան փոփոխությունը					

Աղյուսակ 1. «Համայնքի գնահատման» աղյուսակում սոցիալական կապիտալի գնահատման բաժին

3.3.6. Տնտեսական կապիտալի ոլորտ

Մի համայնքում գործազրկության բարձր մակարդակը կարող է «շատ դրական» ազդել բնակչության ներգրավվելու հակվածության վրա, քանի որ իրենց հիմնախնդիրը կարող է խթանել մտքերի փոխանակումը և հանձնառությունը հասարակական կյանքում: Մեկ այլ համայնքում նույն խնդիրը կարող է խոչընդոտել մասնակցությունը, քանի որ աշխատանքը կորցրած մարդիկ կարող են կորցրած լինել նաև վստահությունը հանրային ջանքերի հանդեպ: Երկրորդ համայնքը ներկայացնող տեղական իշխանությունը կարող է, հետևաբար, համարել, որ գործազրկության մակարդակը «բացասաբար» կամ նույնիսկ «ծայրաստիճան բացասաբար» է ազդում մասնակցության վրա, որը տոկոսային արտահայտությամբ կարող է հավասար լինել նկարագրված առաջին համայնքի ցուցանիշին:

	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
9	Համայնքում առկա՝ մեկ շնչին ընկնող միջին եկամուտը					
10	Գործազրկության մակարդակ					
11	Երիտասարդների գործազրկության մակարդակ (= կամ մինչև 30 տարեկան)					
12	Իգական սեռի աշխատունակ բնակչություն					
13	Հնարավոր տնտեսական դժվարության մեջ տնային տնտեսություններ					
14	Բացարձակ աղքատության մեջ տնային տնտեսություններ					
15	Ինքնազբաղ կին աշխատողներ					
16	Մինչև 30 տարեկան ինքնազբաղ աշխատողներ					

Աղյուսակ 2. «Համայնքի գնահատման» աղյուսակում տնտեսական կապիտալի գնահատման բաժին

3.3.7. Մարդկային կապիտալի ոլորտ

Կարողությունների և հմտությունների բարձր մակարդակը համայնքում կարելի մեկնաբանել որպես մասնակցության հակվածության վրա «դրական» կամ «ծայրաստիճան դրական» ազդող տարր: Մեկ այլ համայնքում այս տարրը կարող է լինել «ոչ վերաբերելի», քանի որ կարողությունների մակարդակը շատ բարձր է եղել երկար ժամանակ՝ առանց որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների ներգրավվելու պատրաստակամության վրա որևէ տեսանելի ազդեցության:

	ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
17	Ավագ դպրոցի վկայական ստացած բնակչություն (25-64)					
18	Դպրոցի ավարտական վկայական ստացած կանայք (25-64)					
19	Վերջին 15 տարվա ընթացքում դպրոցական պարտադիր կրթական ծրագրերում քաղաքացիական կրթության առարկաների առկայություն					
20	Համայնքի բնակիչների արհեստավարժությունը					
21	Թվային տեխնոլոգիաների հմտություններ ունեցող բնակչություն					
22	Կամավորական աշխատանքներում ակտիվորեն ներգրավված բնակչություն					
23	Կյանքի ամբողջ ընթացքում սովորելու հնարավորությունների առկայություն					
24	Կյանքի ամբողջ ընթացքում սովորելու հնարավորությունների մատչելիություն					

Աղյուսակ 3. «Համայնքի գնահատման» աղյուսակում մարդկային կապիտալի գնահատման բաժին

3.3.8. Քաղաքական կապիտալի ոլորտ

Ինչ վերաբերում է քաղաքական ոլորտին, ապա համայնքի քաղաքական կյանքին քաղաքացիների մասնակցության բարձր աստիճանը կարող է լինել որոշումների կայացմանն ուղղակի մասնակցելու բնակչության հակվածության վրա «դրական» կամ «ծայրաստիճան դրական» ազդող գործոն: Մասնակցության նույն բարձր մակարդակը մեկ այլ համայնքում կարող է խոչընդոտել քաղաքացիների ուղղակի ներգրավումը, քանի որ վստահությունը իշխանությունների հանդեպ կարող է այնքան բարձր լինել, որ քաղաքացիները կարող են չզգալ որոշումների կայացմանն ուղղակի մասնակցելու անհրաժեշտությունը:

	ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
25	ՏԻՄ վերջին ընտրություններին քաղաքացիների մասնակցության մակարդակը					
26	Քաղաքական կյանքում ակտիվորեն ներգրավված բնակչություն					
27	Քաղաքական կյանքում ակտիվորեն ներգրավված կանայք					
28	Փոքրամասնությունների՝ քաղաքական կյանքում ներգրավված ներկայացուցիչներ					
29	Ավագանու կին անդամներ					
30	Քաղաքացիների կողմից քաղաքական բանավեճերի/միջոցառումների արժևորումը					
31	Քաղաքականության մշակման տեղական գործընթացում խոցելի խմբի շահերի ներկայացվածությունը					
32	Որոշումների կայացման նախկին մասնակցային գործընթացներում մասնակցության մակարդակը (հանրային քննարկում, լսում, համայնքային ժողով և այլն):					

Աղյուսակ 4. «Համայնքի գնահատման» աղյուսակում քաղաքական կապիտալի գնահատման բաժին

ՏԻՄ-ը լրացնում է «Համայնքի գնահատման» աղյուսակը: Գնահատումն ավարտելուց հետո, գործիքը յուրաքանչյուր ոլորտի (սոցիալական, տնտեսական, մարդկային և քաղաքական) համար հաշվարկում է միավոր 0-ից 1-ի միջակայքում (ուր 0-ն համարժեք է «ծայրաստիճան բացասական»-ի, իսկ 1-ը՝ «ծայրաստիճան դրական»-ի):

Սոցիալական կապիտալ	Տնտեսական կապիտալ
0.5	0.5
Մարդկային կապիտալ	**Քաղաքական կապիտալ**
0.5	0.5

Համայնքի գնահատման միջին միավոր	0.5

Go to Step 2

Գծապատկեր 9. «Համայնքի գնահատման»՝ ըստ ոլորտների միավորների ամփոփիչ աղյուսակ

Դիտարկվող մասնակցության համատեքստի վրա առավել ազդում է ավելի բարձր միավոր ստացած ոլորտը: Գործիքը գրանցում է այս տվյալները և ներառում յուրաքանչյուր ոլորտին տրված կշիռը հաջորդող «Շահակիրների նույնականացման և գնահատման» մեջ, որպեսզի ապահովի դիտարկվող յուրաքանչյուր շահակիրի համար յուրաքանչյուր ոլորտի համատեքստից բխող կարևորության արտացոլումը, իսկ իշխանությունները գործում են այդ համատեքստից ելնելով:

3.4. ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներգրավման հանդեպ համայնքի հակվածության գնահատմանը հաջորդող երկրորդ քայլը ենթադրում է նույնականացված յուրաքանչյուր շահակիրի գնահատում: Այս գործընթացը ենթադրում է 2 փուլ՝

- Շահակիրների նույնականացում և համակարգայնացում տվյալների շտեմարանում.
- Յուրաքանչյուր շահակիրի ներգրավվելու կարողության և պատրաստակամության գնահատում:

3.4.1. Շահակիրների նույնականացում

Այս գործընթացի առաջին փուլը թելադրում է դիտարկվող թեմայի համար համապատասխան շահակիրների նույնականացման անհրաժեշտությունը: Շահակիրները, սովորաբար, պատկանում են հետևյալ դասակարգերին՝

3.4.1.1. Ինստիտուցիոնալ դերակատարներ

- Տեղական (համայնքներ, համայնքային մարմիններ, քաղաքներ, ավաններ, մայրաքաղաքներ և այլն) և տարածքային իշխանություններ (մարզ, նահանգ, շրջան և այլն)՝ որոշումների կայացման տեղական մակարդակին առնչվող գործընթացների համար.
- Համապետական իշխանություններ և համապետական մարմիններ (կառավարության ստորաբաժանումներ, նախարարություններ և այլն)՝ ազգային մակարդակի խորհրդակցություններ պահանջող որոշումների կայացման գործընթացների համար.
- Անդրսահմանային հաստատություններ (Տարածքային համագործակցության եվրոպական խմբավորում (EGTC), Եվրոտարածքներ և այլն)՝ վերազգային մակարդակի ազդեցության որոշումների կայացման գործընթացների համար:

3.4.1.2. Քաղաքացիական հասարակություն

- Երիտասարդական միություններ
- Կանանց միություններ
- Փոքրամասնական խմբերի շահերը ներկայացնող միություններ
- Խոցելի խմբերի շահերը ներկայացնող միություններ
- Կամավորական միություններ
- Իրազեկման բարձրացման ոլորտի կազմակերպություններ
- Սպառողների միություններ
- ՀԿ-ներ
- Արհմիություններ

3.4.1.3. Մասնավոր հատվածի դերակատարներ

- Արևտրաարդյունաբերական կազմակերպություններ (արևտրաարդյունաբերական պալատներ և այլն)
- Մասնագիտական միություններ
- Մասնավոր ներդրողներ (հիմնադրամներ, տրաստներ և այլն)
- Ձեռնարկատերեր

Անհատ քաղաքացիները նշված չեն, քանի որ նրանց նույնականացումն ու քարտեզագրումը դյուրին չէ: Սակայն քաղաքացիները ներկայացված են իրենց ընտրյալ ներկայացուցիչների (ժողովրդավարական ներկայացուցչականության) և ՔՀԿ-ների միջոցով, և պետք է մշտապես տեղեկացված լինեն որոշումների կայացման գործընթացների վերաբե-

ոյալ, որպեսզի կարողանան դրանց մասնակիցը դառնալ, եթե մոտիվացված են:

Շահակիրների քարտեզագրման գործընթացն ակնարկում է բոլոր դերակատարների նույնականացմանը, որոնք տարբեր մակարդակներում (քաղաքական, քաղաքացիական կամ տնտեսական) ներկայացնում են ընդհանուր բնակչության շահերն ու կարիքները: Հետևաբար, շահակիրների նույնականացման ընթացքում չափազանց կարևոր է ապահովել զանազան դասակարգերի հնարավորինս լայն ներկայացվածությունը:

Յուրաքանչյուր դասակարգի համար նույնականացված շահակիրները հաջորդիվ համակարգայնացվում են տվյալների շտեմարանում՝ նշելով նրանց անունը, կոնտակտային անձի անունը, կոնտակտային տվյալները և գործունեության հիմնական ոլորտը (որպես օրինակ ստորև բերված է մանրամասն աղյուսակ).:

Հաստատության /միության/ մասնավոր մարմնի անվանումը, անունը	Գործունեության հիմնական ոլորտներ	Կոնտակտային անձի անունը և դերը	Կոնտակտային անձի հիմնական լիազորությունները	Կոնտակտային տվյալներ (էլ.փոստ -հեռախոս)
Շահակիր 1				
Շահակիր 2				
Շահակիր ...				

Աղյուսակ 5. Շահակիրների տվյալների շտեմարանի համակարգայնացման օրինակ

Ըստ տիպաբանության մանրամասն դասակարգումը հնարավորություն կտա գործողություններ նախաձեռնողներին թիրախել քաղաքացիական մասնակցության ընդլայնումը, իրականացնել շահակիրների նախնական ընտրություն, այսինքն՝ ընդգրկել յուրաքանչյուր նույնականացված դասակարգի և հետաքրքրություն ներկայացնող թեմաների համար հնարավորինս մեծ թվով շահակիրներ:

Ամեն անգամ մասնակցային գործընթաց սկսելուց շահակիրների ներգրավմանը համակարգված մոտեցում ցուցաբերելու համար ներգրավելիք շահակիրների թիվը չպետք է գերազանցի 30 միավորը՝ հաշվի առնելով, որ ընտրված շահակիրները պետք է հանդիսանան շահակիրների ավելի լայն շրջանակի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ: Օրինակ, երբ դիտարկվում են տնտեսվարող սուբյեկտները, ավելի տեղին կլինի որպես առանձին խմբերի ներկայացուցիչներ ներգրավել առևտրաարդյունաբերական պալատներն ու մասնագիտական միավորումները, քան

փորձել ներգարվել այդ միավորումների բոլոր անդամներին, ինչը կարող է առաջացնել որևէ մեկին դուրս թողնելու վտանգ և բոլորի շահերի արդյունավետ ներառումը երաշխավորելու անկարողություն: Բացի այդ, ժողովրդական ներկայացուցչականության սկզբունքը երաշխավորում է, որ, օրինակ, առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցիչն իրավասու է ներկայացնել ոլորտի բոլոր ձեռնարկատերերի շահերն ու կարիքները, մինչդեռ 3 անհատ ձեռնարկատերեր ավելի հավանական է բարձրացնեն միայն իրենց սեփական խնդիրները:

3.4.2. Շահակիրների գնահատում

Հաջորդ քայլը ենթադրում է նույնականացված յուրաքանչյուր շահակիրի գնահատում, որը հիմնվում է որոշումների կայացման գործընթացում նրա հնարավոր ներդրման կարևորության և դիտարկվող թեմայում ներգրավվելու հանդեպ նրա ենթադրյալ հետաքրքրության վրա: Շահակիրի գնահատումը կատարվում է նույնականացված յուրաքանչյուր շահակիրի համար առանձին:

Վերջինիս գնահատման համար ոլորտները նույնն են, ինչ «Համայնքի գնահատման» դեպքում: Փոփոխականները, սակայն, բաժանված են՝

- **Կարևորությանն** առնչվող փոփոխականների
- **Հետաքրքրությանն** առնչվող փոփոխականների:

3.4.2.1. Կարևորության փոփոխականներ

Այս փոփոխականները սահմանում են որքան կարևոր է տեղական իշխանության համար ներգրավել շահակիրին՝ ելնելով վերլուծության այն նույն չորս ոլորտներից, որոնք կիրառվել են համայնքի գնահատման համար: «Համայնքի գնահատման» գործընթացի նմանությամբ, յուրաքանչյուր շահակիրի կարևորությունը գնահատելու ընթացքում գործիքը կիրառող տեղական իշխանությունները պետք է յուրաքանչյուր փոփոխականի համար պարզեն, թե արդյո՞ք դիտարկվող գործընթացի վրա շահակիրը կազդի՝

- Ծայրաստիճան դրական
- Դրական
- Բացասական
- Ծայրաստիճան բացասական

Գործիքի «Շահակիրների նույնականացման և գնահատման» էջի Կարևորության բաժնի ընդհանուր պատկերը

	ՈԼՈՐՏՆԵՐ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական	Միավոր ըստ ոլորտի
	(1) Սոցիալական կապիտալ						
1	Շահակիրի՝ այլ շահակիրներ ներգրավելու կարողությունը						
2	Կոնկրետ խմբի շահակիրի ներկայացուցչականության մակարդակը						
3	Տեղական քաղաքացիական հասարակության գործունեությանը շահակիրի մասնակցության մակարդակը						
4	Փոփխություն սկսելու/դրա վրա ազդելու շահակիրի կարողությունը						
5	Քաղաքացիների կողմից շահակիրի ճանաչման մակարդակը						
	(2) Տնտեսական կապիտալ						
6	Դոնոր հանդիսանալու շահակիրի կարողությունը						
7	Ռեսուրսների բաշխման վրա ազդելու շահակիրի կարողությունը						
8	Առկա արտաքին ռեսուրսների մատչելիությունը դյուրացնելու շահակիրի կարողությունը						
9	Սեփական միջոցներով աջակցություն տրամադրելու շահակիրի կարողությունը (in-kind support)						
10	Շահակիրի ազդեցությունն աշխատաշուկայի վրա						
	(3) Մարդկային կապիտալ						
11	Շահակիրի՝ թեմային առնչվող գիտելիքները/հմտությունները						
12	Շահակիրի իրազեկվածությունը թեմայի վերաբերյալ						

13	Հանրային բանավեճի մասնակցելու շահակիրի կարողությունը						
14	Զանազան միջոցներով հաղորդակցվելու շահակիրի կարողությունը						
15	Հանրային վայրեր մուտք գործելու շահակիրի կարողությունը						
	(4) Մարդկային կապիտալ						
16	Շահակիրի հանդեպ տեղական իշխանության վստահության մակարդակը						
17	Քաղաքական այլ դերակատարներ ներգրավելու շահակիրի կարողությունը						
18	Տեղական իշխանությունների/այլ շահակիրների հետ աշխատելու շահակիրի կարողությունը						
19	Հանրային կարծիքի վրա ազդելու շահակիրի կարողությունը						
20	Շահակիրի քաղաքական իրազեկվածությունը						
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐԸ՝							**0.0**

Ինչպես «Համայնքի գնահատման» դեպքում՝ վերլուծության չորսը ոլորտներն են՝

1. **Սոցիալական կապիտալի ոլորտը**, որն անդրադառնում է ցանցին յուրաքանչյուր շահակիրի կապվածության և դրա վրա ազդեցության մակարդակին (այսինքն՝ որպես հուսալի աղբյուր այլ շահակիրների հետ աշխատելու նրա կարողությունը): Սոցիալական կապիտալը դիտարկում է նաև համայնքում յուրաքանչյուր շահակիրի ճանաչվածության մակարդակը (արդյո՞ք ակնհայտ է, որ կոնկրետ շահակիրը գործում է որոշակի դասակարգի անունից): Այս վերլուծության նպատակներից, ինչպես նաև C.L.E.A.R-ի տրամադրած շրջանակից և Քաղաքացիական մասնակցության ուղեցույցում տեղ գտած մասնակցության 7 սկզբունքներից ելնելով՝ այս ոլորտը ձևավորում են հետևյալ փոփոխականները, որոնք ներկայացված են գործիքի «Շահակիրների նույնականացման և գնահատման» աղյուսակում՝:

	(1) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
1	Շահակիրի՝ այլ շահակիրներ ներգրավելու կարողությունը					
2	Կոնկրետ խմբի շահակիրի ներկայացուցչականության մակարդակը					
3	Տեղական քաղաքացիական հասարակության գործունեությանը շահակիրի մասնակցության մակարդակը					
4	Փոփխություն սկսելու/դրա վրա ազդելու շահակիրի կարողությունը					
5	Քաղաքացիների կողմից շահակիրի ճանաչման մակարդակը					

Աղյուսակ 6. Կարևորության գնահատման աղյուսակում սոցիալական կապիտալի փոփոխականները

Այսպիսով, եթե շահակիրը շատ լավ կապեր ունի ցանցում կամ շատ հուսալի է որոշակի թեմայի շուրջ, դա կարող է գնահատվել որպես տվյալ որոշումների կայացման գործընթացի վրա «ծայրաստիճան դրական» ազդելու կարողություն: Եվ հակառակը՝ շահակիրը քիչ է մասնակցում և երբեք չի ներգրավվել իրազեկման կամ տեղեկատվական միջոցառումներում, ինչը կարող է դիտվել որպես «ոչ վերաբերելի» կոնկրետ այս փոփոխականներին կամ նույնիսկ տվյալ գործընթացի վրա «ծայրաստիճան բացասաբար» ազդելու կարողություն, եթե դիտարկել քաղաքացիների կողմից շահակիրի ճանաչման ցածր մակարդակի տեսանկյունից:

2. **Տնտեսական կապիտալի ոլորտ**, որը կենտրոնանում է շահակիրի՝ գործընթացին տնտեսապես նպաստելու, դոնոր, ռեսուրսները բազմապատկող կամ աշխատաշուկայում դերակատար լինելու կարողության վրա: Այս վերլուծության նպատակներից և C.L.E.A.R-ի տրամադրած շրջանակից ելնելով՝ այս ոլորտը ձևավորում են հետևյալ փոփոխականները, որոնք ներկայացված են գործիքի «Շահակիրների նույնականացման և գնահատման» աղյուսակում՝

	(2) ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
6	Դոնոր հանդիսանալու շահակիրի կարողությունը					
7	Ռեսուրսների բաշխման վրա ազդելու շահակիրի կարողությունը					
8	Առկա արտաքին ռեսուրսների մատչելիությունը դյուրացնելու շահակիրի կարողությունը					
9	Սեփական միջոցներով աջակցություն տրամադրելու շահակիրի կարողությունը (in-kind support)					
10	Շահակիրի ազդեցությունն աշխատաշուկայի վրա					

Աղյուսակ 7. Կարևորության գնահատման աղյուսակում տնտեսական կապիտալի փոփոխականներ

Եթե համարվում է, որ շահակիրը, օրինակ, մեծ ազդեցություն ունի աշխատաշուկայի վրա, ապա դա կարող է լինել դիտարկվող գործընթացի համար «ծայրաստիճան դրական», եթե զբաղվածությունը որոշումների կայացման գործընթացի առանցքային գործոն է: Աշխատաշուկայի վրա ազդելու նույն շահակիրի ունակությունը կարող է համարվել «ոչ վերաբերելի» մեկ այլ վերլուծության մեջ, եթե այն արվում է որոշումների կայացման շրջանակում, որն ընդհանրապես չի անդրադառնում զբաղվածության/գործազրկության խնդիրներին:

3. **Մարդկային կապիտալի ոլորտ**, որը կենտրոնանում է այն հմտությունների և գիտելիքի վրա, որոնք դիտարկվող գործընթացի շրջանակում հետաքրքրություն ներկայացնող կոնկրետ բնագավառում ունեն նույնականացված շահակիրների ներկայացուցիչները: Մարդկային կապիտալի ոլորտը ենթադրում է նաև շահակիրի՝ համայնքի շահերից ելնելով սեփական գիտելիքներով ու հմտություններով արդյունավետ կիսվելու կարողությունը: Այս ոլորտի գնահատումը, հետևաբար, Գործիքում ներառված հետևյալ փոփոխականներից յուրաքանչյուրի գնահատումն է՝

	(3) ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
11	Շահակիրի՝ թեմային առնչվող գիտելիքները/հմտությունները					
12	Շահակիրի իրազեկվածությունը թեմայի վերաբերյալ					
13	Հանրային բանավեճի մասնակցելու շահակիրի կարողությունը					
14	Զանազան միջոցներով հաղորդակցվելու շահակիրի կարողությունը					
15	Հանրային վայրեր մուտք գործելու շահակիրի կարողությունը					

Աղյուսակ 8. Կարևորության գնահատման աղյուսակում մարդկային կապիտալի փոփոխականները

Մի օրինակ գնահատման այս բաժնից. կարող է ստեղծվել այնպիսի վիճակ, երբ շահակիրը, ով կարող է «ծայրաստիճան դրական» ազդել դիտարկվող գործընթացի վրա, եթե խոսքը գնում է թեմայի վերաբերյալ իր իրազեկման/գիտելիքի մասին, կարող է գնահատվել որպես «ծայրաստիճան բացասաբար» հանրային բանավեճին մասնակցելու պատրաստվածության տեսանկյունից: Տվյալ շահակիրի մարդկային կապիտալի ընդհանուր միավորը ձևավորվում է դիտարկվող գործընթացի բոլոր փոփոխականների միավորների հանրագումարից, որոնք կշռվում են տվյալ ոլորտին «Համայնքի գնահատման» մեջ տրված կարևորությունից ելնելով:

4. **Քաղաքական կապիտալի ոլորտը** գնահատում է շահակիրի հանդեպ տեղական իշխանության վստահության մակարդակը, ինչպես նաև դիտարկվող թեմայի շրջանակում քաղաքական դիրքորոշում ունենալու շահակիրների կարողությունը: Ելնելով C.L.E.A.R.-ում սահմանված վստահության սկզբունքից՝ Գործիքում այս ոլորտը կառուցված է հետևյալ փոփոխականներով՝

	(4) ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
16	Շահակիրի հանդեպ տեղական իշխանության վստահության մակարդակը					
17	Քաղաքական այլ դերակատարներ ներգրավելու շահակիրի կարողությունը					
18	Տեղական իշխանությունների/այլ շահակիրների հետ աշխատելու շահակիրի կարողությունը					
19	Հանրային կարծիքի վրա ազդելու շահակիրի կարողությունը					
20	Շահակիրի քաղաքական իրազեկվածությունը					

Աղյուսակ 9. Կարևորության գնահատման աղյուսակում քաղաքական կապիտալի փոփոխականները

Շահակիրի քաղաքական կարևորությունը, սովորաբար, բարձր է առաջնահերթությունների սահմանման կամ որոշումների կայացման ավարտական փուլերում: Գործընթացում, որը պահանջում է ներգրավել լրացուցիչ քաղաքական դերակատարներ՝ փոխհամաձայնության հասնելու համար, այս ներգրավմանն աջակցելու շահակիրի կարողությունը գնահատվում է «ծայրաստիճան դրական»: Հետադարձ կապով կարծիքների հավաքագրման և վերանայման փուլում քաղաքական ներգրավվածությունը կարող է շատ կարևոր չլինել, ուստի շահակիրի այս կարողությունը կարող է այս փուլում դիտվել որպես «ոչ վերաբերելի»: Հետևաբար, յուրաքանչյուր շահակիրի գնահատումը կարող է նաև պայմանավորվել ոչ միայն թեմայի հարցում ունեցած կարևորությամբ, այլև գործընթացի կոնկրետ փուլով:.

3.4.2.2. Հետաքրքրության փոփոխականներ

Այս փոփոխականները որոշում են շահակիրի՝ որոշումների կայացման դիտարկվող գործընթացում սեփական կարողություններն արդյունավետ կիրառելու պատրաստակամությունը: Յուրաքանչյուր շահակիրի հնարավոր հետաքրքրությունը գնահատելու ընթացքում գործիքը կիրառող տեղական իշխանությունները պետք է յուրաքանչյուր փոփոխակա-

նի համար պարզեն, թե արդյոք շահակիրը կունենա ներգրավվելու ցանկություն և այդպիսով կազդի դիտարկվող գործընթացի վրա՝

- Ծայրաստիճան դրական
- Դրական
- Բացասական
- Ծայրաստիճան բացասական

Գործիքի «Շահակիրների նույնականացման և գնահատման» էջի Հետաքրքրության բաժնի ընդհանուր պատկերը

	ՈԼՈՐՏՆԵՐ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական	Միավոր ըստ ոլորտի
	(1) Սոցիալական կապիտալ						
1	Դիտարկվող թեմայի շուրջ համատեղ աշխատելու շահակիրի հետաքրքրությունը						
2	Դիտարկվող թեմայում որոշակի խումբ ներկայացնելու շահակիրի հետաքրքրությունը						
3	Դիտարկվող թեմայի շուրջ քաղաքացիական հասարակության գործունեությանը հետագայում մասնակցելու շահակիրի հետաքրքրությունը						
4	Փոփոխություն սկսելու/դրա վրա ազդելու շահակիրի հետաքրքրությունը						
5	Սեփական ճանաչումը քաղաքացիների շրջանում մեծացնելու շահակիրի հետաքրքրությունը						
	(2) Տնտեսական կապիտալ						
6	Շահակիրի հնարավոր տնտեսական օգուտը						
7	Ռեսուրսներ մոբիլիզացնելու շահակիրի պատրաստակամությունը						
8	Առկա արտաքին ռեսուրսների մատչելիությանը նպաստելու շահակիրի պատրաստակամությունը						

9	Սեփական միջոցներով աջակցություն տրամադրելու շահակիրի հակվածությունը (in-kind support)						
10	Աշխատաշուկայում սեփական ազդեցությունը մեծացնելու շահակիրի հետաքրքրությունը						
	(3) Մարդկային կապիտալ						
11	Թեմայի վերաբերյալ սեփական գիտելիքները/հմտությունները կիսելու/խորացնելու շահակիրի հետաքրքրությունը						
12	Թեմայի վերաբերյալ իրազեկվածությունը կիսելու/խորացնելու շահակիրի պատրաստակամությունը						
13	Հանրային բանավեճի մասնակցելու շահակիրի պատրաստակամությունը						
14	Զանազան միջոցներով հաղորդակցվելու շահակիրի պատրաստակամությունը						
15	Հանրային վայրեր մուտք գործելու շահակիրի պատրաստակամությունը						
	(4) Մարդկային կապիտալ						
16	Տեղական իշխանությունների հանդեպ շահակիրի վստահությունը						
17	Թեմայի հանդեպ շահակիրի քաղաքական հետաքրքրությունը						
18	Տեղական իշխանությունների հետ աշխատելու շահակիրի պատրաստակամությունը						
19	Հանրության ավելի լայն շրջանակների հասնելու շահակիրի հետաքրքրությունը						
20	Սեփական քաղաքական իրազեկվածությամբ կիսվելու/այն խորացնելու շահակիրի պատրաստակամությունը						
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐԸ՝							**0.0**

Վերլուծության չորս ոլորտները կրկնում են «Կարևորության» գնահատման համար նույնականացված ոլորտները: Կարևորության որևէ ոլորտի բարձր միավորը դեռևս չի ենթադրում, որ Հետաքրքրության նույն ոլորտը պետք է նույնպես գնահատվի բարձր: Այս դեպքում, ինչպես նկարագրվում է «Մասնակցության խթանման ռազմավարություններ»

4.2 բաժնում, կարևոր կլինի հաստատել Հետաքրքրությունն ամրապնդող միջոցառումներ: Այն բնագավառներում, ուր Հետաքրքրությունը կարող է բարձր համարվել, իսկ կարողությունների/ունակությունների մակարդակը (այսինքն՝ Կարևորությունը) գնահատվել է ցածր, կարիք կլինի իրականացնել կարողությունների զարգացման ռազմավարություններ՝ խիստ հետաքրքրված շահակիրների ներգրավումն ապահովելու համար, որպեսզի չառաջանա հուսախաբություն և խորացվի փոխադարձ վստահության մակարդակը:

Հետաքրքրության համար սահմանված և ըստ ոլորտների բաշխված փոփոխականներն են՝

1. **Սոցիալական կապիտալի ոլորտը**, «Կարևորության» համար սահմանված փոփոխականներով, գնահատում է շահակիրի՝ ընթացիկ գործընթացում ներգրավվելու համար սեփական կարողություններն օգտագործելու հնարավոր պատրաստակամությունը: Գործիքում սահմանված փոփոխականներն են՝

	(1) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
1	Դիտարկվող թեմայի շուրջ համատեղ աշխատելու շահակիրի հետաքրքրությունը					
2	Դիտարկվող թեմայում որոշակի խումբ ներկայացնելու շահակիրի հետաքրքրությունը					
3	Դիտարկվող թեմայի շուրջ քաղաքացիական հասարակության գործունեությանը հետագայում մասնակցելու շահակիրի հետաքրքրությունը					
4	Փոփոխություն սկսելու/դրա վրա ազդելու շահակիրի հետաքրքրությունը					
5	Սեփական ճանաչումը քաղաքացիների շրջանում մեծացնելու շահակիրի հետաքրքրությունը					

Աղյուսակ 10. Հետաքրքրության գնահատման աղյուսակում սոցիալական կապիտալի փոփոխականներ

2. **Տնտեսական կապիտալի ոլորտը** գնահատում է ընթացիկ գործընթացին մասնակցելու յուրաքանչյուր շահակիրի հնարավոր հետաքրքրությունը: Նույնիսկ փոքր տնտեսական ուժ ունեցող շահակիրները կարող են մասնակցության մեծ հետաքրքրություն ունենալ, որպեսզի, օրինակ, ընդլայնեն իրենց ազդեցությունն աշխատաշուկայի վրա: Այս տեսանկյունից տեղական իշխանության գնահատումը պետք է բխի ենթադրյալ օգուտներից, որոնք շահակիրը կարող է ստանալ ներառման միջոցով՝ ելնելով տվյալ դասակարգի շահակիրի կարիքների/խնդիրների իմացությունից: Տնտեսական ոլորտի փոփոխականներն են՝

	(2) ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
6	Շահակիրի հնարավոր տնտեսական օգուտը					
7	Ռեսուրսներ մոբիլիզացնելու շահակիրի պատրաստակամությունը					
8	Առկա արտաքին ռեսուրսների մատչելիությանը նպաստելու շահակիրի պատրաստակամությունը					
9	Սեփական միջոցներով աջակցություն տրամադրելու շահակիրի հակվածությունը (in-kind support)					
10	Աշխատաշուկայում սեփական ազդեցությունը մեծացնելու շահակիրի հետաքրքրությունը					

Աղյուսակ 11. Հետաքրքրության գնահատման աղյուսակում տնտեսական կապիտալի փոփոխականներ

3. **Մարդկային կապիտալի ոլորտը**, տնտեսական ոլորտի նմանությամբ, առնչվում է (բացի գիտելիքը կիսելու շահակիրի պատրաստակամությունից) հմտություններ/գիտելիք ձեռք բերելու օգուտին, որը տվյալ շահակիրը կարող է քաղել մասնակցելով գործընթացին: Սրա ընկալումը կարող է օգտակար լինել ծայրաստիճան կարևոր շահակիրների մասնակցության պատրաստակամությունը խրախու-

սելու համար հնարավոր վերաբերելի խթանները նույնականացնելու համար:

	(3) ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ	Ծայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ծայրաստիճան դրական
11	Թեմայի վերաբերյալ սեփական գիտելիքները/հմտությունները կիսելու/խորացնելու շահակիրի հետաքրքրությունը					
12	Թեմայի վերաբերյալ իրազեկվածությունը կիսելու/խորացնելու շահակիրի պատրաստակամությունը					
13	Հանրային բանավեճի մասնակցելու շահակիրի պատրաստակամությունը					
14	Զանազան միջոցներով հաղորդակցվելու շահակիրի պատրաստակամությունը					
15	Հանրային վայրեր մուտք գործելու շահակիրի պատրաստակամությունը					

Աղյուսակ 12. Հետաքրքրության գնահատման աղյուսակում մարդկային կապիտալի փոփոխականներ

4. **Քաղաքական կապիտալի ոլորտը** գնահատում է տեղական իշխանության հանդեպ շահակիրի ունեցած վստահությունը: Այն նաև փոխկապակցված է շահակիրների՝ սեփական կապերն ու գիտելիքը կիսելու պատրաստակամության կամ սեփական քաղաքական իրազեկվածությունն ու ընկալումը խորացնելու հնարավորության հետ: Այս դեպքում պատրաստակամությունը բխում է վստահության մակարդակից: Եթե վստահությունը ցածր է, ապա քաղաքական մակարդակում շահակիրներ ներգրավման համար անհրաժեշտ է խթանների հզոր համակարգ:

	(4) ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Ցայրաստիճան բացասական	Բացասական	Վերաբերելի չէ	Դրական	Ցայրաստիճան դրական
16	Տեղական իշխանությունների հանդեպ շահակիրի վստահությունը					
17	Թեմայի հանդեպ շահակիրի քաղաքական հետաքրքրությունը					
18	Տեղական իշխանությունների հետ աշխատելու շահակիրի պատրաստակամությունը					
19	Հանրության ավելի լայն շրջանակների հասնելու շահակիրի հետաքրքրությունը					
20	Սեփական քաղաքական իրազեկվածությամբ կիսվելու/այն խորացնելու շահակիրի պատրաստակամությունը					

Աղյուսակ 13. Հետաքրքրության գնահատման աղյուսակում քաղաքական կապիտալի փոփոխականներ

Երբ ընտրված տեղական իշխանությունը (որպես որոշումների կայացման մասնակցային գործընթացը նախաձեռնող), ելնելով սեփական գիտելիքից և ընկալումից, ավարտում է յուրաքանչյուր փոփոխականի դիմաց շահակիրի գնահատումը՝ ոլորտների ընդհանուր միավորները ինքնաբերաբար կշռվում են, որպեսզի արտացոլեն «Համայնքի գնահատման» մեջ որպես առավել կարևոր նույնականացված ոլորտի կարևորությունը: Այսպիսով, յուրաքանչյուր շահակիր գնահատվում է ոչ միայն սեփական կարողությունների և մասնակցելու պատրաստակամության



հիման վրա, այլև ելնելով այն փաստացի համատեքստից, ուր ակնկալվում է նրա ներգրավումը:

Արդյունքում «Շահակիրի գնահատումը» տալիս է 0-ից 1-ի տիրույթում ընկած 2 գնահատական (մեկը՝ կարևորության, մյուսը՝ հետաքրքրության համար): Գործիքն ավտոմատ տեղադրում է այդ գնահատականները գծապատկերի վրա, որը բաժանված է 4 քառակուսու (տես՝ ստորև բերված գծապատկերը): Յուրաքանչյուր քառակուսի ներկայացնում է շահակիրի հնարավոր ներգրավման տարբեր մակարդակ:



Գծապատկեր 11. Շահակիրների նույնականացման տաքսոնոմիա (դասակարգում)

Գծապատկերը (տաքսոնոմիան) կազմվում է երկու հարթությունների հատումով՝

- Տվյալ թեմայի հանդեպ դերակատարի ենթադրյալ հետաքրքրության աստիճանը (ըստ մասնակցային գործընթացը նախաձեռնող տեղական իշխանության) (x-առանցք, հորիզոնական).
- Տվյալ թեմայի համար շահակիրի ֆունկցիոնալության աստիճանը՝ տեղական իշխանության ընկալմամբ (y-առանցք, ուղղահայաց):

Շարունակելով գծապատկերի ներքևի մասից հորիզոնական ընթերցումը նույնականացվում են հետևյալ չորս տեսակները, և հարաբերական մակարդակները/փոփոխականները՝

Ներգրավման տիպաբանություն	Ներգրավման փոփոխական մակարդակներ
Տեղեկատվություն	↓ *Շահակիրի* ցածր հետաքրքրություն
	↓ Ենթադրվող ցածր կարևորություն
Խորհրդակցություն	↑ *Շահակիրի* մեծ հետաքրքրություն
	↓ Ենթադրվող ցածր կարևորություն
Երկխոսություն	↓ *Շահակիրի* քիչ հետաքրքրություն
	↑ Ենթադրվող բարձր կարևորություն
Գործընկերություն	↑ *Շահակիրի* մեծ հետաքրքրություն
	↑ Ենթադրվող բարձր կարևորություն

Աղյուսակ 14. Շահակիրների մասնակցության տիպաբանություններ և մակարդակներ

«Ինստիտուցիոնալ մասնակցության» կետագիծը, որը գտնվում է չորս քառակուսիների միացման հատվածում, ներկայացնում է պարտադիր մասնակցության մակարդակը և, հետևաբար, առաձգական չէ ենթադրյալ ֆունկցիոնալության պարամետրերի կամ հետաքրքրության աստիճանի համեմատ: Մասնավորապես, այն ներկայացնում է ինստիտուցիոնալ դերակատարների այն տեսակների մասնակցությունը, որոնք պարտադիր ընդգրկվում են որոշումների կայացմանը (օրենքով կամ ինստիտուցիոնալ կառուցվածքից ելնելով)՝ անկախ տվյալ հարցի հանդեպ իրենց հետաքրքրությունից կամ ներդրման աստիճանից, որը նախաձեռնողի կարծիքով նրանք կարող են կատարել:

4. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քանի որ գնահատված շահակիրին գործիքը տեղադրում է գծապատկերի վրա՝ 4 քառակուսիներից մեկում կամ դրանց հատման մասում, կարևոր է հասկանալ մասնակցության յուրաքանչյուր մակարդակի հետևանքները (այսինքն՝ յուրաքանչյուր քառակուսին) և այդ մակարդակում առանձին դասակարգերում ընդգրկված շահակիրների հետ իրականացվելիք համապատասխան գործողությունները, որոնց արդյունքում հնարավոր կլինի իրատեսական մակարդակներում արդյունավետ ապահովել հնարավորինս լայն շրջանակի շահակիրների մասնակցությունը:

4.1. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որոշումների կայացման գործընթացը բաղկացած է վեցը տարբեր փուլերից , դրանք են՝

- Գերակայությունների սահմանում՝ կարիքների գնահատման հիման վրա քննարկվող թեմայի համար ընթացիկ գերակայությունների սահմանում.
- Նախագծի մշակում՝ կատարված կարիքների գնահատման հիման վրա քաղաքականության/ ռազմավարության նախնական տարբերակի մշակում.
- Որոշում՝ քաղաքականության/ռազմավարության որոշիչ փուլ.
- Իրականացում՝ գործողությունների միջոցով որոշումը կյանքի կոչել.
- Մշտադիտարկում՝ հետևել իրականացման փուլի զարգացումներին և թիրախային խմբերի վրա դրա ազդեցություններին.
- Քաղաքականության լրամշակում՝ տվյալ քաղաքականության բարելավման նպատակով մշտադիտարկման ընթացքում հավաքված կարծիքների ինտեգրում:

Յուրաքանչյուր քառակուսում հայտնված շահակիրների ներառումը գործընթացում կարող է նախատեսվել որոշումների կայացման բոլոր փուլերի համար: Բնականաբար, յուրաքանչյուր քառակուսու դեպքում շահակիրների մասնակցությունն ապահովելու համար կիրառվող ռազմավարությունները և գործողությունները տարբեր են: Տվյալ բաժինը պարզաբանում է քառակասու նպատակները որոշումների կայացման գործընթացի յուրաքանչյուր փուլում: Ավելին, յուրաքանչյուր քառակուսու շահակիրների արդյունավետ ներառումն ապահովելու համար առաջարկվում են իրականացման ռազմավարություններ և հնարավոր մեթոդաբանություններ:

4.1.1. Քառակուսի 1. Տեղեկատվություն

Այս քառակուսուն պատկանող շահակիրները բնութագրվում են քննարկվող թեմայի հանդեպ ենթադրվող քիչ հետաքրքրությամբ և դրա համար ցածր կարևորությամբ: Այդուհանդերձ, չափազանց կարևոր է, որ որոշումների կայացման գործընթացում ներգրավված բոլոր կողմերին մշտապես տրամադրվի տեղեկատվություն, ինչը համահունչ է Քաղաքացիական մասնակցության ԵԽ-ի 2016թ ուղեցույցների ազնվության և թափանցիկության սկզբունքին: Որոշումների կայացման բոլոր փուլերում կարևոր ամբողջ տեղեկատվությունը պետք է ներկայացվի հստակ ու դյուրըմբռնելի լեզվով, պատշաճ ու մատչելի ձևաչափով (առցանց և անցանց)՝ առանց անհարկի վարչական խոչընդոտների և, տեսականորեն, անվճար՝ բաց տեղեկատվության սկզբունքների համաձայն: Սա վերաբերում է թե գնահատումից հետո այս քառակուսում հայտնված կոնկրետ շահակիրներին, թե ընդհանուր բնակչությանը:

Մասնավորապես, որոշումների կայացման տարբեր փուլերում կարևորվում է հետևյալը՝

- Գերակայությունների սահմանման փուլում ապահովել գիտելիքի տարածումը և իրազեկել գերակայությունների սահմանման համար օգտագործվող մեթոդաբանության, ներգրավված դերակատարների և դիտարկվող հիմնական թեմաների մասին.
- Նախագծի մշակման փուլում ապահովել թափանցիկությունը՝ խորհրդակցության համար մատչելի դարձնելով բոլոր կարևոր և հանրային փաստաթղթերը (բացառելով անվտանգության նկատառումներով կոդավորված փաստաթղթերը).
- Որոշման փուլում ապահովել կայացված որոշման վերաբերյալ տեղեկատվության արագ տարածումը.
- Իրականացման փուլում ապահովել կիրառվող բոլոր ընթացակարգերի թափանցիկ կառավարում.
- Մշտադիտարկման փուլում ապահովել կիրառվող ցուցանիշների և չափորոշիչների, ինչպես նաև տեղական իշխանություններին անհրաժեշտ բարելավումների մասին տեղեկացնելու հնարավորությունների թափանցիկությունը.
- Քաղաքականության լրամշակման փուլում ապահովել տեղեկատվության փոխանցումը բոլորին՝ մանրամասնելով ինչպես են ներկայացված կարծիքները և փորձագետների գնահատումները ներառվել քաղաքականության նոր սահմանումների մեջ:

Հանրության առջև բաց և թափանցիկ լինելու պարտավորության տեսանկյունից կարող են լինել մասնակցության տեղեկացվածության մակարդակն արդյունավետ ապահովելու տարբեր եղանակներ:

C.L.E.A.R. գործիքը հստակ սահմանում է, որ քաղաքացիական մասնակցության սկզբունքների համաձայն իրականացված գործողությունները կարող են ընդգրկեն.

- Հանրության համար նիստերը բաց դարձնելը,
- Օրակարգերի, հաշվետվությունների և այլ վերաբերելի նյութերի առցանց հրապարակումը տեղական իշխանության կայքում կամ սոցիալական ցանցերում,
- Գրքույկների և պաստառների պատրաստումը՝ համայնքային հանդիպման վայրերում տարածելու նպատակով, ինչը հնարավորություն կտա հասնել նաև համացանցի սահմանափակ մատչելիությամբ, համացանցի կապ կամ համակարգչային հմտություններ չունեցող քաղաքացիներին.
- Փաստաթղթերի և հանրային միջոցառումների մասին տեղեկատվության պատրաստումը պաշտոնական լեզվով, ինչպես նաև համայնքում առկա ազգային փոքրամասնությունների լեզուներով՝ տեղեկատվությունը հասարակության հնարավորինս լայն շրջանակներին տարածելու համար:

«Շահակիրների նույնականացման և գնահատման» միջոցով «տեղեկատվության» քառակուսում հայտնված առանձին շահակիրների դեպքում կարելի է նախանշել ավելի կոնկրետ տեղեկատվական ռազմավարություններ, ինչպիսիք են՝

- Որոշումների կայացման գործընթացի զարգացումների մասին տեղեկությունների թարմացումներ՝ էլեկտրոնային փոստով կամ փոստային հասցեին ուղարկվող հատուկ տեղեկագրերի միջոցով.
- Հատուկ հրավերներ հանրային ներկայացման միջոցառումներին մասնակցելու համար.
- Քննարկվող թեմայի խնդիրների վերաբերյալ մշակած հատուկ տեղեկատվություն, որը կարող է հատուկ թիրախել շահակիրների առանձնահատուկ շահերը:

4.1.2. Քառակուսի 2. Խորհրդակցություն

Այս քառակուսուն պատկանող շահակիրները բնութագրվում են քննարկվող թեմայի հանդեպ ենթադրվող մեծ հետաքրքրությամբ, բայց թեմայի համար ցածր կարևորությամբ: Խորհրդակցությունների միջոցով շահակիրների ներգրավումը հնարավորություն է տալիս տեղական իշխանություններին հավաքել նրանց կարծիքները որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերում:

Մասնավորապես, որոշումների կայացման տարբեր փուլերում կարևորվում է հետևյալը՝

- Գերակայությունների սահմանման փուլում ներգրավել շահակիրներին կարիքների գնահատմանը՝ կոնկրետ թեմայի վերաբերյալ նրանց գաղափարները և ընկալումները հավաքելու համար.
- Նախագծի մշակման փուլում ապահովել Գերակայությունների սահմանման ընթացքում կատարված կարիքների գնահատման միջոցով շահակիրներից ստացված գաղափարների ընդգրկումը.

- Որոշման փուլում ապահովել կայացված որոշման վերաբերյալ հետադարձ կապի միջոցով շահակիրներից կարծիքների ստացումը և նրանց՝ պատասխանների/ բացատրությունների տրամադրումը.
- Իրականացման փուլում շահակիրներին հնարավորություն տալ վիճարկել իրականացման գործընթացը՝ առարկություններ ներկայացնելու միջոցով, կամ պարզաբանումներ պահանջել հաստատված մեթոդաբանությունների և ընթացակարգերի վերաբերյալ.
- Մշտադիտարկման փուլում հնարավորություն տալ շահակիրներին կարծիք հայտնել իրականացման ընթացքի վերաբերյալ՝ ներկայացնելով գաղափարներ, առաջարկելով փոփոխություններ, մատնանշելով խոչընդոտները.
- Քաղաքականության լրամշակման փուլում ապահովել շահակիրներից ստացված մշտադիտարկման գաղափարների ինտեգրումը վերանայված քաղաքականության մեջ՝ այն բարելավելու նպատակով:

«Խորհրդակցության» ռազմավարության իրական ներդրման համար համապատասխան գործիքներ կարող են ծառայել՝

- Առցանց հարցաշարի տեղադրումը՝ շահակիրների կարիքներն ու կարծիքները հավաքելու համար.
- Համացանցի կապ կամ համակարգչային հմտություններ չունեցող շահակիրներից տվյալներ հավաքելու անցանց հնարավորությունների ստեղծում (օրինակ՝ կարիքների գնահատման հարցաշարի և հետադարձ կապի տպված օրինակների տեղադրում համայնքապետարանում և հանրային հանդիպումների այլ վայրերում).
- Ապահովել համապատասխան շահակիրների իրազեկումը տվյալներ հավաքելու առցանց և անցան գործիքների և հնարավորությունների մասին (էլեկտրոնային փոստով կամ փոստային հասցեին տեղեկագիր ուղարկելով).
- Հատուկ հանդիպումների կազմակերպում շահակիրների հետ՝ տվյալներ/կարծիքներ ուղղակի հավաքելու հնարավորություն ստեղծելու համար:

Տվյալների հավաքագրման հատուկ հանդիպումների համար կիրառվող մեթոդաբանություններից այս բաժնում առաջարկվում են երկուսը՝ մտագրոհը և «համաշխարհային սրճարանը»:

4.1.2.1. Մտագրոհ

Մտագրոհը ստեղծարար խմբային մեթոդ է, որի նպատակն է խրախուսել գաղափարներն ու մտքերը տվյալ թեմայի վերաբերյալ: Այն, սովորաբար, օգտագործվում է մասնակցային գործընթացի սկզբնական փուլերում, ինչը հնարավորություն է տալիս հավաքել տարբեր գաղափարներ ու մտքեր՝ չսահմանափակելով մտքերի շրջանակը:

Մտագրոհը շատ լավ արդյունք է տալիս մինչև 15 մասնակիցներից կազմված խմբի դեպքում: Իսկ 15-ից ավելի մասնակիցների դեպքում խորհուրդ է տրվում բաժանել նրանց ավելի փոքր խմբերի՝ աշխատանքների ավելի սահուն կազմակերպման համար:

Մտագրոհի աշխատանքային մթնոլորտը ոչ ֆորմալ է, ինչը ստեղծարար մտածողության հնարավորություն է տալիս: Ընդարձակ, լուսավոր սենյակն օգնում է հարմարավետ պայմաններ ստեղծել մասնակիցների համար: Խորհուրդ է տրվում հավաքել մասնակիցներին կլոր սեղանի շուրջ (այսինքն՝ ոչ մեկ նստած չէ սեղանի գլխին և բոլորը հավասար մակարդակի վրա են, նաև ֆիզիկապես):

Մասնակիցները կարող են նաև կանգնել (մտագրոհի նիստերը համեմատաբար կարճատև են՝ առավելագույնը 20 րոպե յուրաքանչյուրը) և աշխատել դատարկ պատին փակցված պաստառի շուրջ:

Կազմակերպիչները յուրաքանչյուր մասնակցին պետք է տրամադրեն մի տուփ փոքր կպչուն թղթեր և սև թաղքագրիչ:

Մտագրոհը զարգանում է հետևյալ ընթացակարգային քայլերով.

1. Յուրաքանչյուր աշխատանքային խմբում վարողը խնդրում է մասնակիցներին գրել փոքր կպչուն թղթերի վրա իրենց գաղափարները (դրանք կարող են լինել կարիքներ, ընկալումներ, հիմնահարցեր և այլն) քննարկվող թեմայի վերաբերյալ: Յուրաքանչյուր մասնակից կպչուն թղթի վրա թաղքագրչով (ոչ գրիչով, որպեսզի պաստառին կպցնելուց հետո անմիջապես տեսանելի լինի) լուռ գրում է իր գաղափարը՝ 1 կպչուն թղթի վրա 1 միտք/գաղափար, որպեսզի մեկ թղթի վրա բոլոր մտքերը չխճողվեն: Սա անհատական փուլ է և լուռ աշխատանքը տևում է 5 րոպե:
2. Վարողը խնդրում է բոլոր մասնակիցներին կպցնել իրենց թղթերը պատին կամ առանձին մեծ թղթի վրա: Հաջորդիվ խնդրում է մասնակիցներին լուռ աշխատելով տեղափոխել կպչող թղթերը և ձևավորել փնջեր՝ այսինքն խմբավորել դրանք ըստ թեմաների: Եթե մասնակցի կարծիքով իր կպչող թուղթը պետք է լինի այլ տեղում, քան խմբի մեկ այլ անդամի կողմից ընտրվածը, ապա նա կարող է տեղափոխել թուղթն այնտեղ, որտեղ իրեն թվում է ավելի նպատակահարմար՝ առանց պարզաբանումներ խնդրելու կամ սեփական պատճառները բացատրելու: Այս փուլը տևում է 5 րոպե և ավարտվում է, երբ թղթերի տեղափոխումը դադարում է և պատի կամ պաստառի վրա տեսանելի են ձևավորված փնջերը: Ապա վարողը խնդրում է, որ խումբն աշխատի միասին և յուրաքանչյուր փնջի համար գտնի վերնագիր՝ նույնացնելով թեմատիկ բնագավառները:
3. Երբ խումբն ավարտում է փնջերի անվանակոչումը, վարողը կազմակերպում է բանավեճ, որի նպատակն է սահմանել փնջերի գերակայությունը: Քննարկվող թեմայի շրջանակներում, ո՞րն է ըստ խմբի ամենակարևոր հարցը (փունջը): Այս փուլը տևում է 5-ից 10-ը րոպե և

դրանով ավարտվում է մտագրոհը:

Եթե մասնակիցներն աշխատում են մի քանի խմբերում, խորհուրդ է տրվում կազմակերպել ամփոփիչ լիագումար նիստ, որի ընթացքում յուրաքանչյուր խումբ կարող է տեղեկացնել մյուսներին իր կատարած աշխատանքի և գաղափարների մասին: Վարողը, հաջորդիվ, կարող է հրավիրել մասնակիցներին բանավեճի:

Տեղական իշխանությունները պետք է օգտագործեն այս միջոցով հավաքած գաղափարները և տեղեկությունները որոշումների կայացման գործընթացը տեղեկացված դարձնելու համար, եթե դա գերակայությունների սահմանման փուլն է, կամ պատրաստ լինեն ինտեգրել ստացված արձագանքները, եթե դրանք իրականացման ու քաղաքականության լրամշակման փուլի գործողությունների վերաբերյալ են:

Կարևոր նշում վարողների համար. մտագրոհի իրականացման առաջին երկու քայլերի ընթացքում նշված լռությունն ընթացակարգի հաջողության չափազանց կարևոր տարր է: Լուռ աշխատելով յուրաքանչյուր մասնակից հնարավորություն ունի գրավոր կիսվել սեփական գաղափարով՝ գերակայությունների սահմանման հաջորդող գործընթացում դրա ինտեգրումը տեսնելու համար: Եթե մտագրոհն առաջին իսկ փուլից կազմակերպվում է բաց բանավեճի միջոցով, ապա վտանգը կայանում է նրանում, որ շնորհաշատ և հռետորական կարողությամբ օժտված մասնակիցները կարող են ճնշել ավելի լուռ և ինտրովերտ մասնակիցների ինքնաարտահայտման հնարավորությունը: Քանի որ մտագրոհի նպատակը գաղափարների տարածման հնարավորություն ստեղծելն է, խմբային նման դինամիկան, որը հանգեցնում է առավել էքստրովերտ մասնակիցների գերիշխմանը, անպայման խաթարում է գործընթացը, ինչի արդյունքում ծնվում են շատ քիչ թվով գաղափարներ և սահմանափակվում է այլ տեսակետներ արտահայտելու հնարավորությունը: Հետևաբար, այս գործընթացում առանցքային է վարողի դերը, ով պետք է երաշխավորի գաղափարներ ծնելու և գրելու առանձին, լուռ տարածք ունենալու յուրաքանչյուրի իրավունքը, որպեսզի բոլորն էլ հնարավորություն ունենան արտահայտել իրենց կարծիքը:

4.1.2.2. «Համաշխարհային սրճարան»

«Համաշխարհային սրճարանի» մեթոդի նպատակն է խթանել հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ տարբեր շահակիրների մտքերի ոչ ֆորմալ փոխանակումը՝ ստեղծելով գաղափարների փոխհարստացման հնարավորություն: Այն կարող է կիրառվել մասնակցային գործընթացի սկզբնական փուլում կամ հաջորդել մտագրոհի միջոցով տեղեկություններ հավաքելու առաջին հանդիպմանը:

«Համաշխարհային սրճարանը» շատ արդյունավետ է խոշոր խմբերի դեպքում, երբ մասնակիցների թիվը 15-ից 100: Ներգրավված շահակիրները հավաքվում են «աշխատանքային սեղանների» շուրջ, ուր բանավե-

ճի միաժամանակ հրավիրվում են 5-10 մասնակիցներ:

«Համաշխարհային սրճարանի» աշխատանքային մթնոլորտը ոչ ֆորմալ է, ինչը գրեթե կրկնում է իրական սրճարանի միջավայրը, որտեղ մարդիկ կարող են հանդիպել և հարցեր քննարկել: Ինչպես և մտագրոհի դեպքում՝ խորհուրդ է տրվում օգտագործել ընդարձակ և լուսավոր սենյակ: Սենյակը պետք է կահավորված լինի կլոր սեղաններով, որոնցից յուրաքանչյուրի շուրջ հնարավոր լինի նստեցնել հինգից ութը մասնակից: Ոչ ֆորմալ բանավեճի մթնոլորտը խրախուսելու նպատակով կարելի է բոլորի համար նախատեսել ջուր, սուրճ, թեյ և բաժակներ՝ սեղանի շուրջ աշխատանքի ընթացքում խմելու համար:

Կազմակերպիչները յուրաքանչյուր սեղան պետք է ապահովեն փոքր կպչուն թղթերով և թաղքագրիչներով, ինչպես նաև գրելու համար պաստառներով: Բացի այդ, վարողը պետք է յուրաքանչյուր սեղանի շուրջ վարի բանավեճը:

«Համաշխարհային սրճարանը» զարգանում է հետևյալ ընթացակարգային քայլերով՝

1. Նախապատրաստական փուլում քննարկվող թեմայի վերաբերյալ կազմակերպիչները ձևակերպում են առնվազն 3 ուղղորդիչ հարցեր, որոնց պատասխանները ցանկանում են ստանալ մասնակիցներից: Խորհուրդ է տրվում խնդրել շահակիրներին նշել իրենց կարծիքով թեմային առնչվող խնդիրները, այդ խնդիրներին դիմակայելու համար արդեն իսկ առկա ռեսուրսները և խոչընդոտները հաղթահարելու համար պահանջվող լրացուցիչ միջոցները:
2. «Համաշխարհային սրճարանում» մասնակիցներին խնդրում են նստել սենյակում գտնվող սեղանների շուրջ՝ յուրաքանչյուր սեղանին նստեցնելով 5-ից 10-ը անձ: Յուրաքանչյուր սեղանին մասնակիցներին ողջունում է վարող, ով վարում է բանավեճը: Երբ բոլոր մասնակիցները նստած են (իդեալական տարբերակում յուրաքանչյուր սեղանի շուրջ նստած են շահակիրների տարբեր դասակարգերի ներկայացուցիչները)՝ վարողը ներկայացնում է բանավեճի առաջին հարցը: Բոլոր սեղանները 20 րոպե բանավիճում են նույն հարցի շուրջ: Վարողը գրառումներ է կատարում կպչող թղթի կամ պաստառի վրա՝ խմբի «հիշողությունը» պահպանելու համար:
3. Առաջին նիստի ավարտին բոլոր խմբերը միաժամանակ դադարեցնում են աշխատանքը: Վարողը և մեկական ներկայացուցիչ ամեն խմբից (սեղանի «հիշողության» կրողը) մնում են նստած, իսկ մյուս մասնակիցները տեղափոխվում են այլ սեղանի մոտ:
4. Երբ բոլորը կրկին նստում են՝ սկսվում է երկրորդ 20 րոպեանոց նիստը: Սեղանի «հիշողության» կրողը ներկայացնում է նորեկներին առաջին աշխատանքային հարցի վերաբերյալ սեղանի շուրջ հնչեցված գաղափարները: Հետո վարողը ներկայացնում է աշխատանքային երկրորդ հարցը և խնդրում մասնակիցներին բանավի-

ճել՝ հաշվի առնելով առաջին նիստի ընթացքում տվյալ սեղանի շուրջ արտահայտած գաղափարները:

5. Սեղանների միջև տեղափոխումը կրկնվում է երկրորդ նիստի ավարտին: Սա արվում է աշխատանքային յուրաքանչյուր հարցի դեպքում: Սեղանների միջև տեղափոխությունների քանակը, այսպիսով, հավասար է աշխատանքային հարցերի քանակին:

Վերջում վարողները խնդրում են սեղանների «հիշողության» կրողներին տեղեկացնել բոլոր մասնակիցներին պատմոյթը, որն ուղղորդիչ հարցերին հետևելով ձևավորվել է յուրաքանչյուր սեղանի շուրջ: Վարողը կարող է դրանից հետո բանավեճ կազմակերպել մասնակիցների միջև լիագումար նիստում:

Տեղական իշխանությունները պետք է օգտագործեն այս գործընթացի արդյունքում հավաքած գաղափարները և տեղեկությունները մտագրոհի ընթացքում ծնված գաղափարները լրացուցիչ զարգացնելու և որոշումների կայացման գործընթացը տեղեկացնելու համար՝ ապահովելով շահակիրների գաղափարների ինտեգրումը՝ լինեն դրանք կարիքների (գերակայությունների սահմանման դեպքում) կամ արձագանքների (մշտադիտարկման և քաղաքականության լրամշակման դեպքում) տեսքով:

Կարևոր նշում վարողների համար. «Համաշխարհային սրճարանի» վարողներն ավելի ակտիվ դեր ունեն, քան մտագրոհի վարողները: Իրականում, ձայների հավասարակշռությունը, որը մտագրոհի ժամանակ երաշխավորվում է լռության և կպչող թղթերի վրա գրելու հնարավորության միջոցով, «Համաշխարհային սրճարանում» պետք է ապահովի վարողը: Վարողը պետք է պաշտպանի խմբերի դինամիկան ուժային խաղերից և ապահովի բոլորի ազատ արտահայտվելու հնարավորությունը: Վարողը պետք է լինի ծայրաստիճան կենտրոնացած և պատասխանատու՝ միաժամանակ կատարելով իր աշխատանքը շատ հանգիստ, որպեսզի մասնակիցների համար ստեղծվի հարմարավետ միջավայր: Խորհուրդ է տրվում ընդգրկել արհեստավարժ վարող՝ մասնակցային նման միջոցառման հաջող արդյունքը երաշխավորելու համար:

4.1.3. Քառակուսի 3. Երկխոսություն

Այս քառակուսուն պատկանող շահակիրները բնութագրվում են քննարկվող թեմայի հանդեպ ենթադրվող քիչ հետաքրքրությամբ, բայց թեմայի համար մեծ կարևորությամբ: Երկխոսության միջոցով շահակիրների ներգրավումը հնարավորություն է տալիս տեղական իշխանություններին օգտվել նրանց կարողություններից՝ միաժամանակ ապահովելով մշտական հետադարձ արձագանքը, ինչը բարձրացնում է հետաքրքրության մակարդակը և ներգրավված պահում շահակիրներին: Երկխոսությունը տարբերվում է խորհրդակցությունից, քանի որ ենթադրում է մշտական երկկողմ հաղորդակցություն տեղական իշխանությունների և շահակիրների միջև: Խորհրդակցության քառակուսում ներգրավվելու

պատրաստակամությունը բխում է հիմնականում շահակիրներից և գործընթացի կազմակերպիչները տալիս են նրանց սեփական տեսակետներն արտահայտելու հնարավորություն: Երկխոսության քառակուսում, ընդհակառակը, տեղական իշխանություններն են զգում որոշումների կայացման գործընթացում շահակիրների կարողությունները ու հմտությունները ներառելու կարիքը, հետևաբար ստեղծում են խթաններ և առիթներ շահակիրի հետ մտքերի փոխանակման համար:

Մասնավորապես, որոշումների կայացման տարբեր փուլերում կարևոր է հետևյալը՝

- Գերակայությունների սահմանման փուլում ապահովել շահակիրների՝ տվյալ թեմայի վերաբերյալ գիտելիքից և/կամ դրա վրա ազդեցությունից ելնելով ներգրավումը գերակայությունների սահմանմանը.
- Նախագծի մշակման փուլում ապահովել քաղաքականության/ռազմավարության պատրաստված նախագծային փաստաթղթերի բազմակողմ ուսումնասիրությունը.
- Որոշման փուլում ապահովել կայացված որոշման և իրականացման քայլերի հաստատումը շահակիրների կողմից.
- Իրականացման փուլում ներգրավել շահակիրներին իրականացման միջոցառումներում՝ ելնելով քաղաքացիական հասարակության մեջ և տնտեսական ոլորտում նրանց ունակություններից/դերից.
- Մշտադիտարկման փուլում հայցել շահակիրների արձագանքներն իրականացման գործընթացի և ընթացակարգերի տարբեր փուլերի/մեթոդաբանությունների վերաբերյալ.
- Քաղաքականության լրամշակման փուլում ներգրավել շահակիրներին քաղաքականության վերանայմանը՝ բարելավման ռազմավարությունը սահմանելու ընթացքում հաշվի առնելով բարելավման նրանց առաջարկությունները:

«Երկխոսության» ռազմավարության փաստացի իրականացման համար համապատասխան գործիքներ (բացի Տեղեկատվության և Խորհրդակցության ռազմավարությունների, որոնք նույնպես կարող են կիրառվել) կարող են ծառայել՝

- Համապատասխան շահակիրների հետ հատուկ խորացված հարցազրույցների կազմակերպումը.
- Շահակիրների հետ հանդիպումների կազմակերպումը՝ տեղեկատվության ուղղակի փոխանակման, տեղեկություններ հավաքելու և անհրաժեշտ պարզաբանումներ ներկայացնելու հնարավորություն ստեղծելու համար: Հաջորդ պարբերությունը ներկայացնում է որդեգրելիք մեթոդաբանության մի օրինակ:

4.1.3.1. Ֆոկուս խմբեր

Ֆոկուս խումբը մասնակցային հանդիպման մեթոդաբանություն է, որը հնարավորություն է տալիս խորացված տեղեկություններ հավաքել և բանավեճ կազմակերպել կոնկրետ խնդրի վերաբերյալ: Այն խորհուրդ չի տրվում որոշումների կայացման սկզբնական փուլերում, օրինակ՝ գերակայությունների սահմանման ընթացքում (քանի որ «Համաշխարհային սրճարանի» մեթոդաբանությունն ավելի արդյունավետ է), սակայն կարող է շատ օգտակար լինել քաղաքականության նախագիծը վերանայելու կամ մշտադիտարկումից հետո քաղաքականությունը լրամշակելու համար:

Ֆոկուս խմբի հանդիպումներն արդյունավետ են 10-15 մասնակիցներից կազմված խմբերի համար, ինչը հնարավորություն է տալիս կատարել դիտարկվող թեմայի խորը վերլուծություն: Ֆոկուս խմբի մթնոլորտը խիստ մասնագիտական է:

Մասնակիցների հարմարավետության համար լուսավոր սենյակը կարևոր է: Մասնակիցները նստում են սեղանի շուրջ և քննարկում տվյալ թեման: Կպչող թղթերը, թաղքագրիչները և պաստառը կարող են օգտակար լինել, թեպետ ֆոկուս խմբում ավելի շուտ վարողն է ապահովում քննարկման սահուն ընթացքը՝ նշումներ կատարելով թղթե գրատախտակի (ֆլիպ չարտ) վրա: Դա հնարավորություն է տալիս շահակիրներին կենտրոնանալ քննարկվող թեմայի վրա՝ առանց ստիպված հետևելու սեփական գրառումներին: Այս նպատակով վարողին խորհուրդ է տրվում օգտվել սղագրողի օգնությունից, ով կարող է կազմել հանդիպման արձանագրությունը, որը կլրացնի բանավեճի ընթացքում վարողի կատարած գրառումները:

Ֆոկուս խմբի հանդիպումը կարող է տևել 1 կամ նույնիսկ 2 ժամ, քանի որ ենթադրվում է առաջադրված գաղափարների և առաջարկների ավելի խորը վերլուծություն:

Ֆոկուս խմբի աշխատանքը զարգանում է հետևյալ քայլերով՝

1. Մինչև հանդիպումը կազմակերպիչներին խորհուրդ է տրվում կազմել համապատասխան ուղղորդիչ հարցեր, որոնք առնչվում են քննարկվող թեմայի առանձնահատկություններին, որոնց վերաբերյալ պահանջվում են շահակիրների փորձագիտական գիտելիքն ու տեսակետը.
2. Ֆոկուս խմբի ընթացքում վարողն առաջնորդում է բանավեճը՝ խնդրելով յուրաքանչյուր մասնակցի ներկայանալ և նշել թեմային առնչվող իր դերն ու գիտելիքը.
3. Առաջին ուղղորդիչ հարցը պարզաբանվում է մասնակիցներին, որից հետո սկսվում է թեմայի վերաբերյալ նրանց հմտությունների ու գիտելիքի վրա հիմնված բանավեճ: Ի տարբերություն մտագրոհի կամ «Համաշխարհային սրճարանի»՝ ֆոկուս խմբի ընթացքում շահակիրները հանդես են գալիս իրենց դերից և փաստացի գիտելիքից ելնե-

լով, քանի որ իրենց փոխանակած տեղեկությունները պետք է համեմատվեն առկա ռեսուրսների և իրագործելի հնարավորությունների հետ.

4. Վարողն համոզվում է, որ անդրադարձ է կատարվել ուղղորդիչ բոլոր հարցերին, և ապահովում, որ հանդիպման ընթացքում վերլուծվեն բոլոր թեմաները: Բանավեճը վարելով և բոլորին արտահայտվելու հնարավորություն ընձեռելով, վարողը միաժամանակ գրառումներ է կատարում թղթե գրատախտակին, որպեսզի դրանք մեկնաբանելու համար տեսանելի լինեն բոլորին.
5. Հանդիպման ավարտին վարողն ամփոփում է հավաքված տեղեկությունները բոլորի համաձայնությունը ստանալու համար և փոփոխում է գրառումները շահակիրների արձագանքներից ելնելով, դրանով իսկ երաշխավորելով, որ մասնակիցների մտքերը ճիշտ են հասկացվել:

Կարևոր նշում վարողի համար. վարողից չի ակնկալվում լինել քննարկվող թեմայի փորձագետ, սակայն խորհուրդ է տրվում նյութի իմացության որոշակի մակարդակ ունենալ: Իրականում, ֆոկուս խմբերը խիստ մասնագիտական հանդիպումներ են, ուր մասնակիցների վստահությանն արժանանալու համար կարևոր է հաղորդակցվել բարձր մակարդակի արհեստավարժությամբ՝ ցուցադրելով քննարկվող թեմայի իմացություն:

4.1.4. Քառակուսի 4. Գործընկերություն

Այս քառակուսուն պատկանող շահակիրները բնութագրվում են քննարկվող թեմայի հանդեպ ենթադրվող մեծ հետաքրքրությամբ, ինչպես նաև թեմայի համար կարևորության և դրա իմացության բարձր մակարդակով: Ուստի, կարիք չկա խթանել նրա մասնակցության հետաքրքրություն, սակայն կարևոր է մշակել և ներդնել պատշաճ մասնակցային մեխանիզմներ, որոնց թվում են հատուկ կոմիտեները կամ պլանային կանոնավոր հանդիպումները:

Մասնավորապես, որոշումների կայացման տարբեր փուլերում կարևոր է հետևյալը՝

- Գերակայությունների սահմանման փուլում ներգրավել շահակիրներին գերակայության սահմանման աշխատանքներում՝ տվյալ թեմայի վերաբերյալ գիտելիքից և/կամ դրա վրա ազդեցությունից ելնելով, նաև խնդրել նրանց ներգրավել այլ կարևոր շահակիրների և խորհրդակցել նրանց հետ տեղեկությունների հավաքմանը կիրառելիք մեթոդաբանության վերաբերյալ.
- Նախագծի մշակման փուլում ապահովել նախագծի մշակումը համագործակցային եղանակով: Շահակիրին կարելի է նաև ներգրավել այն մասերի գրավոր մշակման աշխատանքներում, որոնք վերաբերելի են իր իմացությանը.

- Որոշման փուլում ապահովել որոշման կայացումը շահակիրների հետ համատեղ, օրինակ՝ հատուկ մշտական հանձնաժողովի շրջանակներում.
- Իրականացման փուլում ներգրավել շահակիրներին իրականացման միջոցառումներում և մեթոդաբանություններում՝ փոխանցելով նրանց իրականացման փուլի որոշ հատվածների պատասխանատվությունը.
- Մշտադիտարկման փուլում ներգրավել շահակիրներին մշտադիտարկման մեթոդաբանությունը սահմանելու աշխատանքներում և մշտադիտարկման գործողություններում (սա նույնպես կարելի է անել հատուկ աշխատանքային հանձնաժողով ստեղծելու միջոցով).
- Քաղաքականության լրամշակման փուլում համագործակցել շահակիրների հետ քաղաքականության վերանայման ընթացքում:

«Գործընկերության» ռազմավարության փաստացի իրականացման համար համապատասխան գործիքներ (բացի Տեղեկատվության, Խորհրդակցության և Երկխոսության ռազմավարությունների, որոնք նույնպես կարող են կիրառվել) կարող են ծառայել՝

- Նախագծերի մշակման, մշտադիտարկման կամ քաղաքականության լրամշակման հատուկ հանձնաժողովների ստեղծումը, որտեղ իրենց կարողություններից ու հետաքրքրությունից ելնելով կընդգրկվեն համապատասխան շահակիրները.
- Շահակիրների հետ բազմակողմ համագործակցության համաձայնագրերի կնքումը, որտեղ հստակեցվում է դերերի և պարտականությունների բաշխումը որոշումների կայացման գործընթացում.
- Որոշումների կայացման կոնկրետ գործընթացի շրջանակում հատուկ աշխատանքային նիստերի կազմակերպումը, որոնց նպատակն է մշակել մանրամասն գերակայություններ, նպատակներ և ռազմավարություններ: Օրինակ կարող է ծառայել Եվրոպական իրազեկման սցենարի աշխատաժողովը (ԵԻՍԱ, անգլ.՝ EASW), որը ներկայացված է հաջորդ պարբերության մեջ:

4.1.4.1. ԵԻՍԱ. Եվրոպական իրազեկման սցենարի աշխատաժողով

ԵԻՍԱ-ի մեթոդը մշակվել է Եվրոպական հանձնաժողովի Նորարարության ծրագրի շրջանակներում 1994թ որպես փորձնական գործողություն, որի նպատակն էր խթանել մասնակցային գործընթացներն ամբողջ Եվրոպայում: Շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրներին առնչվող նախաձեռնությունների շրջանակներում հաջող իրականացմանը հաջորդիվ (օր.՝ Օրակարգ 21), ԵԻՍԱ-ը հետագայում կիրառվեց տեղական զարգացման խնդիրների ավելի լայն համատեքստում: ԵԻՍԱ-ը ենթադրում է մանրակրկիտ պլանավորման և կազմակերպման պահանջ և լավագույն կերպով հարմարեցված է այն շահակիրներին ներգրավելու

համար, որոնք արդեն իսկ համագործակցում են տեղական իշխանությունների հետ հանձնաժողովի կամ ինստիտուցիոնալացված համաձայնագրի շրջանակներում:

Այն, սովորաբար, իրականացվում է շահակիրների տարբեր դասակարգերի 24-32 մասնակիցներից կազմված խմբերում: Խումբը լրացուցիչ բաժանվում է 6-8 մասնակիցներից կազմված ավելի փոքր խմբերի, որոնք աշխատում են զուգահեռ նիստերով: Այս նպատակով խորհուրդ է տրվում ունենալ մեծ սենյակ լիագումար նիստերի համար, իսկ խմբերի աշխատանքի համար նախատեսել առանձին, ավելի փոքր սենյակներ: Յուրաքանչյուր աշխատանքային սենյակ պետք է ունենա սեղան (նախընտրելի է կլոր) և խմբի աշխատանքի համար կպչող թղթեր, թաղքագրիչներ, թղթե գրատախտակներ: ԵԻՍԱ-ը ենթադրում է մասնագիտացված Ազգային մշտադիտարկողի և զուգահեռ աշխատանքային խմբերի քանակով վարողների ներգրավում:

ԵԻՍԱ-ը տևում է 2 աշխատանքային օր, որոնց ընթացքում մասնակիցներն աշխատում են քննարկվող թեմայի ապագա սցենարների և ռազմավարությունների վրա: Մթնոլորտը պետք է խրախուսի հաղորդակցությունը և բաց երկխոսությունը, հետևաբար օգտակար կարող է լինել համատեղ սուրճի և ճաշի ընդմիջումների կազմակերպումը, ինչը հնարավորություն կտա մասնակիցներին բացի զուտ աշխատանքից նաև ծանոթանալ միմյանց հետ:

ԵԻՍԱ-ը կազմակերպվում է հետևյալ եղանակով՝

1. Մասնակիցները պետք է նախապես տեղեկացվեն աշխատաժողովի կոնկրետ բովանդակության մասին՝ նախապատրաստվելու և պատշաճ տեղեկացված լինելու համար.
2. Առաջին օրը ԵԻՍԱ-ի վարողը ներկայացնում է աշխատաժողովի նպատակները և մեթոդաբանությունները: Նա ներկայացնում է նաև քննարկվող թեմային առնչվող տարբեր հնարավոր ապագա սցենարները.
3. Ապա յուրաքանչյուր աշխատանքային խումբ (6-8 անձ, ըստ շահակիրների դասակարգերի)՝ վարողի հետ տեղափոխվում է հատկացված աշխատանքային սենյակ, որտեղ մշակում է առաջադրված սցենարների հետևանքով առաջացած երևակայական մարտահրավերների ստեղծարար լուծումներ: Աշխատանքի այս հատվածը կոչվում է «տեսլականի ձևավորում» և այն կարող է տևել աշխատանքային ամբողջ առաջին օրը: Աշխատանքային յուրաքանչյուր խումբ վարողի աջակցությամբ կազմակերպում է սցենարների հետևանքների վերաբերյալ մտագրոհ և բանավեճ՝ գրառումներ կատարելով պաստառներին և կպչող թղթերին, կազմում է գրաֆիկներ և այլն.
4. Առաջին օրվա ավարտին բոլոր մասնակիցները հավաքվում են լիագումար նիստերի սենյակում և յուրաքանչյուր խումբ ներկայացնում է օրվա ընթացքում կատարած աշխատանքը: Սկսվում է լիագումար

քննարկումը, որի նպատակն է տարբեր տեսլականների համեմատական վերլուծությունը: Լիագումար քննարկման ավարտին մասնակիցները բացահայտած են լինում իրենց տեսլականների ընդհանուր բաղադրիչները՝ որպես երկրորդ աշխատանքային օրվա սկզբնակետ.

5. Երկրորդ օրը սկսվում է մասնակիցներին զուգահեռ աշխատանքային նիստերում հավաքելով, որտեղ յուրաքանչյուր խումբ աշխատում է նախորդ օրվա ավարտին բացահայտած ընդհանուր տեսլականի վրա (Որո՞նք են այս մարտահրավերների հնարավոր լուծումները: Ի՞նչ ռեսուրսներ կարող են օգտագործվել: Ի՞նչ փոխգործակցություններ են պահանջվում: Ովքե՞ր են ներգրավելիք հիմնական դերակատարները).
6. Ապա բոլոր մասնակիցները հավաքվում են լիագումար նիստերի սենյակում, որտեղ ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը և կրկին բացահայտում բոլոր աշխատանքային խմբերի ընդհանուր բաղադրիչները՝ ընտրելով լավագույն գաղափարները և գործողությունների ամենակարևոր թեմաները.
7. ԵԻՍԱ-ի ազգային մշտադիտարկողը համակարգում է քննարկվող թեմայի վերաբերյալ որոշում կայացնողների համար առաջարկությունների մշակումը և թափանցիկության նկատառումներից ելնելով պատրաստում հաշվետվություն հանդիպման մասին:

Կարևոր նշում վարողների համար. կարևոր է, որ մասնակիցներն իրենց հանգիստ զգան և ունենան բանավեճին արդյունավետ մասնակցելու բոլոր գործիքները: Հետևաբար, հարկ է բոլորին նախապես ուղարկել համարժեք տեղեկատվություն և նյութեր, ինչը հնարավորություն կտա շահակիրներին նախապատրաստվել, իսկ որոշումների կայացման գործընթացը կշահի հիմնավոր բանավեճի և աշխատանքի արդյունքում: Նույն տրամաբանությամբ, կարևոր է, որ հանդիպումից կարճ ժամանակ անց մշակվեն և բոլոր մասնակիցների համատեղ ուսումնասիրությանն ուղարկվեն որոշումների կայացման գործընթացին առնչվող առաջարկությունները, ինչը կերաշխավորի առանցքային բոլոր տարրերի ընդգրկումը:

4.2. Մասնակցության բարելավման ռազմավարություններ

Մասնակցությունը ստատիկ գործընթաց չէ: Այն հարատև զարգանում է, քանի որ տեղական իշխանությունների նպատակը պետք է մշտապես լինի շահակիրների հնարավորինս լայն շրջանակի համար որոշումների կայացման գործընթացին նպաստելու մակարդակը և հնարավորությունները ընդլայնելը: Ստորև բերված գծապատկերը ներկայացնում է մի քառակուսում գտնվող շահակիրների մյուս քառակուսին անցնելու հնարավորությունը, եթե ավելացել է նրանց կարևորության (այսինքն՝ գիտելիքի/փորձագիտության) կամ հետաքրքրության մակարդակը: Այս բաժ-

նում նշվում են մի շարք հնարավոր գործողություններ, որոնք հարկ է իրականացնել, որպեսզի դյուրացվի այս շրջանաձև շարժումը գծապատկերի վրա, որը կապահովի համայնքում քաղաքացիական մասնակցության ավելի բարձր մակարդակ:



Գծապատկեր 12. Շահակիրների մասնակցության մակարդակը բարձրացնելու ռազմավարություններ

4.2.1. Ռազմավարություն 1. Տեղեկատվությունից խորհրդակցության

Ռազմավարությունը նպատակ ունի մեծացնել շահակիրների հետաքրքրությունը տեղական իշխանությունների քաղաքական օրակարգում եղող թեմաների հանդեպ, դրանով իսկ խթանելով շահակիրների մտքերը և արձագանքները որոշումների կայացման բոլոր փուլերում, նույնիսկ եթե դրանց կարևորությունը տեղական իշխանությունների համար մնում է ցածր:

Այս նպատակին ուղղված գործողությունների շարքում են իրազեկման բարձրացումը և հասցեական տեղեկատվության տրամադրումը շահակիրներին, օրինակ՝

Հաղորդակցության պլան

- Հաղորդակցության հատուկ պլանի մշակում, որը բխում է որպես

հնարավոր թիրախային խումբ նույնացված շահակիրների դասակարգերի ճշգրիտ նկարագրից: Այս նկարագիրը կարող է ընդգրկել հատուկ հետաքրքրությունները, առավել հաճախ օգտագործվող կապուղիները և այլն.

- Համակարգված գրաֆիկական ինքնության մշակում քննարկվող թեմայի համար (լոգոտիպ, բրուշյուրների և պրեզենտացիաների համար օրինակելի ձևերի մշակում և այլն).
- Սոցիալական ցանցերում քննարկվող նախաձեռնության/թեմայի էջի ստեղծում (Ֆեյսբուք, Թվիտեր)՝ շահակիրներից/քաղաքացիներից արձագանքներ և կարծիքներ ստանալու համար.
- Ինստիտուցիոնալ կայքում թեմային առնչվող նախաձեռնությունների մասին տեղեկությունների թարմացում.
- Հասցեատերերի հատուկ ցանկի ստեղծում (շահակիրների քարտեզագրումից ելնելով)՝ հետաքրքրության/գործունեության դասակարգից ելնելով շահակիրներին հատուկ տեղեկագրեր ուղարկելու համար.
- Մամլո կանոնավոր ասուլիսների և մամլո հաղորդագրությունների պլանավորում՝ թեմայի վերաբերյալ շահակիրներին և հանրությանն իրազեկելու և տեղեկությունները թարմացնելու համար:

Հատուկ բաց օրերի կազմակերպում

- Թեմայի վերաբերյալ իրազեկումը բարձրացնելու նպատակով բաց օրերի կազմակերպում՝ հավանաբար միջոցառումների ընթացքում, որոնք իրենց հետաքրքրող թեմաների շուրջ արդեն իսկ հավաքում են բազմաթիվ և զանազան շահակիրներ.
- Նախաձեռնություններ դպրոցներում՝ թեմայի մասին իրազեկումը բարձրացնելու նպատակով.
- Հնարավոր հետաքրքրության ոլորտներին առնչվող թեմայի շուրջ բանավեճի հատուկ հրավերներ շահակիրների խմբերի ներկայացուցիչներին:

4.2.2. Ռազմավարություն 2. Խորհրդակցությունից երկխոսության

Շահակիրները, որոնք արդեն հետաքրքրված են որոշակի թեմայով, հաճախ մեծ ցանկություն ունեն ակտիվորեն ներգրավվել և տեսնել իրենց գաղափարների ընդգրկումը որոշումների կայացման գործընթացում: Հետևաբար տեղական իշխանությունների համար կարևոր է կանխել նման ներգրավված շահակիրների հիասթափությունը և նպաստել նրանց կարողությունների ամրապնդմանը, ինչը կզարգացնի նրանց ունակությունները և հնարավորություն կտա լրացուցիչ նպաստել քաղաքականության մշակմանը:

Կարողությունների ամրապնդում և վերապատրաստում

- Մասնակցության մեթոդների և գործիքների վերաբերյալ վերա-

պատրաստման բաց օրերի կազմակերպում, որոնք հասցեագրված են բոլոր հետաքրքրված շահակիրները, ովքեր հայտնել են հանրային կյանքին մասնակցելու իրենց ցանկությունը.

- Թեպետ տեղական իշխանությունների ռեսուրսները կարող են միշտ էլ թույլ տալ անվճար վերապատրաստումներ կազմակերպել շահակիրների համար՝ աջակցություն կարող են տրամադրել «Գործընկերության» մեջ ընդգրկված շահակիրները, ովքեր ցանկանում են տնտեսապես օժանդակել նախաձեռնությանը կամ, ունեցած մեծ կարողությունների շնորհիվ, անցկացնել վերապատրաստումը: Բացի այդ, կարելի է դիմել ԵՄ միջոցներ ստանալու համար (օրինակ՝ Կրթության, աուդիովիզուալ և մշակութային գործադիր գործակալությունը (EACEA) ծրագրերից), քանի որ դրանք աջակցում են ակտիվ քաղաքացիությունը խրախուսող նախաձեռնություններին.
- Բոլոր շահագրգիռ կողմերի (i. ծրագրի/նախաձեռնության խթանողներ, օրինակ՝ ՏԻՄ, ii. «գործընկեր» շահակիրներ (այսինքն՝ Գործընկերության տիպաբանության դասին պատկանող շահակիրներ) և iii. «հետաքրքրված» շահակիրներ (այսինքն՝ Խորհրդակցության տիպաբանության դասին պատկանող շահակիրներ) համար առցանց հարթակի մշակում՝ կարծիքներով կիսվելու և մասնագետների միջև մտքեր փոխանակելու համար, ինչը կխրախուսի հարթակում երկու դասի շահակիրների միջև մասնագիտական շփումները՝ գիտելիքի ու փորձի փոխանակման նպատակով:

4.2.3. Ռազմավարություն 3. Երկխոսությունից գործընկերության

«Որակավորված» շահակիրների հետաքրքրությունը խրախուսելու համար կարևոր է ներգրավել նրանց դեմ առ դեմ երկխոսություններում և ցանցերում՝ որոշումների կայացման գործընթացում նրանց հետագայում որպես գործընկերներ ներգրավելու կարևոր խթանները բացահայտելու համար:

Անհատական ներգրավում

- Համապատասխան շահակիրների հետ դեմ առ դեմ հանդիպումների կազմակերպում՝ թեմայի վերաբերյալ նրանց իրազեկումը բարձրացնելու և գործընթացին հետագայում ներգրավվելու հանդեպ նրանց հնարավոր հետաքրքրությունը պարզելու համար:

Խմբային ներգրավում

- Տարբեր շահակիրների համար ցանցային միջոցառումների (ընթրիքներ, ճաշկերույթներ, իրազեկման բարձրացման միջոցառումներ) կազմակերպում՝ հանդիպելու և քննարկվող թեմայի շուրջ տեսակետներ և գաղափարներ փոխանակելու համար.
- Ցանցային միջոցառումների կազմակերպում, ներգրավելով նաև

«Գործընկերության» շահակիրներին, հանրային կյանքում արդեն իսկ մեծ մասնակցություն ունեցող դերակատարների հետ երկխոսությունը խրախուսելու համար.

- Հետաքրքրություն ներկայացնող յուրաքանչյուր թեմայի համար հատուկ խորհրդատվական խորհուրդների ստեղծում, որոնց հանդիպումներ շատ հաճախակի չեն, որպեսզի չափից ավելի մեծ բեռ չդրվի խորհրդի անդամների վրա, միաժամանակ յուրաքանչյուրին տրվի որոշակի պատասխանատվություն նախագծի վերանայման ընթացքում:

4.2.4. Ռազմավարություն 4. Գործընկերության հզորացում

«Գործընկերության» քառակուսում հայտնված շահակիրները պատրաստ են ներգրավվել: Սակայն շատ կարևոր է պահպանել նրանց ներգրավվածությունը՝ երաշխավորելով նրանց դերերին ու ջանքերին համարժեք աջակցություն:

Հանձնաժողովներ

- Քննարկվող թեմայում ներգրավված մշտական հանձնաժողովների ստեղծում՝ խթանելով համագործակցությունը երկարատև մոտեցման շրջանակներում (այսինքն՝ մշտական հիմքեր, որոնք դուրս են գալիս որոշակի նախաձեռնությունների փորձից օգտվելու շրջանակներից):

Ցանցերի ստեղծում

- Ցանցային միջոցառումների կազմակերպում, որոնք հնարավորություն կտան տարբեր հանձնաժողովների անդամներին հանդիպել, մտքեր փոխանակել և կոնտակտներ ստեղծել և կխթանեն նրանց մասնակցությունը՝ որպես անձնական և մասնագիտական աճի աղբյուր:

Բյուջե

- Եթե հանձնաժողովներում ընդգրկված շահակիրների աշխատանքային և ճանապարհորդության պարտավորությունները շատ են, կարող է պահանջվել հատուկ բյուջե տրամադրել առնվազն նրանց ճանապարհածախսը վճարելու համար, որպեսզի «Գործընկերության» շրջանակից դուրս չմնան այն շահակիրները, ովքեր ֆինանսական անմատչելիության պատճառով չեն կարող մասնակցել բոլոր նիստերին:

5. ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Եվրոպայի խորհուրդ, CM/Rec (2001)19E՝ Տեղական հանրային կյանքին քաղաքացիների մասնակցության վերաբերյալ Նախարարների կոմիտեի հանձնարարականն անդամ պետություններին (06 դեկտեմբերի 2001թ): Հասանելի է՝

https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016804f513c

Եվրոպայի խորհուրդ, CDLR. (2008). C.L.E.A.R. գործիք՝ վերջնական տարբերակ [CDLR (2008)42], Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ: Հասանելի է՝

https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2564749&SecMode=1&DocId=2010906&Usage=2 (last accessed February 2017)

Եվրոպայի խորհուրդ, CDDG (2016) GT-SC(2016)2: Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին՝ չափանիշների և պրակտիկայի ընդհանուր պատկերը Եվրոպայի խորհրդիանդամ պետություններում: Հասանելի է՝ http://rm.coe.int/doc/09000016806fa094

Եվրոպայի խորհուրդ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԻԾ, վերանայված և հաստատված CDDG-ի կողմից 2017թ մայիսի 11-ին՝ Նախարարների կոմիտեի հաստատմանը ներկայացնելու նպատակով:

Դե Ֆաթիմա և Ամանտե (2010), Տեղական դիսկուրսային ռազմավարություններ սահմանի մշակութային կառուցման համար՝ պորտուգալա-իսպանական սահմանի օրինակը: *Սահմանամերձ տարածքների հետազոտությունների ամսագիր*, հատոր 25,No.1/2010.

Դ. Դել Բիանկո և Զ. Զեքսոն (2012), *Անդրսահմանային համագործակցության գործիքակազմ,* Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ:

ISIG. (2014). *ԱՍՀ խոչընդոտների վերացման ձեռնարկ:* Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ:

ISIG. (2015). *Անդրսահմանային կառավարմանը քաղաքացիների մասնակցության եվրոպական փորձ:* Գորիցիա՝ ISIG, Եվրոպայի խորհուրդ: Հասանելի է՝

http://www.coe.int/t/dgap/localdemocracy/news/2015/ISIG-report_en.pdf (վերջին օգտագործումը՝ 2017թ. փետրվարին)

ISIG. (s.d.). *EDEN*. Ներբեռնված է՝ http://cbc.isig.it/

Ձկնաբուծության և ջրային ռեսուրսների նախարարություն (MFAR), Իսլանդիայի միջազգային զարգացման գործակալություն (ICEIDA) և ՄԱԿ-ի համալսարանի «Ձկնաբուծության վերապատրաստման ծրագիր» (UNU-FTP), «Շահակիրները և շահակիրների վերլուծությունը ծրագրի ցիկլի կառավարման շրջանակում»՝ Շրի Լանկայում Ձկնաբուծության և

ջրային ռեսուրսների նախարարություն ենթաբաժինների համար ծրագրի ցիկլի կառավարման վերաբերյալ վերապատրաստման կարճ դասընթաց: Հասանելի է՝

http://www.unuftp.is/static/files/short_courses/pcm_sri_lanka07/D2_L3_Stakeholder_Analysi s.ppt (վերջին օգտագործումը՝ 2017թ հունվարին)

Զ. Շիմասկի և Ս. Վոլֆի (2010), *Մշակութային արտադրություն և սահմանների բանակցում՝ գործի ներկայացում, Սահմանամերձ տարածքների հետազոտությունների ամսագիր*, հատոր 25, No.1/2010.

Շտաֆանիկ (2009), *Անդրսահմանային պահպանություն. Անվտանգություն, քաղաքացիական հասարակություն և անդրսահմանային համագործակցություն, Սահմանամերձ տարածքների հետազոտությունների ամսագիր*, հատոր 24, No.2/2009.

Համաշխարհային Բանկ (2010), հասանելի է՝

http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/EXTSOCIALDEVELOPMENT/EXTPCENG /0,,contentMDK:20509352~menuPK:1278203~pagePK:148956~piPK:216618~theSitePK:4103 06,00.html (վերջին օգտագործումը՝ 2017թ հունվարին)

ՈՒՂԵՑՈՒՅՑ
«Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացմանը» գործիքակազմի կիրառման

Ներածություն

ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների արդյունքում նոր ձևավորված 52 բազմաբնակավայր համայնքներում (թիրախային համայնքներ) Եվրոպայի Խորհրդի «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում փորձարկվեց **«Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացմանը»** գործիքակազմը (այսուհետ՝ Գործիքակազմ), որի կիրառումը հնարավորություն տվեց աջակցել համայնքային իշխանություններին վերանայել տեղական ինքնակառավարման ոլորտում հանրային մասնակցության գործընթացներում կիրառվող գործիքները և նոր մոտեցումներ հանդես բերել հանրային մասնակցության բարելավման համար:

Գործիքակազմը արդյունավետ ներդնելու և փորձարկելու նպատակով նոր ձևավորված 52 համայնքների ներկայացուցիչների համար կազմակերպվեցին երկօրյա սեմինարներ միջազգային և տեղական փորձագետների մասնակցությամբ: Սեմինարների ընթացքում համայնքների ներկայացուցիչներին հանգամանորեն ներկայացվեց Գործիքակազմի էությունը, նրա տրամաբանությունը և լրացման ձևը: Պայմանականորեն ձևավորված փոքր խմբերի շրջանակներում կատարվեց Գործիքակազմի փորձնական կիրառում՝ սեփական նախաձեռնությամբ ընտրված հիմնախնդրի շուրջ շահակիրների և համայնքի գնահատում իրականացնելով:

Ծրագրի հաջորդ փուլում խնդիր դրվեց Գործիքակազմը փորձարկել իրական պայմաններում՝ համայնքներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գործիքակազմի ընդհանուր փիլիսոփայությունը, մոտեցումները և հատկապես կիրառումը նորարար են հայաստանյան իրականության մեջ՝ անհրաժեշտություն առաջացավ լրացուցիչ փորձագիտական աջակցություն ցուցաբերել համայնքներին:

Տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության «ավանդական» մոտեցումները և ձևերը մեծամասամբ ծանոթ են համայնքներին, և դրանց կիրառումը ընթացակարգերի առումով էական խնդիրներ չի առաջացնում: Սակայն Գործիքակազմի կիրառման ընթացքում որոշակի խնդիրներ են առաջանում այն առումով, որ Գործիքակազմի հիմքում դրված մոտեցումներն ու տրամաբանությունը երբեմն հակասության մեջ են մտնում նախկինում կիրառված մեթոդների հետ: Օրինակ՝ եթե նախկինում ցանկացած խնդրի շուրջ հանրային քննարկում էր անցկացվում, որին ձգտում էին մասնակից դարձնել համայնքի յուրաքանչյուր բնակչի, ապա Գործիքակազմը շեշտը դնում է ըստ շահակիրների մասնակցության վրա, մասնավորապես՝ ըստ նրանց կարողությունների

և հետաքրքրությունների:

Նման մոտեցումը բարձրացնում է համայնքում տարբեր խմբերի ներգրավվածությունը հանրային մասնակցության մեջ՝ միաժամանակ ապահովելով նրանց հավասարապես լսված լինելը որոշումների կայացման գործընթացներում:

Մասնավորապես, քիչ չեն դեպքերը, երբ համայնքում ձևավորված են ակտիվ խմբեր, որոնք իրենց ակտիվությամբ չկանխամտածված կերպով ճնշում են այլ հնարավոր շահառուների մասնակցությունը, ինչը հանգեցնում է վերջիններիս կողմից մասնակցության վերաբերյալ բացասական ընկալումների և որոշումների կայացման գործընթացում օտարման:

Նշված և այլ նմանատիպ խնդիրների լուծման, ինչպես նաև հանրային մասնակցությունը որակապես նոր մակարդակի հասցնելու համար Գործիքակազմը օգնության է գալիս համայնքային իշխանություններին: Այն հնարավորություն է տալիս հստակ քայլերի հաջորդականությամբ գնահատել համայնքի համատեքստը, քարտեզագրել բոլոր հնարավոր շահակիր խմբերին, գնահատել նրանց կարողություններն ու պատրաստականությունը աշխատելու կոնկրետ խնդրի շուրջ և բովանդակային նոր իմաստ հաղորդել որոշումների կայացման գործընթացում բնակիչների մասնակցությանը:

Սույն Ուղեցույցը շեշտադրում է Գործիքակազմով նախատեսված գործողությունների տրամաբանական հաջորդականությունը՝ 7 քայլերով, որը հնարավորություն կտա տեղական իշխանություններին առավել արդյունավետ իրականացնել Գործիքակազմի կիրառումը:

Գործիքի նկարագրություն

Տեղական լավ կառավարում իրականացնելու նպատակով քաղաքացիական մասնակցության արդյունավետ մեխանիզմների կիրառումը ենթադրում է, որ շահակիրների ներգրավումը պետք է խթանվի ներառական և թափանցիկ եղանակով: Արդյունավետ մասնակցությունը ենթադրում է նաև, որ բոլոր հանգամանքներում և որոշումների կայացման բոլոր փուլերին մասնակցում են բոլորը: Բոլորի առջև որոշումների կայացման գործընթացները բացելը նշանակում է արձագանքել բոլորին, ներառել յուրաքանչյուր կարծիք և տեսակետ դիտարկվող ռազմավարության կամ քաղաքականության մշակման աշխատանքներում, հարգել փոխադարձ վստահության համաձայնությունը, որը ձեռք է բերվել մասնակցային գործընթացի մեկնարկին: Սա հնարավոր դարձնելու համար (այսինքն՝ շահակիրների տեսանկյունը նոր քաղաքականության/ռազմավարության նախագծում ներառելու հնարավորություն ստեղծելու համար) արդյունավետ մասնակցությունը ենթադրում է ներգրավվող շահակիրների և յուրաքանչյուրի ներգրավման մակարդակի մանրակրկիտ պլանավորում՝ դիտարկվող թեմայի վերաբերյալ որոշումների կայաց-

ման յուրաքանչյուր փուլի համար:

Նախատեսվող մասնակցային գործընթացին նախապատրաստվելու փուլում շահակիրներին արդյունավետ կերպով քարտեզագրելու համար իշխանությունները կարող են օգտվել առաջարկվող գործիքից: Այն ինքնագնահատման գործիք է (քանի որ իշխանությունները կարող են օգտագործել այն՝ հիմնվելով սեփական գիտելիքի և իրենց համայնքի սեփական ընկալման վրա), որը կազմվել է C.L.E.A.R. գործիքում առաջադրված ուղղորդիչ հարցերից, ինչպես նաև հանրային դիսկուրսում հնարավորինս մեծ թվով ձայներ (ինչպես սահմանված է ուղեցույցներում) ներառելու միջոց է:

C.L.E.A.R.-ը Եվրոպայի Խորհուրդի կողմից 2008թ. հրապարակված գործիք է, որի նպատակն էր օգնել պետական իշխանություններին հասկանալ մասնակցության հարցում իրենց համայնքների հակվածությունը և կարողությունը, նաև այդ գործընթացին աջակցելու համար սեփական ռեսուրսները: Վերջինիս վերաբերյալ տեղեկությունները մանրամասն կերպով ներկայացված են «Քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացմանը» գործիքակազմի նկարագրության մեջ:

Գործիքակազմի նպատակն է ՏԻՄ-երին տրամադրել «հանրային գործերի կատարման» շրջանակում կայուն մասնակցության պլանավորման և իրականացման գործիքներ:

Գործիքակազմի խնդիրներն են՝

- Հանուն արդյունավետ և ներգործուն տեղական կառավարման՝ բովանդակայնացնել քաղաքացիական մասնակցության դերը Եվրոպայի Խորհուրդի չափանիշներին համաձայն:
- Օգնել ՏԻՄ-երին հասկանալ իրենց համայնքների ընթացիկ համատեքստը և որոշումների կայացման գործընթացում յուրաքանչյուր շահակիրի իրական ներգրավման ներուժը:
- Ուղղորդել ՏԻՄ-երին որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերում ներգրավման տարբեր մակարդակների համար առանձին ռազմավարությունների և գործողությունների ընտրության հարցում:

Գործիքակազմը կազմված է երկու մասից.

Գործիքակազմի կիրառման հաջորդական քայլերը

Ինչպես նշվեց վերևում՝ Գործիքակազմով նախատեսվում է իրականացնել համայնքի գնահատում, որի նպատակն է պարզել դիտարկվող համայնքի ընդհանուր դիրքորոշումը որոշումների կայացման գործընթացում բնակիչների մասնակցության վերաբերյալ:

Այնուհետ նախատեսվում է իրականացնել համայնքում շահակիրների նույնականացում և տվյալների շտեմարանի ձևավորում, որից հետո անհրաժեշտ է գնահատել յուրաքանչյուր շահակիրի ներգրավվելու կարողությունը և պատրաստակամությունը:

Քայլ 1. Գործիքակազմի կիրառման նախաձեռնումը

Գործիքակազմի կիրառման իրավասությունը, ըստ էության, համայնքի ղեկավարինն է, քանի որ վերջինս է տիրապետում գործիքակազմի կիրառման համար անհրաժեշտ լիազորությունների ողջ ծավալին: Ուստի, համայնքի ղեկավարն է ինքնուրույն նախաձեռնում Գործիքակազմի կիրառումը՝ կապված համայնքի այս կամ այն խնդրի հետ, որոնք կարող են արտացոլված լինել ինչպես համայնքի զարգացման հնգամյա ծրագրում և տարեկան աշխատանքային պլանում, այնպես էլ ծագեն անկանխատեսելիորեն:

Համայնքում Գործիքակազմի կիրառման նախաձեռնություն կարող են հանդես բերել նաև ավագանու անդամները, աշխատակազմը և համայնքում գործող ՔՀԿ-ները: Այս դեպքում, Գործիքակազմի կիրառման կարիքն առաջանալիս վերջիններս դիմում են համայնքի ղեկավարին՝ նշելով կոնկրետ համայնքային խնդիրը:

Գործիքակազմի կիրառման նախաձեռնությունը ինքնին հանրային մասնակցությունը խթանելու արդյունավետ միջոց է, ինչն իր հերթին, հաջող կիրառման դեպքում, հնարավորություն կստեղծի ավելի բարձր մակարդակի հասցնել համայնքում քաղաքացիական մասնակցության նկատմամբ վերաբերմունքը և թույլ կտա արդիական և միջազգայնորեն ընդունված մեթոդներով գնահատել համայնքում մասնակցային կառավարման հարցերը:

Քայլ 2. Աշխատանքային խմբի ձևավորում, դերերի բաշխում

Գործիքակազմի կիրառումը սկսելու համար անհրաժեշտ է ձևավորել աշխատանքային խումբ՝ ըստ այն հիմնախնդրի(ների), որի շուրջ անհրաժեշտ է լինելու իրականացնել հանրային մասնակցության գործընթացները: Խմբի ստեղծման հիմնական նպատակն է ունենալ համայնքի վերաբերող հավաքագրված և վերլուծված հնարավորինս մեծ ծավալի տեղեկություններ, որոնք պետք է օգտագործվեն Գործիքակազմով նախատեսված գնահատումն իրականացնելու համար: Տեղեկությունների հավաքագրման և վերլուծության մանրամասները ներկայացված են հա-

ջորդ քայլում:

Աշխատանքային խմբում անհրաժեշտ է իրականացնել դերերի հստակ բաշխում, այսինքն՝ ով ինչ և ինչպես պետք է կատարի:

Աշխատանքային խմբի անդամները պետք է քաջատեղյակ լինեն համայնքին, նրա հիմնախնդիրներին, բնակիչներին, ձևավորված ֆորմալ և ոչ-ֆորմալ խմբերին, ՔՀԿ-ներին և այլն: Սա կարևորվում է նրանով, որ աշխատանքային խմբի անդամների բարձր տեղեկացվածությունը թույլ կտա նվազեցնել սուբյեկտիվությունը տեղեկությունների հավաքագրման և դրանց վերլուծության ընթացքում: Բարձր տեղեկացվածությունը թույլ կտա նաև տեսնել բոլոր տեսանելի և անտեսանելի կապերը, որոնք կարող են լինել համայնքում առկա խնդիրների և դրանց ազդեցությունը կրող շահառուների կամ դրանց խմբերի միջև:

Խմբի կարող է ստեղծվել համայնքի ղեկավարի բանավոր հանձնարարությամբ: Ցանկության դեպքում համայնքի ղեկավարը կարող է ստորագրել նաև համապատասխան կարգադրություն:

Աշխատանքային խմբի կազմում կարող են ընդգրկվել ավագանու անդամներ, (համաձայնությամբ), համայնքային ծառայողներ, համայնքի աշխատակազմի այլ աշխատակիցներ, ՔՀԿ ներկայացուցիչներ (համաձայնությամբ), այլ շահագրգիռ կողմեր:

Խումբը չպետք է լինի մեծաթիվ (առավելագույնը 4-5 հոգի):

Խմբի աշխատանքների համակարգումը իրականացնում է համայնքի ղեկավարը կամ իր կողմից նշանակված պատասխանատուն:

Խմբի առաջնային գործառույթներն են հանդիսանում՝

- համայնքում մասնակցության գործընթացների նախնական տեղեկությունների հավաքագրումը և վերլուծությունը
- համայնքում շահակիրների քարտեզագրումը
- գնահատող խմբի ձևավորումը
- գնահատման գործընթացի կազմակերպումը, քննարկումների վարումը և ֆասիլիտացիան,
- գնահատման արդյունքների ամփոփումը, արդյունքների և վերլուծությունների ներկայացումը համայնքի ղեկավարին:

Քայլ 3. Համայնքում մասնակցության գործընթացների նախնական տեղեկությունների հավաքագրում և վերլուծություն

Աշխատանքային խմբի ձևավորումից հետո վերջինիս առաջնային խնդիրն է հավաքագրել և վերլուծել համայնքին վերաբերող տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են Գործիքակազմով և դրա տրամաբանությամբ նախատեսված գործողություններ իրականացնելու համար:

Տեղեկությունների հավաքագրման ժամանակ պետք է հնարավորինս պահպանել չեզոքություն արձանագրելով, հավաքագրելով դրանք այնպես, ինչպես կան:

Հատկանշական է, որ գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունների մի մասը ենթադրաբար պետք է արտացոլված լինեն համայնքի զարգացման ծրագրում:

Գործիքակազմում քաղաքացիական մասնակցության մակարդակի գնահատման հարցերը բաժանվում են 4 հիմնական խմբի՝ սոցիալական, տնտեսական, մարդկային և քաղաքական կապիտալի վերաբերյալ, որոնցում տրամաբանորեն համախմբված են միևնույն ոլորտին առնչվող դրույթներ:

Մասնավորապես, ***սոցիալական կապիտալի*** հարցերին պատասխանելու և դրանց ազդեցությունը որոշելու համար անհրաժեշտ է ճշտել.

- վերջին հինգ տարիներին համայնք եկած/համայնքից գնացած բնակիչների մոտավոր թիվը
- տվյալ համայնքի բնակիչների թիվը, որոնք աշխատում են այլ համայնքում (30-60 տարեկան աշխատունակ բնակիչներ) համայնքում փոքրամասնությունների առկայությունը, նրանց մոտավոր թիվը
- համայնքի բնակչության ընդհանուր թիվը, մինչև 30 տարեկան բնակչության մոտավոր թիվը
- բնակիչների որ մասին (%) է հասանելի համացանցը
- համայնքում ՔՀԿ-ների առկայությունը, թիվը, և արդյոք դրանց անդամները հաճախ են փոփոխվում

Տնտեսական կապիտալի ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ կլինեն հետևյալ տվյալները.

- համայնքում մեկ շնչին ընկնող միջին եկամուտը և դրա համեմատությունը հանրապետական միջինի հետ
- համայնքում գործազրկության մակարդակը, այդ թվում՝ երիտասարդության շրջանում
- համայնքում աղքատ և բացարձակ աղքատության պայմաններում ապրող ընտանիքների մոտավոր թիվը
- ինքնազբաղ բնակիչների մոտավոր թիվը

Մարդկային կապիտալի ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ են.

- համայնքում հիմնական դպրոցի առկայությունը (ավարտական ատեստատ), աշակերտների ստացած գիտելիքները,
- դասավանդվել են արդյոք վերջին 15 տարում համայնքի դպրոցներում քաղաքացիական կրթության առարկաներ
- համայնքում թվային տեխնոլոգիաների հմտություն ունեցող բնակիչների առկայությունը
- կամավորների, կամավորական խմբերի առկայությունը
- այնպիսի հաստատությունների առկայությունը, որոնք թույլ են տալիս հմտություններ ստանալ անկախ տարիքից (խմբակներ,

դասընթացներ, մասնագիտացված կուրսեր և այլն):

Քաղաքական կապիտալի ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ կլինեն հետևյալ տվյալները.

- տեղական իշխանությունների վերջին ընտրություններում բնակիչների մասնակցության մակարդակը (տոկոսը)
- ավագանու կազմում կին անդամների առկայությունը
- քաղաքական գործընթացներում համայնքի բնակիչների ակտիվությունը (ցույցեր, հանրահավաքներ, հանդիպումներ քաղաքական գործիչների հետ և այլն)
- տարեկան բյուջեում համայնքում խոցելի խմբերի շահերի ներկայացվածությունը (սոցիալական ծրագրեր, օգնություններ և այլն)
- նախկինում անցկացված համայնքային ժողովների, լսումների, քննարկումների վերաբերյալ տեղեկություններ

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալի վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելը որոշակի աշխատանք է ենթադրում, ուստի գերադասելի կլինի, որպեսզի վերջինս իրականացնեն մարդիկ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են նշված ոլորտներին:

Նշված տեղեկությունները հավաքագրելուց հետո անհրաժեշտ է իրականացնել վերլուծություն, թե ինչպիսի իրավիճակ է համայնքում քաղաքացիների մասնակցության ոլորտում, ինչպիսի փորձառություն ունի համայնքը:

Տեղեկությունները հավաքագրելուց, խմբավորելուց և վերլուծելուց հետո անհրաժեշտ է վեր հանել համայնքում առկա խնդիրները: Վերջիններս պետք է արդեն իսկ արտացոլված լինեն համայնքի զարգացման ծրագրում: Հիմնախնդիրների ցանկը կարելի է վերցնել հենց այդտեղից: Սակայն, եթե դրանք ամբողջությամբ արտացոլված չեն համայնքի զարգացման ծրագրում, կամ թերի են, ապա աշխատանքային խումբը պետք է լրացնի ցանկը և ստանա հիմնախնդիրների ամբողջական պատկեր: Ընդ որում, համայնքի ղեկավարը կարող է այդ հիմնախնդիրները բաժանել երկու խմբի՝ տեսանելի ապագայում լուծելի (իրագործելի) և պակաս իրագործելի:

Ելնելով հիմնախնդիրների դասակարգման արդյունքներից՝ ընտրվում են մեկ կամ մի քանի (ըստ հայեցողության) հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ էլ Քայլ 6-ում պետք է իրականացվի հնարավոր շահակիրների գնահատումը:

Քայլ 4. Շահակիրների քարտեզագրում

Գործիքակազմի հաջող գործարկման համար անհրաժեշտ է քարտեզագրել համայնքում առկա և գործունեություն ծավալող բոլոր հնարավոր շահակիրներին: Ընդ որում՝ որպես շահակիր կարող են հանդես գալ ոչ միայն գրանցված կազմակերպությունները, կառույցները, այլև ոչ

ֆորմալ խմբերը, որոնց միավորում է որևէ կոնկրետ նպատակ/խնդիր, սակայն վերջիններս այդ ուղղությամբ համակարգված գործունեություն չեն իրականացնում:

Համաձայն Գործիքակազմի՝ շահակիրներին պայմանականորեն բաժանում ենք 3 խմբի՝

1. ինստիտուցիոնալ դերակատարներ
2. քաղաքացիական հասարակություն
3. մասնավոր հատված

Որպես ***ինստիտուցիոնալ*** շահակիրներ կարող են հանդես գալ ՝

- տեղական իշխանությունները, միջհամայնքային միավորումները և համայնքային ենթակայության կազմակերպությունները
- տարածքային կառավարման մարմինները և կենտրոնական իշխանությունների տարածքային ներկայացուցչությունները, պետական ոչ առևտրային հիմնարկները, որոնք առնչվում են տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացներին.
- պետական համապատասխան մարմինները (կառավարության ստորաբաժանումներ, նախարարություններ և այլն),
- անդրսահմանային համագործակցություն իրականացնող կառույցներ և այլն

Որպես ***քաղաքացիական հասարակության*** շահակիրներ կարող են դիտարկվել

- երիտասարդական միությունները, կանանց միությունները
- փոքրամասնական խմբերի շահերը ներկայացնող միությունները
- Խոցելի խմբերի շահերը ներկայացնող միությունները
- Կամավորական միությունները
- Իրազեկման բարձրացման ոլորտի կազմակերպությունները
- Սպառողների միությունները
- ՀԿ-ները
- Արհմիությունները,
- մանկապարտեզների, դպրոցների ծնողական խորհուրդները
- այլ կառույցներ
- ԶԼՄները

Մասնավոր հատվածի շահակիրներ են դիտարկվում

- մասնավոր ձեռնարկատերերը, ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպությունները
- Արևտրաարդյունաբերական կազմակերպությունները (արևտրաարդյունաբերական պալատները և այլն)
- Մասնագիտական միությունները
- Մասնավոր ներդրողները (հիմնադրամներ և այլն)

Համայնքում առկա շահակիրների, դրանց խմբերի քարտեզագրումը մեծապես կարևորվում է քաղաքացիական մասնակցության գործընթա-

ցի շրջանակներում: Վերջիններիս մասին լիարժեք տեղեկությունները հնարավորություն են տալիս ոչ միայն նոր մակարդակի հասցնել համայնքում որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցությունը, այլև համագործակցել շահակիրների հետ՝ ի շահ համայնքի:

Միայն շահակիրների ամբողջական ցանկի պայմաններում է հնարավոր հասկանալ համայնքում առկա մարդկային կարողությունների և ռեսուրսների ծավալը: Այս դեպքում է հնարավորություն ստեղծվում արդյունավետ կառավարել դրանք հանուն հանրային շահի, հանուն համայնքի:

Վստահորեն կարելի է պնդել, որ շահակիրների նման ամբողջական ցանկը պիտանի կլինի ոչ միայն քաղաքացիական մասնակցության գործընթացներում, այլև համայնքային կյանքի բազմաթիվ այլ գործընթացների և միջոցառումների շրջանակներում:

Քայլ 5. Գնահատող խմբի ձևավորում

Համայնքի վերաբերյալ նախնական տեղեկատվության հավաքագրման, ելակետային տվյալների ստացման, վերջիններիս վերլուծության և շահակիրների քարտեզագրման գործընթացներից հետո անհրաժեշտ է նախաձեռնել գնահատող խմբի ձևավորումը:

Ինչպես նշվել է Քայլ 2-ում՝ գնահատող խմբի ձևավորումը Աշխատանքային խմբի կողմից իրականացվող գործառույթ է:

Գնահատող խմբի հիմնական գործառույթն է լրացնել համայնքի և շահակիրների գնահատման հարցաթերթերը՝ ըստ ընտրված հիմնախնդրի, հայտնել և փոխանակել կարծիքներ, օժանդակել համայնքային իշխանություններին ընտրել համապատասխան ռազմավարություն այս կամ այն շահակիրի հետ աշխատելու տեսանկյունից:

Որպես գնահատող խումբ, օրինակ, կարող է հանդես գալ համայնքի ղեկավարին կից **խորհրդակցական մարմինը(ները)** (ԽՄ): Եթե վերջինս (կամ մի քանիսը) ձևավորված է, ապա գնահատման ողջ գործընթացը կարելի է կազմակերպել հենց ԽՄ-ի(ների) հենքի վրա: Եթե համայնքում կան ձևավորված մի քանի ԽՄ-ներ, ապա կարելի է ընտրված համայնքային հիմնախնդիրները բաժանել ըստ տվյալ ԽՄ-ների մասնագիտացման:

Սակայն վերոնշյալը չի սահմանափակում համայնքի ղեկավարին կամ այս քայլով նախատեսված գործողությունները համակարգողին աշխատանքներում ներգրավվել այլ մասնակիցների և կազմակերպությունների: Այդ իսկ պատճառով, ցանկալի է հայտարարությամբ հանդես գալ, իրազեկել համայնքին գնահատման աշխատանքների և ձևավորվող գնահատող խմբի վերաբերյալ՝ միաժամանակ ապահովելով հայտարարության հնարավորինս լայն տարածումը (հրավերներ, հայտարարություն, ցուցատախտակներ, տեղական մամուլ, պաշտոնական կայք և այլն):

Գնահատող խումբը ձևավորելիս անհրաժեշտ է հնարավորինս պահ-

պանել համայնքի բնակչության տարբեր շերտերի և խմբերի, ազգային փոքրամասնությունների, խոցելի խմբերի ներգրավվածությունը, ինչպես նաև գենդերային և տարիքային հավասարությունը:

Գնահատող խմբի այն անդամները, որոնք այս կամ այն կերպ կապ ունեն գնահատվող շահակիրի հետ, պետք է ձեռնպահ մնան տվյալ շահակիրին գնահատելու գործընթացից՝ շահերի բախումը կանխելու նպատակով:

Քայլ 6. Հարցաշարերի լրացում և գնահատում

Գնահատող խմբի ձևավորումից հետո անհրաժեշտ է կազմակերպել համայնքին և շահակիրներին վերաբերող հարցաշարերի լրացման և գնահատման գործընթացը:

Գնահատման անմիջական գործընթացի իրականացումը, դրա ձևաչափը որևէ կերպ սահմանափակ չէ: Ստորև, որպես օրինակ, բերվում են գնահատման գործընթացի իրականացման մի քանի եղանակներ:

Մտագրոհ

Մտագրոհը ստեղծարար խմբային մեթոդ է, որի նպատակն է խրախուսել բազմակողմանի, անաչառ և անկախ գնահատականների, կարծիքների հնչեցնումը: Անհրաժեշտ է հիշել, որ հարցաշարերի հարցերի ընկալումը մասնակիցների մոտ կարող է տարբեր լինել, ուստի շատ կարևոր է որևէ կերպ չխոչընդոտել վերջիններիս կողմից իրենց տեսակետների արտահայտմանը: Ինչքան բազմազան լինեն դրանք, այնքան ավելի հեշտ կլինի բազմակողմանիորեն, հետևաբար և՝ օբյեկտիվ, գնահատում իրականացնել:

Մտագրոհը շատ լավ արդյունք է տալիս մինչև 15 մասնակիցներից կազմված խմբերի դեպքում: Իսկ 15-ից ավելի մասնակիցների դեպքում խորհուրդ է տրվում բաժանել նրանց ավելի փոքր խմբերի՝ աշխատանքների ավելի սահուն կազմակերպման համար:

Մտագրոհի աշխատանքային մթնոլորտը ոչ ֆորմալ է, ինչը ստեղծարար մտածողության հնարավորություն է տալիս: Ընդարձակ, լուսավոր սենյակն օգնում է հարմարավետ պայմաններ ստեղծել մասնակիցների համար: Խորհուրդ է տրվում հավաքել մասնակիցներին կլոր սեղանի շուրջ (այսինքն՝ ոչ մեկ նստած չէ սեղանի գլխին և բոլորը հավասար մակարդակի վրա են, նաև ֆիզիկապես):

Կազմակերպիչները յուրաքանչյուր մասնակցին պետք է տրամադրեն առանձին հարցաշար, որը պետք է ինքնուրույն լրացվի մասնակցի կողմից՝ մինչև բուն քննարկումը սկսելը:

Մտագրոհը զարգանում է հետևյալ ընթացակարգային քայլերով.

1. Հարցաշարի ինքնուրույն գնահատում՝ առաջնորդվելով սեփական ընկալումներով՝ առանց խորհրդակցելու այլ մասնակիցների կամ

կազմակերպիչների հետ:

2. Հարցաշարերը գնահատելուց հետո խմբավարը բարձրաձայն սկսում է կարդալ հարցերը: Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ մասնակիցները հնչեցնում են իրենց գնահատականները՝ ներկայացնելով սեփական հիմնավորումները:
3. մասնակիցների կողմից հնչեցված գնահատականները և հիմնավորումները լսելուց հետո խմբավարը/քննարկման կազմակերպիչները տալիս են վերջնական գնահատական տվյալ հարցի վերաբերյալ: Հատկանշական է, որ վերջնական գնահատականը կարող է չհամընկնել քննարկման մեծամասնության կողմից հնչեցված կարծիքի հետ:

Մտագրոհի իրականացման առաջին երկու քայլերի ընթացքում նշված լռությունն ընթացակարգի հաջողության չափազանց կարևոր տարր է: Լուռ աշխատելով յուրաքանչյուր մասնակից հնարավորություն ունի գրավոր կիսվել սեփական գաղափարով: Եթե մտագրոհի առաջին իսկ փուլից կազմակերպվում է բաց բանավեճ, ապա վտանգը կայանում է նրանում, որ շնորհաշատ և հռետորական կարողությամբ օժտված մասնակիցները կարող են ճնշել ավելի լուռ և ինքնամփոփ մասնակիցների ինքնաարտահայտման հնարավորությունը: Խմբային նման դինամիկան, որը հանգեցնում է առավել էքստրովերտ մասնակիցների գերիշխմանը, անպայման խաթարում է գործընթացը, ինչի արդյունքում գնահատականներն ու հիմնավորումները սկսում են միատեսակ լինել և նմանվել միմյանց: Հետևաբար, այս գործընթացում առանցքային է վարողի դերը, ով պետք է երաշխավորի գաղափարներ ծնելու և գրելու առանձին, լուռ տարածք ունենալու յուրաքանչյուրի իրավունքը, որպեսզի բոլորն էլ հնարավորություն ունենան արտահայտելու իրենց կարծիքը:

Ֆոկուս խմբեր

Ֆոկուս խումբը մասնակցային հանդիպման տեսակ է, որը հնարավորություն է տալիս խորացված տեղեկություններ հավաքել և բանավեճ կազմակերպել կոնկրետ խնդրի վերաբերյալ:

Ֆոկուս խմբի հանդիպումներն արդյունավետ են 10-15 մասնակիցներից կազմված խմբերի համար, ինչը հնարավորություն է տալիս կատարել դիտարկվող թեմայի խորը վերլուծություն:

Մասնակիցների հարմարավետության համար լուսավոր սենյակը կարևոր է: Մասնակիցները նստում են սեղանի շուրջ և քննարկում տվյալ թեման: Քննարկման այս մեթոդը հնարավորություն է տալիս մասնակիցներին կենտրոնանալ հարցաշարի գնահատման վրա՝ առանց ստիպված լինելու սեփական եզրահանգումները անել այս կամ այն հարցի վերաբերյալ: Վարողը և/կամ կազմակերպիչները իրենք են որոշակիորեն ուղղորդում տվյալ հարցի մեկնաբանման գործում, ինչը անհամեմատ ավելի հեշտացնում է վերջնական գնահատականի առավել բովանդակային

տարբերակի ընտրությունը: Ըստ էության, ֆոկուս խումբը գնահատականներ է տալիս վարողի ընկալումների, նրան առավել հետաքրքրող մոտեցումների ու գաղափարների վերաբերյալ:

Ֆոկուս խմբի հանդիպումը կարող է տևել 1 կամ նույնիսկ 2 ժամ, քանի որ ենթադրվում է առաջադրված գաղափարների և առաջարկների ավելի խորը վերլուծություն:

Ֆոկուս խմբի աշխատանքը զարգանում է հետևյալ քայլերով՝

1. Մինչև հանդիպումը կազմակերպիչներին խորհուրդ է տրվում կազմել համապատասխան ուղղորդիչ տարբերակներ հարցաշարի հարցերի վերաբերյալ, որոնք առնչվում են տվյալ խնդրի թեմայի առանձնահատկություններին:
2. Հարցաշարում ներառված հարցերը հերթով պարզաբանվում են մասնակիցներին, որից հետո սկսվում է դրանց քննարկումը և ազդեցության գնահատումը: Ի տարբերություն մտագրոհի կամ «Համաշխարհային սրճարանի» (տես ստորև)՝ ֆոկուս խմբի ընթացքում մասնակիցները հանդես են գալիս իրենց դերից և փաստացի գիտելիքից ելնելով:
3. Վարողը հետևում է, որ անդրադարձ կատարվի ուղղորդիչ բոլոր տարբերակներին, և ապահովում, որ հանդիպման ընթացքում վերլուծվեն բոլոր հարցերը: Բանավեճը վարելով և բոլորին արտահայտվելու հնարավորություն ընձեռելով՝ վարողը միաժամանակ գրառումներ է կատարում:
4. Տվյալ հարցի վերաբերյալ վարողն ամփոփում է հավաքված գնահատականները, ստանում է մասնակիցների համաձայնությունը գնահատականի հետ և կատարում է վերջնական գնահատում: այս դեպքում գնահատականը արտահայտում է մեծամասնության կարծիքը և դրա ընթացքում ձևավորված կարծիքների կոնսենսուսը:

Ցանկալի է, որ վարողը, նախքան ֆոկուս խմբի քննարկումը անցկացնելը, հարցերը քննարկի Աշխատանքային խմբի անդամների հետ, փորձի տիրապետել հարցերի տարբեր մեկնաբանություններին: Անհրաժեշտ է նաև, որ վարողը ծանոթ լինի ֆոկուս խմբի մասնակիցներին, որպեսզի կարողանա ինքնուրույն կողմնորոշվել մասնակիցներից յուրաքանչյուրի հնչեցրած կարծիքի հիմնավորվածության հարցում:

Քննարկումների ժամանակ վարողը չպետք է թույլատրի նմանատիպ մտքերի «շրջանաձև»-շարունակական արտահայտումը՝ անհրաժեշտության դեպքում շեղելով մասնակիցներին ուղղորդող հարցերով և բերելով նրանց դեպի առավել կառուցողական քննարկում:

«Համաշխարհային սրճարան»

«Համաշխարհային սրճարանը» շատ արդյունավետ է խոշոր խմբերի դեպքում, երբ գնահատող մասնակիցների թիվը մեծ է (15-ից 100) կամ գնահատումը իրականացվում է մեկից ավելի խորհրդակցական մար-

մինների հետ (տես՝ Քայլ 5)։ Ներգրավված մասնակիցները հավաքվում են «աշխատանքային սեղանների» շուրջ, ուր բանավեճի միաժամանակ հրավիրվում են 5-10 մասնակիցներ։ Ինչպես և մտագրոհի դեպքում՝ խորհուրդ է տրվում օգտագործել ընդարձակ և լուսավոր սենյակ։ Հնարավորության դեպքում սենյակը պետք է կահավորված լինի կլոր սեղաններով, որոնցից յուրաքանչյուրի շուրջ հնարավոր լինի նստեցնել հինգից ութը մասնակից։

«Համաշխարհային սրճարան» մեթոդը վերը նկարագրված 2 մեթոդների յուրահատուկ զուգակցում է։ Քննարկման մասնակիցները խմբավորվում են՝ ըստ իրենց ոլորտների (խորհրդակցական մարմինների ուղղվածության), և յուրաքանչյուր խումբ իրականացնում է գնահատումը ճիշտ նույն ընթացակարգով, ինչ ֆոկուս խմբերի քննարկման դեպքում։

Խմբի ներսում գնահատումը իրականացնելուց հետո, այս անգամ արդեն բոլոր մասնակիցների հետ համատեղ, քննարկվում են խմբերից ստացված արդյունքները և համադրվում են դրանք՝ լսելով յուրաքանչյուր խմբի ներկայացրած տեսակետն ու հիմնավորումը կոնկրետ հարցի և գնահատականի շուրջ։ Խմբի տեսակետը կարող է ներկայացնել ինչպես տվյալ խմբի վարողը, այնպես էլ խմբի անդամներից մեկը։ Գնահատականների նման քննարկումն արդեն իր բնույթով նման է մտագրոհի մեթոդի ընթացակարգին։

«Համաշխարհային սրճարան» մեթոդի առավելությունը տարբեր մասնագիտական ուղղվածություն ունեցող խմբերի գնահատականների համադրությունն է և հնչեցրած գնահատականների տեսակետային տարբերությունների քննարկումը։ Նման քննարկումները և կարծիքների փոխանակումը անփոխարինելի են համայնքային որևէ խնդրի լուծման ուղղությամբ հնարավոր շահակիրների ներգրավումը և նրանց հետաքրքրվածությունը գնահատելու հարցում։ Տարբեր կարծիքների առկայությունը միևնույն շահակիրի վերաբերյալ թույլ է տալիս առավել արդյունավետ ընտրել այն ճանապարհը, որը կբերի տվյալ շահակիրի հետ համագործակցության կայացմանը, ինչի արդյունքում էլ՝ բարձրացված խնդրի լուծման ուղիների որոնմանը։

«Համաշխարհային սրճարանի» վարողներն ավելի ակտիվ դեր պետք է ունենան, քան մտագրոհի և ֆոկուս խմբերի քննարկումների վարողները։ Նրանք պետք է երաշխավորեն բոլորի ազատ արտահայտվելու հնարավորությունը, միաժամանակ կարողանան արագ կողմնորոշվել խմբերից ստացված արդյունքները համատեղ քննարկելու և համադրելու գործընթացում։

Խորհուրդ է տրվում ընդգրկել արհեստավարժ վարող՝ մասնակցային նման միջոցառման հաջող արդյունքը երաշխավորելու համար։

Քայլ 7. Հարցաշարերի վերլուծություն

Գնահատման վերջնական արդյունքները ստանալուց և քննարկումների ընթացքում հնչած առաջարկություններն ու կարծիքները հավաքագրելուց հետո Աշխատանքային խումբը ձեռնամուխ է լինում տվյալների համակարգայնացմանը:

Մասնավորապես, հստակորեն պարզում է դիտարկվող խնդրի (ների) շրջանակներում յուրաքանչյուր շահակիրի գնահատականները և տեղադրությունը գնահատման քառորդներում (տես՝ Գործիքակազմի 3.4 բաժինը):



Ինչպես նշված է Գործիքակազմի 3.4.2.2. կետում՝ շահակիրների ամփոփ գնահատականները տեղադրվում են գնահատման մատրիցայի (Գծապատկեր 2) 4 տիրույթներից որևէ մեկում:

Ըստ Գործիքակազմի՝ գնահատման տիրույթներից յուրաքանչյուրի համար տեղական իշխանությունները ընտրում են համապատասխան ռազմավարություն, որպեսզի առավել արդյունավետ դարձնեն հանրային մասնակցությունը որոշումների կայացմանը և խթանեն շահակիրների մասնակցությունը այդ գործընթացներին:

Գծապատկեր 3-ում ներկայացված է, թե ինչ հնարավոր ռազմավարություններ կարող են ընտրել համայնքային իշխանությունները յուրաքանչյուր դեպքում:



Գծապատկեր 2. Շահակիրների նույնականացման տաքսոնոմիա (դասակարգում)

Տեղեկատվություն

Այս քառակուսուն պատկանող շահակիրները բնութագրվում են քննարկվող հիմնախնդրի հանդեպ ենթադրվող քիչ հետաքրքրությամբ և դրա համար ցածր կարևորությամբ: Այդուհանդերձ, չափազանց կարևոր է, որ որոշումների կայացման գործընթացում ներգրավված բոլոր կողմերին մշտապես տրամադրվի տեղեկատվություն:

Խորհրդակցություն

Այս քառակուսուն պատկանող շահակիրները բնութագրվում են քննարկվող հիմնախնդրի հանդեպ ենթադրվող մեծ հետաքրքրությամբ, բայց թեմայի համար ցածր կարևորությամբ: Խորհրդակցությունների միջոցով շահակիրների ներգրավումը հնարավորություն է տալիս տեղական իշխանություններին հավաքել նրանց կարծիքները որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերում:

Երկխոսություն

Այս քառակուսուն պատկանող շահակիրները բնութագրվում են քննարկվող հիմնախնդրի հանդեպ ենթադրվող քիչ հետաքրքրությամբ, բայց վերջինիս համար մեծ կարևորությամբ: Երկխոսության միջոցով շահակիրների ներգրավումը հնարավորություն է տալիս տեղական իշխանություններին օգտվել նրանց կարողություններից՝ միաժամանակ ապահովելով մշտական հետադարձ արձագանքը, ինչը բարձրացնում է հետաքրքրության մակարդակը և ներգրավված պահում շահակիրներին: Երկխոսությունը տարբերվում է խորհրդակցությունից, քանի որ ենթադրում է մշտական երկկողմ հաղորդակցություն տեղական իշխանությունների և շահակիրների միջև: Խորհրդակցության քառակուսում ներգրավվելու պատրաստակամությունը բխում է հիմնականում շահակիրներից և գործընթացի կազմակերպիչները տալիս են նրանց սեփական տեսակետերն արտահայտելու հնարավորություն: Երկխոսության քառակուսում, ընդհակառակը, տեղական իշխանություններն են զգում որոշումների կայացման գործընթացում շահակիրների կարողությունները ու հմտությունները ներառելու կարիքը, հետևաբար ստեղծում են խթաններ և առիթներ շահակիրի հետ մտքերի փոխանակման համար:

Գործընկերություն

Այս քառակուսուն պատկանող շահակիրները բնութագրվում են քննարկվող թեմայի հանդեպ ենթադրվող մեծ հետաքրքրությամբ, ինչպես նաև թեմայի համար կարևորության և դրա իմացության բարձր մակարդակով: Ուստի, կարիք չկա խթանել նրա մասնակցության հետաքրքրություն, սակայն կարևոր է մշակել և ներդնել պատշաճ մասնակցային մեխանիզմներ, որոնց թվում են հատուկ կոմիտեները կամ պլանային կանոնավոր հանդիպումները:

Գծապատկերի յուրաքանչյուր քառորդի համար ընտրվող ռազմավարությունները, ինչպես նաև մասնակցության բարելավման մոտեցումները մանրամասնորեն ներկայացված են Գործիքակազմի 4-րդ գլխում:

Հիմնվելով բերված ռազմավարությունների հնարավոր տարբերակների վրա՝ աշխատանքային խումբը ընտրում է յուրաքանչյուր շահակիրի հետ աշխատելու առավել նպատակահարմար ռազմավարությունը և ներկայացնում համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը հետագայում միջոցներ է ձեռնարկում յուրաքանչյուր շահակիրի հետ համագործակցելու ընտրված ռազմավարությունը կյանքի կոչելու ուղղությամբ:

Ամփոփում

Հայաստանյան իրականության մեջ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության մակարդակը խոշոր հաշվով բավականին ցածր է, ինչը և՛ հետևանք, և՛ պատճառ է բնակչության կողմից մասնակցության հարցերի ոչ լիարժեք ընկալման:

Տեղական իշխանությունները, ժառանգելով դեռևս խորհրդային տարիներին բնորոշ մասնակցային մեխանիզմները, առաջնորդվում են՝ բոլորին ներգրավել բոլոր հարցերը քննարկելու նպատակով: Իրենց հերթին, այն բնակիչները, որոնք դիտարկվող թեմայի վերաբերյալ չունեն տեղեկացվածություն կամ համապատասխան գիտելիքներ, կորցնում են հետաքրքրությունը մասնակցելու քննարկումների, որտեղ բարձրացնում են իրենց անհետաքրքիր կամ դժվար ըմբռնելի հարցեր:

Հաճախ ստացվում է, որ համայնքներում հանրային քննարկումները կրում են ձևական բնույթ : Արդյունքում տուժում է համայնքում հանրային մասնակցության ողջ տրամաբանությունն ու էությունը, մասնակցության գործընթացը դիտվում է որպես ոչ այնքան կարևոր, ձևական և որոշ դեպքերում՝ օրենքով ուղղակի պարտադրված տեխնիկական գործընթաց:

Սույն ուղեցույցում դիտարկվող Գործիքակազմի տրամաբանությունը էականորեն տարբերվում է մասնակցության ավանդական ընկալումներից՝ թիրախավորված մասնակցություն՝ դրանից համայնքի համար առավել օգուտ քաղելու նպատակով:

Գործիքակազմը հնարավորություն է տալիս համայնքային իշխանություններին նորովի բացահայտել իրենց համայնքում առկա շահակիրներին, քարտեզագրել նրանց. օրինակ՝ համայնքներից ոչ բոլորն էին պատկերացնում, որ դպրոցի կամ մանկապարտեզի ծնողական խորհուրդները կարող են համայնքում մասնակցային գործընթացների կարևոր դերակատար լինել:

Գործիքակազմի կիրառումը համայնքներին հնարավորություն է ընձեռում առավել կառուցողական մոտեցում ցուցաբերել որոշումների կայացման գործընթացում բնակիչների մասնակցությունը ապահովելիս, միևնույն ժամանակ, կատարելով շահակիրների գնահատում կոնկրետ խնդրի շուրջ, ՏԻՄ-երը կարող են արժեքավոր առաջարկություններ ստանալ մասնակիցների առավել կոմպետենտ շրջանակներից:

Շահակիրներին գնահատելու գործընթացի կարևոր առանձնահատկություններից է այն, որ ՏԻՄ-երը պետք է գնահատեն շահակրի ոչ միայն կարողությունը որևէ կոնկրետ հարցի շուրջ մասնակցելու, այլև նրա պատրաստակամությունը իր կարողությունները գործի դնելու: Սա ոչ միայն թույլ է տալիս համայնքային իշխանություններին ճիշտ կողմնորոշվել դիտարկվող հարցի շուրջ շահակիրների ներգրավման գործում, այլև հնարավորություն է ստեղծում հետագայում ձեռնարկել համապատասխան քայլեր՝ տվյալ շահակրի մոտ մասնակցային հետաքրքրությու-

նը բարձրացնելու ուղղությամբ: Վերջինս առանցքային նշանակություն ունի տվյալ շահակիրի հետ հետագա համագործակցությունը կառուցողական մթնոլորտում իրականացնելու առումով:

Եվ վերջապես, ունենալով յուրաքանչյուր շահակիրի գնահատականը, համայնքային իշխանությունները իրենք են ընտրում այն ռազմավարությունը, որի համաձայն պետք է փորձեն համագործակցել՝ առավելագույն օգուտ քաղելով այդ համագործակցությունից :

Սույն ուղեցույցը նպատակ էր հետապնդում հանգամանորեն, բայց միաժամանակ պարզ կերպով ներկայացնել Գործիքակազմի հիմքում դրված գործողությունների և քայլերի հաջորդականությունը և դրանց կիրառման հնարավորությունը համայնքներում:

Կարծում ենք, Գործիքակազմի կիրառումը համայնքային իշխանություններին հնարավորություն կտա էական տարբերություն մտցնել մասնակցային գործընթացներում, ինչն էլ իր հերթին կխթանի բնակիչների հետաքրքրվածության բարձրացմանը և արդյունքում կբերի առավել բովանդակային և արդյունավետ մասնակցություն տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացին:

Եվրոպայի խորհրդի գրասենյակ Երևանում
ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն, 6-րդ հարկ

http://www.coe.am